

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՃԻՆՅԱՆ, ՆԵՐԻՆԵ ՀԵԲԵՔՅԱՆ

# ՄԱՅՐԵԼԻ

4

Ակարիչ՝ Սուսաննա Այվազյան

Երևան



2010

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)  
ԳՄԴ 81.2 3 g72  
Գ 697

Յաստատված է  
ՅՅ Կրթության և գիտության  
նախարարության կողմից

Գյուղինյան Դ., Շեքեքյան Ն.


Գ 697 Մայրենի 4: Յանրակրթական դպրոցի 4-րդ դաս. դասագիրը/  
Նկ.: Ս. Այվազյան.-Եր.: Եղիբ Պրինտ, 2010.-192 էջ:

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)

ԳՄԴ 81.2 3 g72

ISBN 978-9939-52-221-0

© Դ. Գյուղինյան,  
Ն. Շեքեքյան, 2010թ.  
© «Եղիբ Պրինտ», 2010թ.



**ՅՈԹ ՄՐԲՈՒԹՅՈՒՆ**

Հայր դարերով սիրով է պահել  
Յոթ թանկ սրբություն.


Հողը, պատիվը, շինարար ոգին,  
Հավատը, լեզուն:

Սուրբ անուններ են եղել դարերով  
Հայ ընտանիքը,

Եվ ամենից վեհ, ամենից լուս

Մայր հայրենիքը:

*Սուրեն Մուրադյան*





## ԱՅՆ ԸՆԿԵՐԸ 1

### (ըստ Աստվածաշնչի)

Մի անգամ Հիսուսն իր շուրջը հավաքված մարդկանց այսպիսի պատմություն պատմեց:

Մի մարդ ճամփա ելավ: Դա ոլորապտույտ և ամայի ճանապարհ էր, որի երկու կողմերում հսկայական ապառաժներ էին վեր խոյանում: Ճանապարհը նաև վտանգավոր էր, որովհետև քարերի հետևում դարանակալում էին ավազակները:

Մարդը միայնակ էր ճամփորդում, քսակում էլ բավական շատ փող ուներ: Կարող եք կոահել, թե ինչ պատահեց. ավազակները հարձակվեցին նրա վրա, խլեցին քսակը, ծեծեցին նրան. Նովսիսկ գողացան հագուստը և փախան: Ճամփորդը վիրավոր ու արյունաքամ ընկած էր և չէր կարողանում տեղից շարժվել:

- Օգևություն, օգևություն,- կանչում էր նա:

Չանի որ անմարդաբնակ վայր էր, ոչ ոք չլսեց նրան:

Հանկարծ վիրավորը մոտեցող ոտևածայներ լսեց:

- Օգևություն,- կանչեց նա,- խնդրում եմ, օգևեք ինձ:

Այն մարդը, որև իջնում էր ճանապարհով, լավ էր հագնված: Նա նայեց ճանապարհին ընկած խեղճ վիրավորին ու նկատեց արյունը: «Եթե ես մոտենամ և օգնեմ այս խեղճին,- մտածեց նա,- կարող եմ իմ շքեղ հագուստը փչացնել»: Այդ պատճառով էլ ձևացրեց, թե չի տեսել ընկածին, և արագ հեռացավ:

«Ես արյունաքամ կլինեմ», - մտածեց վիրավոր ճամփորդը:



Ըստ հետո կրկին ոտևածայներ լսվեցին: Վիրավոր ճամփորդն ուժերը հավաքեց ու կանչեց.

- Օգնություն, օգնություն:

Անցորդը շտապում էր: Նա, իհարկե, լսեց օգնության կանչող վիրավորի ձայնն ու մի հայացք զցեց նրա վրա, սակայն գլուխն իսկուցն շրջեց: «Եթե օգնեմ այս մարդուն, կուշանամ: Ձևացնեմ, իբր չլսեցի», - որոշեց նա ու քայլերև արագացնելով՝ շարունակեց ճանապարհը:

«Հիմա ես կմեռնեմ,- մտածեց խեղծ ճամփորդը:- Ոչ ոք օգնության ձեռք չի մեկնում ինձ»:

ապառած  
ճամփորդ  
հայացք  
արյունաքամ  
ոչ ոք  
իբր

## Բառախաղ

### Առած

Հավքը թնով կթոշի,  
մարդը՝ բարեկամով:  
Հայկական

Գույքը գտավ գթառատին,  
Գթառատին գթասիրտ,  
Գլուխն զլխի տվին երկար  
Եվ անգութին ... գթացին:



## Բառերի գանձատուփ

1. Ծարքերից ընտրիր և կողք կողքի գրիր հոմանիշ բառերը:  
հսկայական անմարդաբեակ շքեղ ոլորապտուս ծուռումուն ճոխուր ամայի
2. Գրիր վտանգավոր և հսկայական բառերի հականիշները:
3. Մեկ բառով ինչպես կատես՝  
ա) օգնության ձեռք մեկնել, բ) հայացք զցել:
4. Տեքստի սկզբնամասում գտիր այն բառերը, որոնք նշանակում են՝  
ա) ժայռ, բառաժայռ,  
բ) թաքնվել՝ մեկի վրա հանկարծակի հարձակվելու համար:
5. Քսակ է կոչվում այն փոքրիկ տոպրակը, որի մեջ փող էին պահում: Հիմա քսակի փոխարեն ինչ են օգտագործում:

**6. Ըստնաձայն բառը բաղադրիչների բաժանելիք: Երկրորդ արմատով բարդ բառեր կազմիր:**

**7. Շնորհածակ, գևալ, յիշալու բառերի արմատներով և -ացք ածանցով բառեր կազմիր հայտնի բառի նմանությամբ:**



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

**1. Գրիր դեպքերի նկարագրությունը.**

**ա) Մի մարդ ճամփա ելավ:**

**թ) Նա միայնակ էր ճամփորդում, քսակում էլ շատ փող ուներ:**

**զ) ..... և այլն:**

**2. Նկարագրիր այն ճանապարհը, որով անցնում էր մարդը:**

**3. ա) Նկարագրիր այն երկու անցորդներին, որոնք չօգնեցին վիրավորին:**

**թ) Հատկանիշ ցոյց տվող 3-4 բան ասա, որոնցով կը նութագրեիր անցորդներին:**

**4. Ինչպես կվարվեիր, եթե վիրավոր մարդը քո ճանապարհին ընկած լիներ:**



### **Պատմությունների զամբյուղ**

**1. Մանուկների Աստվածաշնչից Հիսուսի մեկ ուրիշ պատմություն կարդա և պատմիր ընկերներիդ:**

**2. «Քարսիրտ մարդու վերջը» վերնագրով շարադրություն գրիր:**



### **ԼԱՎ ԸՆԿԵՐԸ 2**

**(ըստ Աստվածաշնչի)**



Ճանապարհին անօգնական ընկած հուսահատ վիրավորը ծարավ էր, վերքերն էլ ցավում էին, իսկ արևն ավելի ու ավելի կիզիչ էր դառնում: Հանկարծ նա կրկին մոտեցող ձայն լսեց, բայց այս անգամ ոչ թե մարդու ոտնաձայներ, այլ ավանակի դոփյուններ:

Ճամփորդը շատ էր թուլացել, գրեթե ուժասպառ էր եղել: Նա փորձեց ձայն տալ, օգնության կանչել, բայց կարողացավ միայն հազիվ լսելի ձայնով շնչալ.

- Օգնեք ինձ, խնդրում եմ, օգնեք ինձ:

Ավանակով ճամփորդող մարդը, որ օտարական էր, լսեց վիրավորի թույլ կանչը: Նա և այն ճանապարհին ընկած մարդուն ու անմիջապես գուշակեց կատարվածը: «Խեղճ մարդ,- հուզված մտածեց նա,- ես կփորձեմ օգնել քեզ»:

Օտարականը հանեց իր պայուսակը, որի մեջ դեղորայք, վիրակապ և ջուր կար: Նա խնամքով մաքրեց վիրավոր ճամփորդի վերքերն ու վիրակապեց, ջուր տվեց, որ խմի ու ծարավը հագեցնի, հետո զգուշությամբ նստեցրեց ավանակի վրա:

Բարի մարդը քայլում էր ավանակի կողքով՝ մի ծեռքով պահելով նրա վրա նստած վիրավորին: Ծուտով հեռվում առկայծող լուսեր երևացին, և օտարականը թեթևացած շունչ քաշեց. արդեն մոտենում էին փոքրիկ իջևանատանը: Նրանք շատ դանդաղ էին գնում, բայց փրկության հույսը ուժ էր տալիս

Նրանց: Վերջիվերջո տեղ հասան: Իջևանատերը դուրս կազեց՝ օտարականին օգնելու: Նրանք խեղճ ճամփորդին ներս տարան ու պակեցրին մահճակալին: Վիրավորը, իհարկե, փող չուներ. չե՞ որ նրան կողոպտել էին և ամբողջ փողը գողացել:

- Ոչինչ,- իջևանատիրոջն ասաց օտարականը:- Ահա, վերցրո՛ այս փողը: Վաղը ես պետք է շարունակեմ ճանապարհ, բայց դու, խնդրում եմ, խնամի՛ր նրան,

**անօգնական  
դեղորայք  
առկայծել  
իջևանատուն  
վերջիվերջո  
ծախսել**



մինչև որ լավանա: Եթե ավելին ծախսես, վերադարձիս ճանապարհին կվճարեմ աշխատանքիդ համար:

Պատմությունն ավարտելուց հետո Հիսուսն ասաց.

- Ընկերը նա է, ով քո սիրո և օգևության կարիքն ունի, ընկերը նա է, ով սիրում և օգևում է քեզ:

## Ասացվածքներ

Բարեկամը նեղ օրվա համար է:

Հայկական

Ընկերոջը վտանգի մեջ ես ճանաչում:

Հայոնական

Արթյի՛ Ժիրունիկ,  
այս պարմոքյան մեզ  
կա իզեանելոյ բառ:  
Նաև խնդրում եմ, այն  
ինչ է նշանակում:



Արթյի՛ խնդրուկ. նախ  
առեմ, որ Ձեզ հեղափրքող  
բառը կազմվել է իզեանի-ից:  
Այս նշանակում է «ճանապարհին  
կառուցված շինություն, որ նախա-  
ցեաված է զիշերեղու կամ հանգարանավու  
համար»: Այսինքն՝ իզեանը ժամանակակից  
հյուրանոցի նման բան էր:



Ա, հասկացա:

Պորեմ իզեանելոյ բառն էլ  
նեղանակի «զիշերեղու կամ  
հանգարանավու համար  
ճանապարհին որևէ ցեղ  
կանգ առնելոյ մնայ»: Պարզ  
է նաև, որ իզեանարերն էլ  
իզեանի ցեղըն է:



Ժիրեֆ, այս  
իզեան բառից է առաջ  
եկել Մավուշի մարդի  
կենցրոնի՝ իզեանի  
անոնը:



## Բառերի գանձատուփ

1. Գրիր գուշակել, առկայօնել ինտելեկտուալ բառերի հոմանիշները:
2. Գրիր մոտենալ, թողարկալ ավարտել բառերի հականիշները:

**3. Լավասար բառն այս պատմոթյան մեջ ինչ իմաստով է գործածվել:**

**4. Զոր և հույս արմատներով բառեր կազմիր:**

**5. Յ-ական բան գրիր -ական և -ավոր ածանցներով:**



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

**1. Պատմոթյունը պատմիր քո բառերով:**

**2. Օտարականն ինչպես օգնեց վիրավոր ճամփորդին:**

**3. Քո կարծիքով օտարականն ինչո՞ւ օգնեց վիրավորին:**

**4. Ո՞րն է այս պատմոթյան հիմնական միտքը:**



### **Պատմությունների և գրույցների զամբյուղ**

**1. Որևէ մեկին երբեւ օգնել ես: Պատմիր:**

**2. Պատմիր քո ամենալավ ընկերոջ մասին:**



### **Լեզվաբանի դասը**

#### **Բառերի կազմությունը**

Բառերն ըստ կազմության լինում են պարզ, բարդ և ածանցավոր:

Պարզ են միայն մեկ արմատից կազմված բառերը: Օրինակ՝ մարդ, տուն, սեղան, ներկ, գոյն, բույ:

Բարդ են երկու և ավելի արմատից կազմված բառերը: Օրինակ՝ աղամաս, տոմսարկղ, արևածաղիկ, վարդագոյն, գրադարանավար:

Բարդ բառերի արմատները հաճախ միանում են ա հոդակապով: Օրինակ՝ ջրափոս, զայլաձուկ, վիրակապ:

Ածանցավոր են այն բառերը, որոնք կազմված են մեկ արմատից և մեկ կամ երկու ածանցից: Ածանցները արմատներին միանում են սկզբից կամ վերջից: Օրինակ՝ անվախ, ուրախություն:

Որոշ բառերում ածանց կա թե՛ բառի սկզբում, թե՛ վերջում, ինչպես՝ անկարգություն:

Իսկ այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից և առևվազն մեկ ածանցից, կոչվում են բարդ ածանցավոր: Օրինակ՝ կարգապահություն, մայրաքաղաքային:

## ԹԵՇ ՆՎԻՐԵՄ ԻՄ ՓՈՔՐԻԿ ՍԻՐՏԸ



Ես մի փոքրիկ, շատ փոքրիկ, շատ փոքրիկ սիրու ունեմ:

Տատիկս ասում է. «Սիրու չպետք է դատարկ մնա: Դատարկ սիրու դատարկ ծաղկամանի նման է և ցավ կարող է պատճառել մարդուն»:

Ահա թե ինչու երկար ժամանակ խորհում եմ, թե ո՞մ նվիրեմ իմ այս փոքրիկ սիրու, ավելի ճիշտ՝ ո՞մ տեղավորեմ սրտիս մեջ: Ինչպես ավելի ճիշտ բացատրեմ. ուզում եմ, որ իմ փոքրիկ սիրու, որ գեղեցիկ ու կոկիկ տնակի նման մաքուր է, նվիրեմ մի մարդու, որին բոլորից շատ եմ սիրում: Նրան, ով իսկապես արժանի կլինի իմ այս փոքրիկ ու մաքուր տան մեջ ապրելու:

Ճիշտ եմ ասում, չե՞:

Հայրիկս ասում է. «Մարդու սիրու հյուրանոց չե, որ զան, երկու-երեք ժամ կամ երկու-երեք օր ապրեն ու գնան»:

Իսկապես, չգիտեմ, թե ինչ բան է սիրու: Համոզված եմ, որ սիրու բարի ու ազնիվ մարդկանց տեղին է, այն ել՝ մշտական տեղը:

Այո՞... Լավ մտածելուց հետո որոշեցի, որ սիրոս ամբողջովին, անմնացորդ մայրիկիս եմ նվիրելու: Եվ այդպես էլ արեցի:

Երբ նայեցի, տեսա, որ թեև սիրելի մայրիկս հեշտ ու հանգիստ տեղավորվել էր, սակայն սրտիս կեսը դատարկ էր մնացել... Պարզ է. Ես հենց սկզբից պետք է գլխի ընկնեի ու սիրոս միանգամից երկուսին՝ մայրիկիս ու հայրիկիս, նվիրեի: Այդպես էլ արեցի:

Հետո գիտե՞ք՝ ինչ պատահեց. Երբ նայեցի, տեսա, որ սրտում դեռ ահագին տեղ է մնացել:



Եվ սրտիս դատարկ անկյունն անմիջապես նվիրեցի ինձ հարազատ, շատ հարազատ մի քանի հոգու՝ մեծ եղբորս, փոքր քրոջս, պապիկիս ու տատիկիս, նաև իմ լավ ու բարի քեռուն ու հորեղբորը...

Մտածեցի՝ իիմա այստեղ այ թե իրաւացում կլինի... Այդքան մարդ ինչպես է տեղավորվելու այդ փոքրիկ սրտում:

Աստված իմ, նայեմ ու ինչ տեսնեմ. Նրանք բոլորը միասին սրտիս ընդամենը կեսն էին զբաղեցրել, ուղիղ կեսը: Հանգիստ տեղավորվել էին, զրուցում էին, ծիծաղում... Ինչ նեղվածք, ինչ բան... Սրտում դեռ մի աշխարհ տեղ էր մնում...

«Լավ,- մտածում եմ,- իիմա ում հերթն է...»:

Եվ սրտիս դատարկ մնացած մասը սիրով նվիրեցի մեր թաղի բոլոր ազնիվ մարդկանց, իմ լավ ու բարի բարեկամներին ու հարազատներին, ընկերներին, ինչպես նաև այն բոլոր ուսուցիչներին, որոնք երեխաներին սիրում են ...

Մեր մեջ ասած, հայրիկս մի հարուստ հորեղբայր ունի, շատ հարուստ հորեղբայր: Մտածեցի. քանի որ բոլոր լավ մարդկանց տեղավորել եմ սրտիս մեջ, հորս հորեղբորն էլ մի անկյունում տեղ տամ: Բայց նա չտեղավորվեց: Ինչքան չարչարվեցի, անօգուտ: Բայց ես ինչ կարող էի անել: Ես մեղք չունեի: Մեղավորը հաստատ ինքն էր: Ասենք, երբ ինքը մի կերպ ներս էր խցկվում, դրսում էին մնում նրա փողի հսկայական սևդուկները: Եվ նա հետին դուրս էր վազում փողի ետևից...

Կամաց-կամաց հասկանում էի, թե մի փոքրիկ, շատ փոքրիկ սիրտն իրականում որքան մեծ կարող է լինել...

Մի գիշեր, երբ վերիիշեցի մեծ պատերազմի ծանր ու դժվարին

**ընդամենք  
նեղպածք  
անօգուտ  
խցկվել  
հսկին  
աղտոտել  
օվկիանոս**

օրերը, լաց եղա ու բարձրաձայն գոռացի.  
«Սրտիս մնացած մասը նվիրում եմ բոլոր այն  
հերոսներին, ովքեր նենգ թշնամուն դուրս  
վունդեցին մեր հողից»:

Հրաշալի է:

Հիմա իմ սիրտը մեծ ու հսկա մի քաղաքի  
նման արդեն դպրոց ունի, հիվանդանոց,  
զորանոց, փողոցներ ու թաղեր...

Հիմա սրտումս ընդամենը մի շատ փոքրիկ  
տեղ է մնացել: Եվ գիտեք, թե ում համար եմ պահել... Ճիշտ  
կռահեցիք. պահել եմ բոլոր չար ու վատ մարդկանց համար:  
Այն: Սակայն պայմանով, որ նրանք փոխվեն. Երեխաներին  
չնեղացնեն, ծովերը չաղտուտեն, կենդանիներին չոչչացնեն և  
առհասարակ ոչ մեկին վատություն չանեն... Միայն այդ դեպքում  
նրանք կդառնան իմ սրտի բնակիչները:

Այդպես է, չե՞: Աևգամ եթե բոլոր այդ մարդիկ բարիանան ու  
սիրտս մտնեն,-մտածում եմ ես,-միևնույն է, սրտումս դեռ ելի մի քիչ  
տեղ կմնա... Գուցե անտառների համար, լեռների, թռչունների,  
ձկների, եղնիկների ու ելի շատ ու շատ բաների համար...:

Իսկապես որ զարմանալի բան է. չե՞ս հասկանո՞ւմ՝ սա սիրտ է,  
թե անծայրածիր օվկիանոս...

Ախր այս փոքրիկ սիրտն ինչպես չի լցվում...

Գուցե հասկանամ, երբ մեծանամ: Բայց իհմա, քանի դեռ  
սրտումս տեղ կա, սիրտս պիտի նվիրեմ բոլոր-բոլոր լավ ու բարի  
մարդկանց: Սիրտը հենց դրա՛ համար է: Միթե այդպես չե...

*Պարսկերենից թարգմանեց Գևորգ Ասատրյանը*

## **Բամարտախոսություններ**

*Մեծ սիրտը, ինչպես օվկիանոսը, երբեք չի սառչում:*

*Մարդիկ ամենից շատ արժանի են սիրո:*

*Լավ մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ,  
հազարավոր սրտերում:*



## Բառերի գանձատուփ

1. Պատմվածքում գտիր խորհել, գոչել, բևակվել, տաևջվել, գուշակել, կեղտոտել բառերի հոմանիշները, որոնք կապուտ են գրված:
2. Գրիր ազլիիվ, մշտական, դատարկ, մեղավոր բառերի հականիշները:
3. Հևալ նշանակում է «ընդհատումներով արագ-արագ շեշել, շունչը կտրվել»: Ի՞նչ է նշանակում հերիև:
4. ա) Բարեկամ նշանակում է՝ 1) «լավ, բարի վերաբերմունք ուսեցող», 2) «ազգական», իսկ հարազատ նշանակում է՝ 1) «արյունակից, ազգական», 2) «մտերիմ, սիրելի, թանկագին»: Ո՞ր իմաստն է ընդհանուր:
- բ) Հարազատ բառը ո՞ր իմաստով է գործածվել Եվ սրտիս դատարկ աելյունն անմիջապես նվիրեցի ինձ հարազատ, շանու հարազատ մարդկանց նախադասության մեջ: Փորձիր փոխարինել հոմանիշ բառով:
- գ) Հարազատ բառով 2-3 բառակապակցություն կազմիր:
5. Ծաղկաման բառի արմատներից յուրաքանչյուրով 1-ական ածանցափոր և բարդ բա՛ռ կազմիր:

Այրելի Շիրունիկ, հիշում  
եմ, անցյալ գարի դու ինչ  
բացաբերեցիր մի բուռ և մի մասք  
արդահայրությունները: Արդեն  
զիրեմ, որ դրանք գործածում ենք,  
եթե ուզում ենք ցույց տալ, որ մի  
բան փոփր է կամ շատ ժիշ: Ֆիշը  
եմ հասկացել արդյոք, որ մի  
աշխարհ չեղ արդահայրությունը  
նշանակում է «զար ցեղ»:

Այո՛, այբաւու է: Որս նման  
մի ոդիշ արդահայրու-  
թյունն էլ եւ սպեզալիտա-  
ծով համրելությունն որ  
նշանակում է «զար  
մեծ, անասիման համ-  
բերություն»:





## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեղինակն ինչերի հետ է համեմատում սիրտը: Դու՛ ինչի  
հետ կհամեմատեիր այն:
  2. Թվարկիր,թե տղան իր սրտում ո՞մ տեղ տվեց:
  3. Գրիր հայր, մայր, հորեղբայր, հորաքոյր, կիև, ըսկեր բառերի  
ո՞մ հարցին պատասխանող ծևերը:
- Նմուշ՝ եղբայր – (ում) եղբոր:**
4. Տեսլել - տեսա, տեսար, տեսավ շարքի նմանությամբ գրիր  
մուկել և իջևել բառերի շարքերը:
  5. Ծարունակիր և նախադասություններ կազմիր.
- ա) Իմ կարծիքով.....:**      **բ) Համոզված եմ.....:**



## Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Ո՞վ արդեն տեղ ունի, և ո՞մ կուզեիր տեղ տալ քո սրտում:
2. Պատրանստ ես սրտիդ մեջ չար և վատ մարդկանց էլ տեղ  
տալու: Ինչ պայմանով տեղ կտաս նրանց: Լսիր նաև ըսկերներիդ  
կարծիքը:



## Իմաստունի խորհուրդները

Արդիք գո մյուերիմներին ու հարապապներին: Հարզի՛ր  
որիշներին, որպեսպի նրանք էլ ժեզ հարգեն:

Ռեղադիր և հոգարա՛ր եղիր ժեզ շրջապարող մարդկանց  
նկարմամբ, օգնի՛ր նրանց, ինչով կարող ես:

Որիշների հետ վարվի՛ր այնպես, ինչպես կուցես որ նրանք  
վարվեն ժեզ հետ:



## Դադարի պահ

Բառաշղթայից առանձնացրո՛ 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 15-րդ  
և 17-րդ տառերը և բան կազմիր:

ըսկեր

կիևսպապիկբերի



## ՀԱՅՐՍ

Երբ դաշտերում Շիրակի  
Առավոտն էր արթևանում,  
Մայրս ամեն կիրակի  
Ինձ մեր բոստանն էր տանում:

Հայրս մի գառ էր առել,  
Ճերմակ մի գառ ինձ համար,  
Ու ես մի թուխ գառ դարձել՝  
Խաղում էիսք անդադար:

Երբ հայրիկս մեզ բուսում,  
Ինձ մի թնին էր առնում,  
Մյուս թնին՝ գառնուկիս,  
Կյանքս դրախտ էր դառնում:

Արածում էր գառնուկս  
Եվ դառնում էր ինձ պահակ,  
Երբ ես՝ հոգևած մանուկս,  
Քնում էի կաղնու տակ:

Հովս էլ անուշ մայրիկիս  
Նուշ համբույրն էր ինձ բերում,  
Թե մորուքն էր հայրիկիս  
Ինձ քևած տեղս համբուրում:

Թիթեռների մեջ թիթեռ,  
Ծաղիկների մեջ՝ ծաղիկ,  
Ինչ անուշ էր կյանքս դեռ՝  
Անհոգ, լուսե, խաղաղիկ:



## Օրինանքներ

Հորով, մորով լինես:

Լստված պահի քեզ:

Ծիես, ծաղկես, զորանաս:





## Բառերի գանձատուփ

1. Հով նշանակում է «թեթև քամի, հովիկ» և «զով, սաղը»: Բառը որ իմաստով է գործածվել բանաստեղծության մեջ:
2. Գրիր մանուկ, անդադար, անուշ, ճերմակ բառերի հոմանիշները:
3. Գրի՞ր արթևանալ, տանել և հոգևել բառերի հականիշները:
4. ա) Համեմատի՛ր համբուր և համբուրել բառերը: Ինչ նկատեցիր:
- բ) Գոյն, լոյս, բոյս արմատներին վերջից բաղադրիչներ ավելացրու և նոր բառեր կազմիր:
5. Գառնուկ և հայրիկ բառերից առանձնացրո՛ւ ածանցները: Դրանցով ուրիշ բառեր կազմիր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ջո բառերով պատմի՛ր բանաստեղծությունը:
2. Հեղինակն ինչ բառերով է նկարագրում իր կյանքը մանուկ տարիներին:
3. Բանաստեղծն ինչ էր զգում իր հոր կողքին:
4. ա) Կաղնի, կաղնու, կաղնուց ձևերի նմանությամբ գրի՛ր ուռենի, եղնենի, բալենի բառերի համապատասխան ձևերը:
- բ) Որևէ շարքից երկու բայն ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Պատմի՛ր քո կյանքի ամենաերջանիկ օրվա մասին:
2. Հայրիկիդ գրավոր պատմի՛ր քո ամենաթանկ երազանքի մասին:



Առավոտն է արթևանում նախադասությունը մի բառով ասա:

## Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ

Յուրաքանչյուր բառ իր իմաստն ունի: Օրինակ՝ թռչել նշանակում է «օդում թռերը թափահարելով մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրվել»: Սա թռչել բառի սովորական կամ ուղիղ իմաստն է:

Խոսքում բառերը հաճախ գործածվում են ոչ սովորական իմաստով: Օրինակ՝ ժամանակը շատ արագ է թռչում: Ժամանակը թռչել չի կարող. ժամանակը կարող է շատ արագ անցնել: Ուրեմն թռչել բառն այս նախադասության մեջ գործածվել է «արագ անցնել» իմաստով, որը նրա ոչ սովորական փոխաբերական իմաստն է:

Այդպես էլ ոսկի բառի ուղիղ իմաստն է «դեղին գոյնի թաևկարծեք մետաղ»: Օրինակ՝ Ազահ մարդը ոսկի շատ էր սիրում: Իսկ փոխաբերական իմաստը՝ «լավ, բարի, ազնիվ», օրինակ՝ ոսկի բնավորություն, ոսկի մարդ:

### Դադարի պահ

Բառաշարքից առանձնացրու՛ բառերը և ըստ գոյների որոշիր, թե ինչը որտե՞ղ է ածում:



Խաղողգազարցորենվարունզալորզարիդեղծոխծիրանպղպեղ կեռասվարսակրմիկտարեկանկաղամբընկուզզոբիխնձորքողկնուու

արտ	այգի	բանջարանց
...	...	...

## ՄՈՐ ԺԴԻՏԸ

Մայրական ժպիտ, դու քըքուշ ու բու  
Եվ փափուկ, ինչպես աղավնու մետուր,  
Դու երկնքի պես աստղալից ու թօք  
Եվ արևի պես տաք ու լուսավոր:

Ես օրորոցում քո շողն զգացի  
Եվ զանգակի պես ուրախ զեզացի,  
«Մայրիկ» կանչեցի մայրենի լեզվով,  
Եվ իմ աշխարհը սկսվեց քեզնով:

օրորոց  
ուղեկցել

Իմ մանկությունից մնացել է ինձ,  
Մայր, քո ժպիտը լուսի պես թռիչչ  
Եվ բոժոժների զեզոցով նորից  
Քո երգը հավետ ուղեկցում է ինձ:

Ոռաերենից թարգմանեց  
Նանսեն Միքայելյանը

Ասույթներ

Մոր սիրտը մարդկության  
սիրտն է, տիեզերքի սիրտը:  
Ավ. Բանհակյան

### Հանելուկ

Այս ո՞ր պահն է տվյալ օրվա,  
Երբ մայրիկն է քեզ օրորում,  
Տաք վերմակով քըքուշ ծածկում,  
Զերմ համբույրով քեզ քուն բերում:

Կա մի գեղեցիկ էակ, որին  
միշտ պարտք ենք. դա մայրն է:  
Օստրովսկի (ռուս գրող)



## Բառերի գանձատուփ

1. Բանաստեղծն ինչ բառերով է բնութագրում մոր ժպիտը:
  2. Համեմատի՛ր գեղեցիկ ժպիտ և լուսավոր ժպիտ բառակապակցությունները: Ո՞ր բառն է գործածվել փոխաբերական իմաստով: Այդ բառի ուղիղ իմաստով բառակապակցությունների կազմիր:
  3. Գրի՛ր քննուշ, լուս, շող, ուրախ, հավետ բառերի հոմանիշները, դրանք գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:
  4. Փորձի՛ր ինքնուրույն բացատրել աստղալից բառը:
  5. Ինչպիսին կարող են լինել երկինքը, սիրությունը, յուրաքանչյուրի կողքին համապատասխան բան դիր:
- Նմուշ՝ ծով - սլեմոն ծով, անձայրածիր ծով, փոյթորկոտ ծով:
6. Խնոմիչ բառի հոմանիշներն են գրամիչ, հիմայիչ, կախարդական բառերը: Դրանցից մեկը գործածի՛ր նախադասության մեջ:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ մայրական ժպիտն ինչերի հետ է համեմատվում: Իսկ դու ինչի հետ կհամեմատեիր:
2. Ինչ ես զգում, երբ մայրիկդ ժպտում է:
3. Բանաստեղծությունից ինչպիսի հարցին պատասխանող 5 բան դուքս գրիր և դրանցով բառակապակցութուններ կազմիր:
4. Աղջավանի, աղավնու, աղավնուց ձևերի նմանությամբ գրիր որոի, այգի, ոսկի բառերի համապատասխան ձևերը:



## Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Նկարագրիր քո մայրիկին:
2. Զերմ նամակ գրիր մայրիկիդ և նրան հաղորդիր այն, ինչը մինչև հիմա բարձրաձայն չես ասել:



Ըստու բառն այստեղ նշանակում է «զանզակ, զանգույակ»: Հետաքրքրվիր, թե ուրիշ ինչ ըստու է լինում:



## ՄՈՐ ՆԱՄԱԿԸ

Որդի՞ս, ես համոզված եմ, որ քո ընկերները երբեք այնպես չեն պատասխանի իրենց հորը, ինչպես դու՝ այսօր երեկոյան:

Ենթիկո, ինչպես կարողացար այդ անել:

Դու պետք է խոստանաս ինձ, որ այդ բանը երբեք չի կրկնվի:

Ամեն անգամ, երբ ի պատասխան հորդ արած դիտողության, մի կոպիտ բառ է ուզում դուրս թռչել քո բերանից, խորհին այն մասին, որ մի օր զղջալու ես դրա համար:

Հետո դու կիհասկանաս, որ հայրդ միշտ ամենալավ ընկերն է եղել քեզ համար, ու երբ ստիպված է եղել պատժել քեզ, դրանից ևա ավելի է տանջվել, քան դու ինքդ: Իսկ եթե երբեմն էլ քեզ ստիպել է լաց լինել, ապա քո բարին կամենալով:

Նա հաճախ է փնտրում քո մտերմությունը, որովհետև քեզ հետ է ուզում լինել այն պահերին, երբ սիրտը ծանրացած է, երբ անախորժություն է պատահում իրեն, ինչպես բոլոր մարդկանց. քո մեջ ընկեր է փնտրում, որպեսզի սփոփիվի ու հոգսը մոռացության տա: Այդ ժամանակ նրան հարկավոր է քո սերը՝ հոգու պայծառությունն ու արիությունը վերագտնելու համար:

Մտածիր, թե ինչպիսի ցավ ես պատճառում նրան, երբ փոխադարձ սիրո փոխարեն ևա քո մեջ տեսնում է անտարբերություն ու կոպտություն:

Այլևս նման սուկալի երախտամոռություն ցուց չտաս, որդի՞ս:

Մտածիր, որքան էլ ջանաս, միևնույն



է, չես կարող փոխհատուցել այն, ինչ ևա արել է ու շարունակում է անել քեզ համար:

Գևա, տղան, գևա հորդ մոտ, ևա կողքի սենյակում նստած աշխատում է: Ոտքերիդ ծայրերի վրա մոտեցիր նրան, որպեսզի չսի ներս մտնելուդ ձայնը, գլուխդ դիր նրա ծնկներին ու ներողություն խնդրիր:

*Քո մայր*

## **Բանագիտաթյուններ**

Ծնողի խստությունը բուժիչ դեղ է. նրա մեջ ավելի շատ քաղցրություն կա, քան դառնություն:

Մոր սիրտը մի անդունդ է, որի խորքում միշտ էլ ներում կգտնվի:

### **Առած**

Խորատը դեղի ևման է. որքան դառը, այնքան բուժիչ:



### **Բառերի գանձատուփ**

1. Բաց թողնված տեղերում փոխհատուցել. մտերմություն, ջանալ, անախորժություն բառերից ո՞րը պետք է լինի:

ա) ..... բառը նշանակում է «մի բանի համար ճիգ ու ջանք գործադրել»:

բ) Երբ մեկի կյանքում անհաջողություն կամ տիած դեպք է լինում, ասում են՝ ..... է պատահել:

գ) Մեկի հետ բարեկամություն անելը ..... է կոչվում:

դ) Կյանքում միշտ չէ, որ հաջողվում է մեկի լավության տակից դուրս գալ, նրա արածին լավությամբ պատասխանել, այսինքն՝ .....

2. Տանջվել նշանակում է «շատ աշխատել, չարչարվել» և «հոգվել, անհանգստանալ, մտածմունքի մեջ ընկնել»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել Երբ ստիպված է եղել պատժել քեզ, դրանից ևա ավելի է տանջվել, քան դու ինքդ նախադասության մեջ:

3. ա) Կոպիտ նշանակում է «կոշտ, ոչ փափուկ», «անկիրթ», «վիրավորական»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել կոպիտ բառ արտահայտության մեջ:

բ) Կոպիտ բառը մյուս իմաստներով գործածիր բառակապակցությունների կամ նախադասությունների մեջ:

**4.** Նամակում գտիր նկատողություն, հարկադրել, ցանկանայ, միմիթապովելի, սարսափելի, վատահ, աղերախտովյուն բառերի հոմանիշները. դրանք կապոյն են գրված:

**5.** Գրիր երբեք, հաճախ, մոռացության տալ, մոտենալ, ծակրանալ բառերի հականիշները:

**6.** Ի՞նչ բառեր և արտահայտություններ գիտես, որոնցով կարելի է ներում խնդրել:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

**1.** Ո՞րն է նամակի հիմնական միտքը: Մայրը որդուն ինչ է խրատում:

**2.** Մայրն ինչպես է բնութագրում իորը:

**3.** Մոր կարծիքով հայրն ինչո՞ւ է փետրում որդու մտերմությունը:

**4.** Նամակի ո՞ր հատվածը ամենից շատ դուր եկավ քեզ: Ինչո՞ւ:

**5.** Մուսածել-մուսածիր, զետ-զետ ձևերի նմանությամբ կազմիր խնդրել, նոտել, մետել, լողալ բառերի համապատասխան ձևերը:



### Պատմությունների և գրույցների զամբյուղ

**1.** Հայրիկիդ երբեւ օգնել ես նրա համար ծանր պահերին: Պատմիր:

**2.** Նամակով հայրիկից կամ մայրիկից ներողություն խնդրիր քո գործած որեւ սխալ արարքի համար:

#### Ակրեալ ինչուիք

«Մոր նամակում» ի պարասիսն արդահայրությունն ինչ պարմայրեց: Խելքո բառարանում գրա բացարձությունը՝ «որպես պարասիսն»:

Պարզվում է, որ նման բազմաթիվ արդահայրություններ կան: Այսպես, ի նշան հարզանքի՝ «որպես հարզանքի նշան», ի լոր բոյորի՝ «որպեսայի բոյորն իմանան». ի վհճակի լինել՝ «ուժ, հնարավորություն ունենալ»:

Խելքագրքիր է, չե՞ բառարանում մի բառ եւ փնտրում, բայց չեն, թե քանին եւ սովորում:

ինչուիք



## ՏՆԱՅԻՍ

Դու չես սովորում գերազանց, տղան,  
Գովասանագրեր դու տուն չես բերում,  
Եվ ծնողական ձեր ժողովներում  
Բարի նախանձով չեն նայում վրաս:

Նեղում ես տատիդ, հոգու հետ խաղում,  
Ուշքդ օրերով գնդակին տալիս.  
Եվ հարևանի կինը սրտնեղում,  
Աղմուկիդ համար գանգատ է գալիս:



Տեսնում եմ անշուշտ... Բայց երբ խևամքով  
Ծածկում ես թախտին նեցած տատիկին,  
Երբ վշտիս պահին դու աչքի տակով  
Հետևում ես իմ խոսուն հայացքին,-

Երբ տան մրգերից բաժին ես տանում  
Մեր դունապանի փոքրիկ տղային,  
Բակում կռվելիս պաշտպան ես կանգնում  
Ուժեղի ձեռքից տուժած տիարին,-

Տեսնում եմ, տղան, տեսնում եմ խորքից,  
Որ այդ խորդուրոդ քո կեղևի տակ  
Կան հանքեր հարուստ ու ոսկու երակ,  
Բխում է խորքում մի զուզալ հոգի...

Գուցե չես փայլի դիրքով ու ձիրքով,  
Աստղ չես դառնա ոչ մի երկնքում,  
Բայց բացվիր, զտվիր ու փայլիր հոգով,  
Մարդուն ջերմացրու լուսով քո մաքուր:  
Մարդ եղիր, որդիս, մարդ մնա կյանքում...



## Բանագույնություն

Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ:



## Բառերի գանձատուփ

1. Աջ սյունակից զտիր ձախ սյունակում գրված բառերի հոմանիշները:

զտվել	հորդել, ցայտել
բխել	նիրհել, քնել
ննջել	շողալ, ցոլալ
նեղել	մաքրվել, պարզվել
փայլել	անհանգստացնել, տաևցել

2. Բանաստեղծության նախավերջին քառատողում զտիր վօխտ և անհարթ բառերի հոմանիշները:

3. Տկար բառի մեկական հոմանիշ և հականիշ գրիր:

4. Զրևզալ, կարկաչել, շողշողալ, փայլփլել բառերի արմատներով և խոսուն բառի ածանցով բառեր կազմիր:

5. Ինչպես կրացատրես հոգու հետ խաղալ արտահայտությունը:

Պարե, Շիրոնիկ  
Ես գիրեմ, որ երակները  
մարդու մարմնի այն  
անորոշերն են, որոնք արյունը  
հասցնում են սրբին: Պոկի՞ն  
էլ երակ ունի:



Ինչուի՞ զան  
անկեղծ ասած՝ ես էլ  
չփրեի, բայց հարցրի  
մեր հարևանին, որն  
աշխարհում է ուկու  
հանգում: Նա ասաց, որ  
հանգում ուկու երակ են  
կոչում հիմնական ժարաշերքի  
մեջ եղած այն բարակ շերպը, որից ուկի  
են սպանում: Խասկացար չ՞: որ զա խիստ  
թանկարժեք շերպ է:



Բանաստեղծության մեջ զտիր զաղտագողի, պաշտպանել բառերի իմաստն արտահայտող բառակապակցությունները:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Որդու ո՞ր լավ արարքներն են ուրախացնում մորը:
2. Հատկանիշ ցուց տվող ինչ բառեր կօգտագործես տղային նկարագրելու համար:
3. Մարդու ո՞ր հատկանիշներն են ամենից բարձր գնահատում:
4. Ո՞րն է բանաստեղծության հիմնական միտքը: Մայրն ինչ խորհուրդ է տալիս որդուն:
5. Ծարունակիր շարքը՝ գովասանագիր - գովասանագրեր, ձեռագիր - ....., օրագիր - ....., հեռագիր - ....., պատվոգիր - .....



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. «Ինչպիսին կուզեմ լինել» վերնագրով շարադրություն գրիր:
2. Պատմիր քո ճանաչած բարի ու ազնիվ մարդկանցից մեկի մասին:



## Սողոմոն Սկրտցան

### **Թ-ԱԳ-ԱՎ-ԼՐՆ ՈՒ ՀՈՂԱԳ-ՈԲԾԵ**

Գարնանային արևոտ մի օր, երբ թագավորն իր շքախմբով որսի էր գնում, տեսավ, որ զառամյալ մի ծերունի ընկուզենի է տևկում առվի ափին: Նրա կնճռապատ ճակատը ողողված էր քրտինքի կաթիլներով, որոնք գոհարների պես շողշողում էին արևի տակ:

Թագավորը սանձահարեց իր նժույգը, ողջունեց ծերունուն ու ասաց.

- Բարի հայրիկ, ինչն է քեզ ստիպում այդպես չարչարվել ու քրտինք թափել: Չե՞ որ ընկուզենին շատ ուշ է պտուղներ տալիս, և դու դժվար թե նրա պտուղները վայելես:

- Տե՛ր արքա,- ասաց ծերունին,- եթե քո թագավոր հայրը քեզ

**զառամյալ  
կեցցե՛, կեցցե՞ս  
գեղջուկ  
շնորհակալություն  
ընկուզենի**

ժառանգություն չեն ունենալով ու ակնեղենով, դու ինչպէս կարող եիր մի ամբողջ երկիր կառավարել։ Հայրենի ծառն ու այգին ել հողագործի գանձերն են։ Մեր պատերը ծառեր են տնկել, որոնց պտուղը մենք վայելում ենք, մենք ել նույնը պիտի անենք մեր զավակների ու թռուների համար։

- Կեցցե՞ս, իմաստու՞ն ծերուկ,- ասաց թագավորը և դառնալով վեզիրին՝ հրամայեց, որ գեղջուկին տասը ոսկի պարգևի։

Ծերունին ոսկիները վերցրեց, շնորհակալություն հայտնեց թագավորին և ապա դառնալով դեպի նոր տնկած ծառը՝ մրմնացաց.

- Գոհ եմ քեզսից, իմ փոքրիկ ընկուզենի, թող քո պտուղն անսպառ լինի, կյանքդ՝ երկար։

- Ինձ օրինելու փոխարեն ծառին ես օրինում, ծերուկ,- ասաց թագավորը։

- Ախր սա ինձ բարիք տվեց ոչ թե իինգ կամ տասը տարի հետո, այլ իեւց իիմա,- պատասխանեց ծերունին։



### **Առած-ասացվածքներ**

Աշխատանքը առաքինությունների աղբյուր է։

Քրտինքն աշխատանքի արցունքն է։

### **Բամարտախոսություն**

Ով շատ է աշխատում, երջանկությունը նրան է բաժին ընկնում։



## Բառերի գանձատուփ

- Օրինել նշանակում է «աղոթքով մեկին բարին ցանկանալ՝ մաղթել» և «մեկի անոնքը շնորհակալությամբ հիշել, նրան գովել»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել այս պատմության մեջ:
- Գրիր ողջունել, պարզեցնել, չարչարդել բառերի հոմանիշները:
- Գրիր դժվար, գոհ, ուշ, երկար բառերի հականիշները:
- Նքախումբ, զարամյալ, սանձահարել, անսպառ բառերը դիր համապատասխան իմաստների կողքին:
  - անվերջ, չվերջացող, չսպառվող,
  - սանձը քաշել, իրեն ենթարկել, զապել,
  - շատ ծերացած, ծեր,
  - թագավորին կամ բարձր պաշտոնյային ուղեկցող զինված մարդկանց խումբ:

- Ակելեղենի նշանակում է «թանկարժեք քարեր և նրանցից պատրաստված զարդեր»: Ինչպես կբացատրեն ուշեղենի, արծաթեղենի բառերը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Թագավորն ինչո՞ւ գովեց ծերունուն և տասը ոսկի տվեց նրան:
- Ծերունին ինչն էր համարում ամենակարևոր զանձը, ինչին էր տեղ տվել իր սրտում:
- Ինչ ես կարծում, ծերունին միայն թագավորի տված ոսկո՞ւ համար շնորհակալություն հայտնեց ծառին:
- Թագավորը ծերունուն քաջալերեց կեցցե՛ս բառով: Խրախուսանքի ուրիշ ինչ բառեր ու արտահայտություններ գիտես:




## Պատմությունների և զրույցների զամբյուղ

- Ընկույզենու և ընկույզի մասին տեղեկություններ հավաքիր և հաղորդիր ընկերներիդ:
- «Բարի գործի պտուղները» վերևագրով շարադրություն գրիր:

Իմ պապը տեսել է  
Մեր գյուղի շիվերը,  
Իմ պապը պայտել է  
Մեր գյուղի ձիերը:  
Զրել է իր այգին  
Ու մարզը բահել է  
Եվ արդար քրտինքով  
Իր տունը պահել է:  
Իմ պապը վարել է,  
Իմ պապը ցանել է,  
Իսկ ինձի ժամանակ  
Ձեռքի մեջ մանգաղի  
Դաստակը ցավել է:

արդար  
խորհել  
արտասվել

Իմ պապը հողի հետ  
Խորհել ու խոսել է,  
Ամպի հետ արտասվել,  
Զրի հետ հոսել է...  
Մի օր էլ, երբ հանկարծ  
Ծալվել են ծնկները,  
Զարմանքից քարացել,  
Ամոթից շիկնել է:  
Թողել է նա մաճը  
Եվ շունչը պահել է,  
Եվ հետո քրտինքը  
Ճակատին պաղել է:  
Եվ պապը ակոսում  
Պառկել ու քնել է,  
Խառնվել այն հողին,  
Օր իրեն սել է:





## Բառերի գանձատուփ

1. «Դարմանքից քարացել ամոթից շիկել է» արտահայտություններից եզրակացրո՛ւ, թե ինչ են նշանակում քարանալ և շիկել բառերը: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
2. Ինչ կապ ես տեսնում պաղել և պաղպաղակ բառերի միջև:
3. а) Կարդա իմաստով մոտ այս բառերի շարքերը.  
մտածել - մտորել, խորհել, մտմտալ, կշռադատել,  
լալ - արտասվել, հեկեկալ, հեծկլտալ, ոլրսլ:  
բ) Յուրաքանչյուր շարքից առանձնացրո՛ւ այն բառը, որ գործածվել է բանաստեղծության մեջ:
4. Պայտ նշանակում է «կենդանու սմբակի ձևով ու չափով պատրաստված տափակ երկաթ, որ մեխում են ծիու կամ էշի ոտքերին»: Այս բառից կազմվել է պայտել, որ նշանակում է «պայտ խփել»: Բացատրի՛ր, թե ինչպես են կազմվել տեսկել, բահել, ցավել, շիկել բառերը:
5. Բանաստեղծը քրտինք-ը բնորոշել է արդար բառով՝ արդար քրտինք: Ինչպես կը նորոշես ձին, հողը:

Արեջի գիրունիկ,  
բանաստեղծության մեզ  
անձանոթ բառ կա՝ մասի: Այն  
ինչ է նշանակում:



Չեմ զարմանում, որ դու  
այդ բառը չես լսել: Մասք  
հողագործական մի հին  
գործիքի՝ գութանի կարև  
է, որը բռնած վար է արեզ  
գյուղացին:



Այսօր գյուղապնդեական  
աշխարհանբների ժամանակ արդիական  
մեժենաներ և գործիքներ են կիրառվում, բայց  
հնայած առարկաների անվանումները, ինչպես  
ցեսնում են, կարող են գործածվել:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Նկարագիր պապին, ինչպիսին է նա քո երևակայության մեջ և նկարում:
2. Բնութագրիր պապին, ասածներդ հիմնավորիր բանաստեղծության համապատասխան տողերի միջոցով:
3. Փորձիր կռահել, թե պապն ամոթից ինչո՞ւ է կարմրել:
4. Բացատրիր բանաստեղծության վերջին երեք տողը:
5. Պապիկդ ինչ բառերով է գովում քեզ կամ իր սերն արտահայտում: Ուրիշ ինչպիսի յուրահատուկ բառեր և արտահայտություններ է գործածում քո պապիկը:
6. Գրիր հետի, բրոդից, գծով, տևից, լճի, սրտով, շնից բառերի ուղիղ (ինչ հարցին պատասխանող) ձևերը:

Նմուշ՝ ջրի - ջուր, գլուխ - գիլ:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Պատմիր քո պապի մասին:
2. Դու ձեր ընտանիքի գործերին մասնակցու՞մ ես: Ի՞նչ ես կարողանում անել. պատմիր:



Փորձիր բացատրել, թե իմաստային ինչ տարբերություն ունեն արտասլել և ողբալ հոմանիշները:



## Իմաստունի խորհուրդները

Աիրիր աշխարհանքը այն բոլոր բարիքների մայրն է:

Աշխարեցիս միշտ համան եղիր մի՛ նահանգիր  
դժվարությունների պարճառով և գործդ կրասը մի՛ թող:

Գործդ հածույգով կարարիր:

Միշտ բարի և լավ գործեր արա, և մարդիկ կսրբեն ու կգնահատեն ժեզ:



## ԾԱՌԿԸ

Նա ծնվեց մի նեղ ու կեղտոտ փողոցի անկյունում: Ընդամենը չորս տարեկան էր, երբ ծնողները լքեցին շնիկին, և նա այս մեծ ու փոքր աշխարհում մնաց միայնակ: Գևալով կյանքը դըժվարանում էր: Ճոխ ռեստորանների ու մսի խանութների աղբամանները շրջապատված էին տարեց շների ոհմակներով: Ամենահամարձակները հափշտակում էին եղած-չեղածը, իսկ փոքրերն ու թռյլերը բավարարվում էին մնացորդներով:

Ամեն երեկո շնիկը թափառում էր իին ու մոայլ փողոցներում ու նրբանցքներում, մտնում այգիներն ու պարտեզները: Մարդիկ նայում էին ու լուս անցնում: Ոչ մեկը չէր օգնում կամ ուտելու որևէ բան տալիս: Մութն ընկնելուն պես թափառական շնիկը մտնում էր իր ստվարաթղթե տնակն ու քեռում: Արևը ծագելուն պես ամեն ինչ սկսվում էր նորից:

Մի օր էլ շնիկն իր ծանոթ մայթեզրին տարօրինակ, բայց իր համար գեղեցիկ մի բան տեսավ: Հաստատ ուտելիք չէր: Փորձեց հարմարեցնել դնչիկին:

«Ինչ տարօրինակ է. ամեն ինչ մեծ ու գեղեցիկ է երևում», - մտածեց շնիկը:

Տարօրինակ առարկան դնչիկին՝ շնիկը մտավ ծաղկավաճառի մոտ: Ծաղկավաճառը նայեց նրա ականջներին ու ժպտաց:

- Ինչ գեղեցիկ է կյանքը, - ուրախացավ շնիկն ու գնաց մտավ խաղալիքների խանութը: Հետո զբոսնեց քաղաքի մեծ զբոսայգում: Ակնոցի հետևից երկու խոշոր աչքեր նայում էին լողավազանում չարչարվող ձկներին: Նրանք, պատեպատ զարկվելով, ուզում էին ազատվել քարե ավազանի ճանկերից:

Ուրախացած շնիկը քայլում էր, երբ փողոցի մի անկյունից սրինգի ինչ յուներ լսեց: Շնիկը դանդաղ մոտեցավ:



- Բարեն, շնիկ,- ասաց Երաժիշտը և ուրախ ավելացրեց,- ուրեմն դու ես գտել իմ ակնոցը: Առավոտյան ես այս կորցրի. գրանքանիցս էր ընկել: Կվերադարձնեն. առանց ակնոցի ես շատ եմ դժվարանում:

- Ներեցե՞ք, բայց չեմ կարող, որովհետև ակնոցը կյանքս փոխիեց: Առաջ ամեն ինչ մռայլ էր ու տխուր, մարդիկ ինձ չեին սիրում, իսկ իհմա ուրիշ է:

Երաժիշտը լսեց նրան, ապա ասաց.

- Լսիր, փոքրիկ, եթե դու մենակ ես աշխարհում և տխուր ես, արի ընկերանանք: Ընկերությունը լավ բան է. ես հավատացած եմ, որ ընկերոջ հետ աշխարհը կսիրես առանց ակնոցի էլ:

Ծնիկը մտածեց, հետոն նայեց ծեր Երաժիշտին.

- Դե ինչ, վերցրո՛ ակնոցդ,- ասաց ու դժվարությամբ բաժանվեց ակնոցից:

- Եկ, բարեկամս, զնանք: Տանը մեզ են սպասում:

Այդ օրվանից շնիկը տխուր չէր, ապրում էր երջանիկ, որովհետև էլ մենակ չէր, գտել էր իր մեծ բարեկամին ու ընկերոջը, որը սիրեց ու գուրգուրեց նրան:

Ֆրանսերենից փոխադրեց  
Հոհիսիմե Բշտիկյանը



### Հանելուկ

Ծառ նման է նա զայլի,  
Բայց զայլի հետ չի բայլի,  
Հավատարիմ ու արի  
Բարեկամն է մեր բարի:



## Բառերի գանձատում

1. Հայիշտակել նշանակում է «ուժով, ծարպկությամբ խլել» և «գողանալ»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել պատմվածքում:
2. Իքել նշանակում է «մեկին թողնել-հեռանալ, անօգնական թողնել» և «մի տեղից հեռանալ»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել պատմվածքում:
3. Գրիր չարչարվել, խոշոր, լուս, համարձակ բառերի հոմանիշները:
4. Գրիր փոքր, թույզ, տիտոր, դանդաղ, ծանոթ բառերի հականիշները:
5. Պատեպատ նշանակում է «պատից պատ»: Մի բառով ինչպես կասես սարից սար, դունից դուս, ունից սուս:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Որտեղ էր ծնվել և որտեղ էր ապրում շնիկը:
2. Ինչպիսի կյանքով էր ապրում շնիկը մենակ մնալուց հետո: Նկարագրիր:
3. Ծնիկն արևային ակնոց էր գտել, թե օպտիկական:
4. Երաժիշտն ինչ գործիք էր նվազում: Մի քանի ուրիշ գործիք էլ դո՛ թվարկիր:
5. Քո կարծիքով մարդիկ ինչո՞ւ սկսեցին ժպտալ շնիկին:
6. Քար (ինչ) - քարե (ինչպիսի) զուգի նմանությամբ արծաթ, ուկի, փայտ, կավ բառերից հատկանիշ ցույց տվող բառեր՝ կազմիր:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Ծների կամ կատունների մասին զվարճալի որևէ պատմություն գիտես: Պատմիր կամ ինքդ հորինիր:
2. Մարդու և կենդանու բարեկամության մասին ինչ կարող ես պատմել:

## ԾԱՌԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Մի կոտրատիր իմ ճյուղերը,  
Որդիներև են նրանք իմ հեզ,  
Ես այսպես եմ սիրում նրանց,  
Ինչպես մայրդ սիրում է քեզ:

մղկտալ  
տոք  
օրնիբուն

Տերև անգամ եթե պոկես,  
Սիրտս ցավից կմղկտա,  
Թե որ դու ինձ չպահպանես,  
Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա:

Թող որ բերեմ քեզ հով ու զով,  
Կեղտ ու փոշուց մաքրեմ օդը,  
Կանաչ-կանաչ իմ ձեռքերով  
Ցրեմ ամռան կիզիչ տոթը:

Ծիտ ու ծիծառ առնեմ ուսիս,  
Օրոր ասեմ ես օրնիբուն,  
Եվ քո կյանքի ճանապարհին  
Մնամ որպես գեղեցկություն:

### Հանելուկ

Զմունը տաքացնում է,  
Գարեանն որախացնում է,  
Ամունը զովացնում է.  
Աշնանը՝ կշտացնում:



## Բառերի գանձատուփ

- Գրիր հեղ, կիվիչ, օրևիքուն, տոք բառերի հոմանիշները:
- Գրիր մասրել, ցրել, տալ, մնալ բառերի հականիշները:
- Տիրել անկամ եթե պոկես նախադասության մեջ անկամ բառը գործածվել է «միևնույն անգամ» իմաստով: Մի հոմանիշ էլ դո՞ւ գրիր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Ծառն իր ճյուղերը ո՞մ հետ է համեմատում:
- Երիծար բանաստեղծական բառով հեղինակը ո՞ր թռչունին է անվանում:
- Համեմատիք կոտրել և կոտրատել բառերը: Ի՞նչ տարբերություն են տեսնում: Դրանց նման բառերի 2 զույգ էլ ինքդ գրիր:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

- Ի՞նչ գիտես ծառերի տված օգոտի մասին: Պատմի՛ր:
- «Ծառի նամակը» վերևագրով շարադրանք գրիր:



## Լեզվաբանի դասը

### Գոյական. անձ և իր ցոյց տվող գոյականներ

Առարկա ցոյց տվող բառերը կոչվում են գոյականներ: Առարկա ասելով՝ հասկանում ենք մարդ, կենդանի, իր, երևույթ և այլն:

Գոյականները պատասխանում են ով, ինչ հարցերին:

Ո՞վ հարցին պատասխանող գոյականները անձ են ցոյց տալիս: Օրինակ՝ մարդ, բժիշկ, աղջիկ, լողորդ:

Ինչ հարցին պատասխանող գոյականները իր են ցոյց տալիս: Օրինակ՝ տուն, կաղեն, անձրի, լուս:

Կենդանի ցոյց տվող գոյականները, օրինակ՝ շուն, վագր, աղավնի, նույնպես ինչ հարցին են պատասխանում:





## ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Գիտես, մանկինկ իմ սիրատուն,  
Թե ինչո՞ւ ենք  
Մենք մայր ասում  
Հայաստանին՝  
Մեր ոստանին,  
Այզի դարձած  
Քարաստանին։  
Որովհետև մայր է հողի,  
Լուսի, ջրի ու արևի,  
Մայր է գինու և խաղողի,  
Մայր՝ լեռնային վտակների։  
Մայր՝ ձյունապատ գագաթների։  
Մեր Հայաստան մայրը բարի  
Արդեն քանի հազար տարի  
Զավակներ է ծնել արի  
Եվ կանգնել է ընդդեմ չարի։  
Որդիներով իր քաջարի։  
Եվ մենք իիմա, իմ սիրատուն,  
Հայաստանին մայր ենք ասում.

Մայր՝ խնդալից քո մանկության,

Մայր՝ անսահման երջանկության,

Մայր՝ վարդագույն քաղաքների,

Մայր՝ երազի,

Լուսի անմար

Եվ գալիքի արևամայր։

### Կառյօթ

Երբ ասում են Հայաստան, ակամա ոտքի եմ կանգնում։

Ռաֆայել Խորայելյան (Սարդարապատի հուշահամալիրի  
ճարտարապետը)

Ճյունապատ  
ընդդեմ



## Բառերի գանձատուփ

- Օարքերից ընտրիր և կողք կողքի գրիր հոմանիշները:  
գալիք աևսահման սիրատոն աևսար խևդալից  
սիրելի մշտավառ ուրախ ապագա աևվերջ
- ա) Հետևյալ տողերում երկու գույց հոմանիշ կա: Գրիր դրանք:  
Զավակելեր է ծևել արի  
Եվ կանգնել է ընդդեմ չարի՝  
Որդիերով իր քաջարի:  
բ) Հոմանիշները գործածիր նախադասությունների մեջ:
- ա) Հայաստան նշանակում է «հայերի երկիր»: Ինչպես կրացարես բարաստան բառը:  
բ) Քարաստան բառի ածանցով և ծառ, միրգ, այգի (ի-և զառնում է ե) արմատներով բառեր կազմիր:

Արելի Ժիրունիկ

Նկարել ես արշյով, որ ուրանի բառը,  
որը նշանակում է «մայրափաղագ», այս  
բանսարեղծության մեջ հեղինակը գործածել է  
«հայրենի երկիր՝ հայրենիգ» իմաստով:

Ժիրունիկ



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Ըստ բանաստեղծության թվարկիր, թե Հայաստանն ինչերի «մայրն» է:
- Հեղինակը հատկանիշ ցույց տվող ինչ բառով է բնութագրում քո մանկությունը: Դու ինչ բառեր կօգտագործես:
- Գրիր 3 գոյական, որոնք երկրների անուններ են:
- Մանկական, ուսուական, մայր, մանկություն, զավակ, որդի, գագայք բառերը գրիր համապատասխան սյունակներում:

ով

ինչ

## Իմաստունի օրատետրից

### Հայաստանի Հանրապետության դրություն



հայաստանի հանրապետության պետական  
դրությունը է և լուսավորություն:

Կարմիր խորհրդանշում է հայ ժողովրդի պայքարը հանոն  
անկախության, ազատության և քրառոնեական հավաքի:

Կապույուր խորհրդանշում է հայերի՝ խաղաղ երկնքի պակ ապրելու  
կամքը:

Ծիրականագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արեղծագործ  
լրադանող և աշխատատեր ոգին:

Եռագույնը բարձրացվում է կառավարական շենքերի պետական  
հրմանարկների, օգար երկրներում հայաստանի գետանարների  
շենքերի վրա, ինչպես նաև միջազգային պաշտոնական հանդիպումների, մարզական մրցումների ժամանակ և այլն:



### Պատմությունների և գրույցների զամբյուտ

1. Հայաստանի խորհրդանիշներից մեկի մասին տեղեկություններ ներկայացրու ընկերներից:

2. «Մայր Հայաստանի իմ փոքրիկ անկյունը» վերևագրով շարադրությունն գրիր:

### Տատիկի խորհուրդները

Միոքիչս եիշիր, որ գո սիրո ու հոգացարության կարիքն ունեն  
ոչ միայն մարդիկ:

Սիրիր գո հայրենի երկիրը, բնակավայրը սիրով ու ինսամֆոնի  
վերաբերմիր ամեն ծառ ու թիճ ամեն գետի ու աղբյուրի:

Հոգացար եղիր մարդկանց ու կենդանիների նկարմամբ,  
պահիր ու պահպանիր գո լեզոն ու հավաքը:



### Դադարի պահ

Բառաշղթայի բառերը դասավորիր ըստ գույների և կարդա  
իմաստախոսությունը:

Խողիիխչպետայեսպետանիեարառանցեայրենիքիապրելէլ






Պատվական Խաչառոյան

## ՀԱՅԱՏԱՆ

Հայատանը  
Իմ անոնն է,  
Ազգանոնն է,  
Ինձ ուժ տվող զորությոնն է,  
Իմ իինը և նորությոնն է,  
Իմ լեզոն է, այբուբենը,  
Ուրիշ խոսքով՝ այն ամենը,  
Որ կոչվում է հայրենի տուն...  
Եվ այն տունն է,  
Որ շինել է պապիս պապը  
Անդով ջանքով  
Ու տանջանքով.  
Քար է դրել քարի վրա,  
Դար է դրել դարի վրա  
Եվ քրտինքը թուխ ճակատին՝  
Զուլել է նա պատը պատին:  
Ել ոչ մի հոր,



բրտիկը  
ծլարձակել  
միասին  
խորհուրդ

Ելոչ մի սուր  
Չի մտնելու իմ նոր տունը,  
Չի ջնջելու իմ անունը,  
Ազգանունը,  
Իմ լեզուն ու այբուբենը,  
Ուրիշ խոսքով՝ այն ամենը,  
Ինչը ամուր սյունն է իմ տան  
Եվ միասին կոչվում է հայ  
Ու Հայաստան:  
Եվ ես իիմա իմ տան պատին  
Նոր-նոր քարեր պիտի դնեմ,  
Նոր-նոր դարեր պիտի դնեմ,  
Որ գնալով հզորանա,  
Ծլարձակի ու նորանա,  
Որ միշտ պահի իմ անունը,  
Ազգանունը,  
Իմ մայր լեզուն, այբուբենը,  
Ուրիշ խոսքով՝ այն ամենը,  
Ինչը կյանքն ու խորհուրդն է տան  
Եվ միասին կոչվում է հայ  
Ու Հայաստան:



### Ասույթ

Սուրբ է հայրենիքը: Նա մեր հացե է, մայրական գիրկը, մեր մանկությունն է, մեր պապերի գերեզմանն է և մեր մանուկների զվարք օրորոցը:

Ավետիք Խասհակյան



### Բառերի գանձատուփ

1. Եթե անդուզ նշանակում է «անդադար», ապա ինչ կնշանակի գործադուզ բառը:

2. Հայաստանում ապրող հայր կոչվում է հայաստացի: Ինչպես ենք կոչում ա) Ամերիկայում ապրող հային, բ) Լիբանանում ապրող հային, գ) Ֆրանսիայում ապրող հային:

Նմուշ՝ Պարսկաստանում (Իրան) ապրող հայ - պարսկահայ:

**3. Հայկական այնպիսի անուններ գրիր, որոնցից ազգանուններ են կազմվել:**

**Նմուշ՝ Արարատ - Արարատյան:**



**Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. Մեկնաբանիր բանաստեղծության վերջին տողերը:
2. Հայ նշանավոր հերոսների անուններ թվարկիր:
3. Քեզ համար Հայաստանը միայն Հայաստանի Հանրապետությունն է:
4. Բանաստեղծությունից դուրս գրիր 5 հասարակ գոյական (ինչ հարցին պատասխանող):



**Պատմությունների և հեքիաթների զամբյուղ**

1. «Իմ երկիրը» վերևագրով շարադրություն գրիր:
2. Հայկական մի ավանդագրուց կամ հեքիաթ պատմիր:



**Լեզվաբանի դասը**

### **Գոյական. հատուկ և հասարակ**

**Գոյականները լինում են հատուկ և հասարակ:**

Միատեսակ բոլոր առարկաներն ունեն մեկ ընդհանուր անուն, որը կոչվում է հասարակ անուն: Օրինակ՝ լիճ, քաղաք, տղա, կիև և այլն:

Միատեսակ առարկաներից ամեն մեկին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն:

**Հատուկ անուններ են՝**

**ա) մարդկանց անունները և ազգանունները, օրինակ՝ Հայկ, Անահիտ, Դավարոս Աղայան,**

**բ) երկրների, քաղաքների, գյուղերի, լճերի, գետերի, լեռների, դաշտավայրերի անունները, օրինակ՝ Հայաստան, Երևան, Օշական, Սևան, Հրազդան, Արագած, Արարատյան դաշտ,**

**գ) կենդանիներին տրվող անունները, օրինակ՝ Բողար, Շեկո,**

**դ) թերթերի, ամսագրերի, ստեղծագործությունների անունները, օրինակ՝ «Ծիծեռնիակ» ամսագիր, «Ռուկե ծկնիկը» հեքիաթը:**

**Հատուկ անունները գրվում են մեծատառով:**



## Իմաստունի օրատետրից

### Հայաստանի Հանրապետության զինանշանը



հայաստանը 1918թ. անկախություն ձեռք բերելու և ունեցավ իր սիմվոլ:

Դրանցանի կենտրոնում՝ վահանի վրա, պարկերված են Արարաց լեռ՝ նոյն գրապանով, և պատմական հայաստանի չորս թագավորությունների՝ Արքայեայնների թագավորությունների. Արշակունիների, Պողոսյանների սիմվոլները:

Վահանը պահում են արծիվն ու սույնությունները որոնք են հայկական խորհրդանիշներ են:

Դրանցանը պարկերված է կառափարական շենքերի, պետքական հրիմարկների պուշանակների մեջազարամների կնիքների վրա և այլն:



### ՅԱՎԻՔԻ ԴԱՎԻԹ 1

Յասեա Դավիթն ելավ հեծավ, խթանեց ծիւ ոսկեթամբ  
Ու սրաթե արծվի նման թռավ հասավ Ծովասար:

Այնտեղ ծիուց նա ցած իջավ ու պատյանից սուրը հանած՝  
Դրեց իր հոր գերեզմանին, համբուրեց քարն ու ասաց.

- Հայր իմ, օրինիր սուրս արդար և պատասի քո որդուն,  
Կոհիվ կերթամ ոստիսի դեմ, հաստատ մեա Սասեա տուն...  
Կերթամ Մսրա բուսակալին դուրս քշելու մեր հողից,  
Որ մեր սարերն ազատ մնան, ու բոց չելսի քո սրտից...

Կանչեց Դավիթն ու սլացավ, սուրաց ինչպես հողմ ուժգին,  
Հասավ, կանգնեց իր նժողով Սեղանսարի բարձունքին:  
Նայեց նա ցած. դաշտում փռված Մսրա զորքին թիվ չկար,

Ծածկվել էր դաշտն ընդարձակ՝ վրաններով անհամար:

- Հեյ-հեյ, լսեք, վեր կացեք, վեր,  
Մսրա զորքեր.

Ինչ եք քենել խորունկ էղաբես՝  
Մեռելի պես:

Ելեք, իսկույն գենք կապեցեք,  
Զի՞ թամբեցեք, ելեք հեծեք,  
Հետո չասեք,  
Թե Դավիթը սուրև անխնա  
Քաշեց քսած զորքի վրա:

Գոռաց Դավիթն ամպի նման Սեղանսարի կատարից  
Եվ ահարկու ժուր Կայծակին դուրս քաշելով պատյանից

Դաշտ սլացավ ու շանթի պես ծայթեց Մսրա բանակում:  
- Ինչ եք եկել, բանակ զարկել Սասնա ազատ աշխարհում,-  
Գոչեց Դավիթն ու աջ ու ձախ շանթահարեց իր սրով,  
Դաշտը ներկեց հազարավոր զիւկորների արյունով:

Այն ժամանակ Մսրա զորքից, ճեղքելով ծովն արյունի,  
Եկավ կանգնեց Դավիթ առաջ մի ալեզարդ ծերունի:

- Դավիթ,- ասաց,- զսպիր մի պահ քո բարկությունն ահագին  
Եվ լսիր ինձ, ականջ արա ալեսրիս խոսքերին:

Ինչ են արել քեզ էս մարդիկ, որ կոտորում ես էղաբես,  
Ամեն մեկը մի տան ճրագ, մի տան սյուն է հենց քեզ պես:

Թագավորն է քո թշնամին, կռիվդ նրա հետ արա,  
Նա է պոկել տնից-տեղից ու բերել է մեզ բռնի,

Տվել էստեղ սրի բերան... Զիւկորը ինչ մեղք ունի...

- Ճիշտ ես ասում դու, ծերունի, հավան եմ քո խոսքերին,  
Բայց թագավորն ու՞ր է, ասա, որ սև բերեմ իր օրին:

օրինել  
ալնոր  
արյուն  
մեղք  
ընդարձակ  
բարձունք

## Ասացվածք

Թշնամությունից բարիք չի ծնվում:



## Բառերի գանձատում

- Գտիր ձի, ոստի, սուրալ, լսել բառերի հոմանիշները:
- Ըստք նշանակում է «կայծակ», կարկանդակի նշանակում է «կարկուտով հարվածել՝ ծեծել», «կարկուտի նման հարվածել»: Ինչպես կրացատրես շանթահարել բառը:
- Տան ձրագ նշանակում է «տան, ընտանիքի հոյս, հենարան»: Գտիր այն հատվածը, որտեղ օգտագործվել է այս արտահայտությունը:

## Իմաստունի օրատետրից

### Սասև ծոեր

«Ասանս ծոեր» կամ «Աստոնցի Դամիթր» վիպերգը արեղջիկ է զար հին ժամանակներում: Վիպերգը մեզ է հասել զնորհիվ այն մարդկանց, որոնք միասպահել ու անգիր պարմել են այդ ծափակուն արեղջագործությունը և փոխանցել ուրիշներին: Առանձին հարվածներ նույնիսկ երգել են:

Վիպերգի զիրավոր հերոսը Աստոնցի Դամիթրն է: Վիպերգում պարմվում է ոչ միայն Դամիթր, այլ նաև նրա պապի՝ Ասմասար, հոր՝ մեծ Մհերի, որու՝ միոքը Մհերի կյանքի պարմությունը: Այդ պարմություններից յորսագունչուրը կոչվում է ծյուղ: Խայկական վիպերգն ունի չորս ծյուղ՝ «Ասմասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Աստոնցի Դամիթր» և «Միոքը Մհեր»:

Առանձնահարուկ սիրով են նկարագրված Դամիթր անքաման «օգնականները»՝ զին՝ Քուլկիկ Զալյազին, և սուրբ՝ Թուր Կեծակին (կամ Կայծակին):



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Գտիր և վերընթերցիր այն հատվածները, որտեղ երևում է, որ Դամիթր՝
  - հայրենասեր և ազատասեր է,

**թ) կովի մեջ արդար է ու ազեխվ, անհավասար կոիվ չի սիրում, ուրիշի թուլությունից չի օգտվում,**

**զ) լսում ու հարգում է մեծերի խոսքը, նրանց խորհուրդը:**

**2. Ինչպես կբացատրեն հետևյալ արտահայտությունները՝**

**ա) Մորա զորքին թիվ չկար, թ) արյան ծով:**

**3. Դուռաց Դավիթի ամպի նման նախաղատության մեջ Դավթի գոռոցը համեմատվում է ամպի գոռոցի հետ։ Այդպիսի ուրիշ օրինակներ ել ինքդ գտիր։**

**4. Ինչպես ես հասկանում Դավթի խոսքը՝ ուղղված Մորա զորքին։**

**5. ա) Կարդացածդ հատվածից դու'րս գրիր անձ ցոյց տվող (ով հարցին պատասխանող) 4 հասարակ գոյական։**

**թ) Իր ցոյց տվող (ինչ հարցին պատասխանող) 4 հասարակ գոյական էլ ինքդ գրիր։**



### **Պատմությունների և հեքիաթների զամբյուղ**

**1. «Սասունցի Դավիթ» վիպերգից այլ հատվածներ կարդա և պատմիր։**

**2. Որևէ հեքիաթ կարդա, որտեղ քաջ հերոսը հաղթում է թշնամուն կամ չարին։**




**Խորակը կոշիկների կրունկներին ամրացվող մետաղյա հարմարանքն է, որով ձիավորները խփում են ձիու կողերին, որպեսզի նա տեղից շարժվի։ Ուրեմն ինչ է նշանակում խորակի։**



### **Դադարի պահ**

**Լուծիր զաղտևազիրը և կիմանաս, թե ո՞ր լեզուներով է թարգմանվել «Սասև ծոեր» վիպերգը։**

★ - ե	■ - ր	● - ս
○ - ա	✗ - ու	▼ - պ
◆ - հ	◆ - ե	◆ - ֆ
◆ - ո	▲ - կ	
* - զ	◊ - լ	





## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 2

Ելավ Դավիթն ու ձին հեծավ, քշեց գեաց քամու նման  
Ու կանգ առավ թագավորի մեծ վրանի դեմ հանդիման:

- Մելիք,- գոռաց,- դուրս արի շուտ, կռիվ անենք, զարկենք իրար,  
Ինչ ես ընկել վրանիդ մեջ՝ ծանր, ինչպես ջաղացքար:

Հենց որ Դավթի ձայնը լսեց,  
Սարսափն առավ դև Մելիքին.  
Ու կեղծավոր լեզվին դիմեց,  
Որ նենգաբար խարի կրկին:

- Դավիթ,- ասաց,- արի, նստենք,  
Դեռ հաց ուտենք իմ վրանում,  
Հետո կելնենք, կռիվ կանենք,  
Եթե կռվել ես կամենում:

- Զեմ նստի ես քո սեղանին  
Քեզ հետ, Մելիք, հաց չեմ կիսի,  
Զես կարող ինձ խարել կրկին  
Այդ խոսքերով քո աղվեսի:

Մելիքը որ տեսավ՝ զուր է, ել չի կարող խարել Դավթին,  
Ճարը կտրած՝ իրամայեց դուրս քաշել իր հրեղեն ձին:

Դավիթն հեծավ ձին հրեղեն ու քաշելով թուր Կայծակին,  
Եկավ թափով, որ մի զարկով առնի Մսրա դևի հոգին:  
Փայլատակեց թուր Կայծակին, իջավ թափով ու շեշտակի  
Կիսեց Մսրա նենգ Մելիքին ...

Կանգնեց Դավիթն, ապա հպարտ դարձավ Մսրա զիւկորներին.

- Մեկ ել չգաք դուք մեզ վրա, ոտք չդնեք Սասևա հողին:

Բայց թե որ սիրտ անեք կրկին սուր քաշելու դուք մեզ վրա,  
Սասևա ահեղ թուր Կայծակին, ինչպես այսօր՝ կշռղշողա,



<b>հոգի</b>
<b>խարել</b>
<b>համբուրել</b>
<b>կեղծավոր</b>

Կելնեն ձեր դեմ առյուծասիրտ հազար Միեր և Սանասար,  
Հազար Դավիթ, Քեռի Թորոս կանեն հողին ձեզ հավասար:

## Բամապախոսություններ

Եթե ուժը միաևա արդարության հետ, ինչը կարող է ուժեղ  
լինել այդ միությունից:

Խաղաղությունը և ազատությունը բարիքներից մեծագույնն  
են:

Ժիրոնիկ, ասա՛,  
ինցրեմ, միթե որեւէ ցեղ  
հոգի են վաճառում, և հոգին  
կարեցի՞ է առնել: «Աստինոյի  
Դամիթը» կարդացիս ցեսա  
առնի մարտ դիի հոգին  
արդահայությունը:

Ժիրեն, ինչուիկ,  
մեր լեզվում շատ  
արդահայություններ կան,  
որոնք ողջակի իմաստով  
չենք է հասկանաս: Որանոյի  
ամեն մեկն իր յուրահարուկ  
իմաստն ունի որը պետք է  
հասկանաս ցվյալ հարվածից կամ  
զգնես բառարանում: Կարող ես հարցնել իմաստուներին,  
ինչպես որ հիմն արեցիր:  
հոգին առնել արդահայությունը նշանակում է  
«ապանել»:



## Բառերի գանձատուի

1. Գրիր փայլատակել, զարկել, ապուծասիրտ, գոր, դեմ հաւ-  
դինել, անհամար բառերի հոմանիշները:
2. Նեկազ նշանակում է «խարդախ, խորամանկ»: Օրինակ՝ նեկազ  
թշնամի «խարդախ, խորամանկ թշնամի»: Իսկ ինչ է նշանակում  
նեկազար (նեկազար խարել):
3. Բացատրիր նախադասությունները՝
  - a) Սարսափել առավ դե Մելիքին:
  - b) Հայուն եմք քո խորերին:
4. Էս, էղագես, ջաղացքար բառերը խոսակցական են: Գրիր  
դրաեց գրական ձևերը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Ո՞մ դեմ էր կովի ելել Դավիթը և ինչո՞ւ:
- Ինչո՞ւ են հերոսին Սասունցի Դավիթ անվանում:
- Դավիթը Մելիքին որ կենդանու հետ է համեմատում: Ինչո՞ւ:
- Համեմատիր Դավթին և Մելիքին:
- Կարդացած հատվածում գտիր անձ և իր ցուց տվող գոյականեր և գրիր համապատասխան սյունակում:

անձ ցուց տվող	իր ցուց տվող		
հատուկ	հասարակ	հատուկ	հասարակ



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

- Նկարագրիր, թե ինչպես ես պատկերացնում Սասունցի Դավթին:
- Գտիր «Սասունցի Դավթ» նկարազարդումներից և ներկայացրու դասարանիդ ուշադրությանը: Նկարի մասին կարծիքդ շարադրիր գրավոր:




Փորձիր ինքնուրույն բացատրել, թե կապուտ գրվածներն ինչ են նշանակում:

Բայց թե որ սիրու անեք կրկին սուր քաշելու դուք մեզ վրա: Սասևա ահեղ Թուր Կայծակին, ինչպես այսօր՝ կշողշողա, Կելնեն ձեր դեմ առյուծասիրտ հազար Միեր և Սաևասար, Հազար Դավիթ, Քեռի Թորոս կաևեն հողին ձեզ հախասար:



## Դադարի պահ

Կծիկի թելին հետևելով՝ կարդա իմաստախոսությունները:



# ՄԱՏԵՆԱԴ-ԱՐԱՆ

Մատենադարան բառը կազմված է մատյան և դարան բաղադրիչներից: Մատյան հևում նշանակել է «գիրք», իսկ դարան նշանակում է «պահոց», «պահարան», այսինքն՝ Մատենադարանը գրապահոց է:

Հին ժամանակներում հայերը, ինչպես և այլ ժողովուրդներ, գրքերը գրում էին ձեռքով: Այդ պատճառով էլ դրանք կոչվում են ձեռագիր մատյաններ: Դրանցից շատերը մագաղաթից են: Մագաղաթը հատուկ եղանակով պատրաստում էին հորթի, գառան կամ ովի կաշվից: Մարդիկ կային, որոնք տարբեր հեղինակների գրվածքներն արտագրում էին մագաղաթե թերթերի վրա: Դրանց գրիչներ էին անվանում: Իսկ մատյանները պատկերազարդող նկարիչներին ծաղկող էին անվանում: Հետո ուրիշ վարպետներ մագաղաթները միացնում էին, կազմում ու գիրք դարձնում:

Հայերեն հազարավոր ձեռագիր մատյաններ այժմ պահպում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում: Այդ պատճառով էլ այն հաճախ կոչում են ձեռագրատուն:

Ձեռագրերից շուրջ 14 հազարը հայերեն են, 2800-ը՝ օտար լեզուներով: Սրանց մեջ կան արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն և այլ լեզուներով մատյաններ: Դրանք վերաբերում են



որոնք տարբեր հեղինակների գրվածքներն արտագրում էին մագաղաթե թերթերի վրա: Դրանց գրիչներ էին անվանում: Իսկ մատյանները պատկերազարդող նկարիչներին ծաղկող էին անվանում: Հետո ուրիշ վարպետներ մագաղաթները միացնում էին, կազմում ու գիրք դարձնում:

**մատյան  
Մատենադարան  
ժողովուրդ  
գրվածք  
աշխարհագրություն  
մաթեմատիկա  
հայրանակ**

գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների՝ պատմություն, գրականություն, քերականություն, աշխարհագրություն, փիլիսոփայություն, բժշկություն, իրավունք, մաթեմատիկա, տիեզերագիտություն և այլն:



### Մատենադարանում պահվող

ձեռագրերից յուրաքանչյուրը մարդկանց պես իր կենսագրությունն ունի: Պատմում են, որ գերի ընկած ձեռագրերի համար հայերը երբեմն գյուղեցյուղ, տնետուն ընկած փող են հավաքել, վճարել ու ձեռագիրն օտար ափերից տուն բերել: Հայ մարդիկ երբեմն իրենց կյանքի գնով են փրկել ձեռագրերը:

Բազում վտանգների միջով են անցել ձեռագրերը, մարդկանց նման գերի տարվել և իրից ու սրից փրկվելով՝ եկել, մեզ են հասել: Դրանք հայ ժողովրդի տառապանքների ու հաղթանակների, նրա ազատասեր ու ստեղծագործ ոգու վկաներն են:



Հանելուկ  
Հրաշք դաշտ է, ցանկած դաշտ է,  
Երեկ, այսօր, դարեր առաջ,  
Բայց ամեն օր մեզ է տալիս  
Բարիքները իր ամբարած:

### Բմասպախոսություն

Այն տունը, որտեղ գրքեր չկան, նման է հոգուց զրկված մարմնի:



Այս երեխ նկարեցիր որ մեզ ծանոթ մարդուն բառն՝  
այսպեղ գործածվել է ուրիշ իմաստով: Նեյն՝ հեռով  
նշանակում էր «գիրք»: Ամեջի ուշ այդ բառով  
սկսեցին անվանել մաքոր թերթեր ունեցող այն գիրքը,  
որի մեզ զանապան բաներ են գրում: Այսպեղից էլ՝  
բոլորին ժագ ծանոթ դպրոցական մարդանք կամ զասա  
մարդանք:

Ժիղեմնիկ



## Բառերի գանձատուփ

1. Ինչ է նշանակում կյանքի գևով բառակապակցությունը:
2. Փող ելի հավաքել, վճարել ու ձեռագիրն օտար ափերից տուն բերել նախադասության մեջ ինչ նշանակությամբ է գործածվել տուն բառը:
3. Տեքստից դուքս գրիր գիտություն անվանող բառերը: Նրանց մեծ մասն ինչ ընդհանուր բաղադրիչ ունի:
4. Հորր, գառ, ուլ, որն է սրանց ընդհանուր իմաստը:
5. Խոյըքի բառին տեքստի ո՞ր բառն է կազմությամբ նման: Նույն ածանցով բառեր ասա:
6. Տեքստի նախավերջին հատվածում գտի՛ր այն բառերը, որոնք կազմվել են արմատի կրկնությամբ: Նման 1-2 բառ էլ ինքդ ասա:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հնում մարդիկ ինչի՞ն վրա էին գրում:
2. Ինչից էին պատրաստում մազաղաթը:
3. Մարդիկ առաջ ինչպես էին անվանում գրքերը:
4. Մատենադարանն ինչու՞ են անվանում նաև ձեռագրատուն:
5. Ինչպիսի «կենսագրություն» ունեն Մատենադարանում պահպող ձեռագրերը: Պատմի՛ր այդ մասին:
6. Տեքստում ինչ հատուկ գոյականներ կան:
7. Ծարունակի՛ր ըստ նմուշի:

Մարդիկ - մարդկանց, տղամարդիկ - ..... , կին - ..... , ոգի - ոգու, որդի - ..... , այգի - ..... :



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Մատենադարանի մասին տեղեկություններ հավաքիր և մի փոքրիկ գեկուցում պատրաստիր:
2. Պատմի՛ր քո դպրոցի գրադարանի մասին: Ինչ գրքեր ես սիրում կարդալ:

## Արեգի Գիրունիկ

Մարտենաղարսանի մասին պիոֆիրիկ պեղուսում պիպի պարագարեմ: Պայում եմ այն հետաքրքրական դարձնել: Ինչ կարող ես օգնել: Նախաստես հայրնում եմ շնորհակալություն:

ինչուրիկ

## Արեգի բարեկամ

Բեզ եմ ուղարկում Երևանի Մարտենաղարսանի «ամենա-ամենաներից» մի ժամկ ընդեկություն: Մարտենաղարսանում պահվող ամենահին շեռագիր մարյանը վեհամոր Ամենաղարսանը գրվել է VII դարում:

Մարտենաղարսանի ամենամեծ

շեռագիր մարյանը կշռում է 27.5 կգ և ունի շորզ 600 թերթ. որոնցից յորսափանցյառը պայուսակված է մեկ հորթի կաղվիկ:

Ամենափոքր շեռագիրը լուսկու պուտի չափ է, կշռում է ընդամենը 19 գրամ: Նրա թերթերը պայուսակված են նորածին մեկ ուի կաղվիկ:

Ամենաշաք շեռագիր Մարտենաղարսանին նվիրել է հարություն հայությանը (Այս չորժիկ). շորզ 400 մարյան: Ծղմեկուսիկ է, չէ՞:

Ինչուրիկ զան, վարսի եմ, որ մնացած զու ինքդ հազորությամբ կանեմ:

Գիրունիկ



## Դադարի պահ

Մատենաղարանի մուտքի առջև կանգնեցված են հայ նշանավոր գործիչների արձաններ: Ըստ գույների կարդանաց անունները և որոշիր, թե ովքե՞ր են:



Միհրան

Զոհ

Տիգրան

Մովսես

Ահամինական առաջնական գործիչներ

մաթեմատիկոս

առակագիր պատմիչ

բանասեր



## ԽԱՉ-ՔԱՐ

Տատասկերի, քարերի մեջ  
Քամիների, արևի մեջ,  
Զյուների մեջ, շոգ ու տորթի,  
Այսպես խոնարի, այսպես ըմբոստ,  
Այսպես փիխրուն, այսպես շիտակ,  
Այսպես խրթին ու այսպես պարզ  
Կանգնել է ևա երկեքի տակ ...  
Կանգնել է ևա արևի դեմ,  
Որպես թախիծ ու խղճի սյուն,  
Կանգնել է ևա դարերի դեմ,  
Որպես խաչված գեղեցկություն ...



**խոնարի  
խրթին  
խղճ  
ըմբոստ**

### Բանապահութեան

Հայրենիքի հողն ու ջուրն անուշ են:



#### Արեգի՝ Գիրեմնիկ

Պրոշել եմ բացարական բառարան պահել ու այն-  
չեղ գրել ինչ անձանոթ բառերի բացարրությունը:  
Նյու փոքրիկ բանապեղ ծությունից դուրս գրեսք  
չորս բառ՝ «անհնապանդ ապարամ»,

«քարդ հասկանազու համար դժվարին»,  
«ուղիղ ճիշդ ճշմարիկ արդարամիկ»,  
«ազնիվ», «աիշով խոպաքույս»: Հավ եմ  
անում. չէ: Գրիք գո կարծիքն ինչ համար կարենք է:  
ինչուիկ



#### Արեգի՝ ինչուիկ

Օգրակար գործ ես սկսեց: Երկու բան սվերացնեմ միայն.  
Բառը հաճախ եենց «արուշ» նշանակությամբ էլ գործածում են,  
չնայած ունենք նաև բառակապակցությունը:  
Իսկ բառը կարող է դրվել զար բառերի հետ, օրինակ՝  
միշտ առ և այլն:

Գիրեմնիկ



## Բառերի գանձատուփ

- Գրիր բամի, թախիծ, խոևարի և դեմ բառերի հոմանիշները:
- Բանաստեղծության միևնույն տողի մեջ հոմանիշ բառերի մի զույգ գտիր:
- Բանաստեղծության միևնույն տողի մեջ հականիշ բառերի մի զույգ գտիր:
- Բանաստեղծությունից դուքս գրիր հատկանիշ ցուց տվող այն բառերը, որոնցով կարելի է բնութագրել նաև մարդկանց:
- Երկուական բան կազմիր՝ բար արմատը գործածելով բառակզբում և բառավերջում:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Հայտ բանաստեղծության ինչպիսին է խաչքարը:
- Ինչքարը բնութագրող երկու բառ ել դու' ավելացրու:
- Դուքս գրիր բնության երևոյթներ և վիճակներ ցուց տվող բառերը: Քո կարծիքով որանք ինչո՞ւ են գործածվել:
- Բանաստեղծությունն ինչպիսի տրամադրություն է առաջցնում ուրախ, թախծոն, թե՛ ըմբոս:
- Խիղճ - խղճի, երկինք - երկնքի ձևերի նմանությամբ գրիր երկիր, ձեռագիր, միտք, սիրու բառերի զույգերը:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

- Խաչքարերի մասին հետաքրքրական տեղեկություններ հավաքիր և ներկայացրու' գրավոր:
- Նկարագրիր քո տեսած խաչքարերից մեկը:



## Դադարի պահ

Կարդա՛ և որոշի՛ր, թե յուրաքանչյուր շարքում ո՞ր բառն է ավելորդ և ինչո՞ւ:

Ժամանակակից

Խաչքարերական

Համարական

Արթուրոս




## Իմաստունի օրատետրից

### Խաչքար

Խաչքարը հայկական մշակույթի յորորինակ զանշերից է: Առաջին խաչքարերը երևացել են մելանիկ շուրջ հապար երկու հարյուր տասնի տասդարձ:

Խաչքարեր կարեի է տեսնել հին բնակավայրերում, գերեզմանոցներում, աղբյուրների և կամորգների մոտ, վանքերում, եկեղեցերների պարագնում: Որանք կանգնեցվել են պարբեր իրադարձությունների կապակցությամբ՝ զինարարության ավարտի հաղթանակի, մահվան: Մեր օրերում խաչքարը նաև հուշադրյուր է, զարդակորոշ:

Խաչքարի վրա խաչն է մեր երկրի խորհրդանշաններով՝ խաղողի պոնկ և ողկույզ, նոն, արև և այլն: Որանք կարծես ասեղնազործված լինեն. այնքան ն նրբակյուն են և անքերի:




Վարդգես Պետրոսյան

### ՕՇԱԿԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹ-ՑՈՒՆ 1

Եթեաստանից մի լրագրող էր Եկել: Միասին Օշական Եինք գևացել՝ Մաշտոցի շիրիմը տեսնելու: Երբ դուրս Եկանք Եկեղեցուց, իմ լեհ հյուրն ասաց.

- Քաղցած եմ:
- Գյուղում ռեստորան չկա, քանի քանի ինք բոպե պիտի համբերես, կիասնենք Երևան:
- Ուզում եմ այստեղ մի քիչ թափառենք փողոցներում, գերեզմանատուն գևանք, խաղողի այգիներ:

- Ուրեմն պիտի սոված մեաս:
- Չեմ կարող եթե մայրս Վարշավայում իմանա, որ ես ժամը երեքին դեռ բան չեմ կերել, վաղը Երևան կգա: Մտիր որևէ տուն,



գոնե հաց ու պանիր առ, քայլելով կուտեեք:

Եվ հանկարծ... Ես հացի հոտ առա: Գյուղում նոր թխած հացի հոտը հրավիրատոմս է:

Ահա երեսունինգ-քառասուն տարեկան մի կին կարմրատակած կախվել էր թոնրի վրա: Կողքին նստած էր տասներկու տարեկան մի աղջիկ:

- Բարև, քույրիկ,- ասացի:  
- Բարև, ախաբեր ջան,- կինը նայեց ինձ հազար տարվա ծանոթի պես:

Ես քացատրեցի, թե ինչո՞ւ եմ եկել, ասացի, որ հետո հյուր կաօտար երկրից, մի խոսքով՝ խնդրեցի մի քանի հաց ու, եթե կա, մի կտոր պանիր: Հետո էլ չամաչեցի ու ավելացրի.

- Ինչ որ պետք է, կտանք, քույրիկ ջան:

Կինն ինձ ոչինչ չպատասխանեց, այլ դարձավ աղջկան.

- Հասմիկ, տատիկին կանչի, մի թռի', շու'տ...

Աղջիկը թռավ, իսկ մեկ-երկու րոպե անց երևաց տատիկը՝ բարի դեմքով մի պառավ:

- Ներս կանչիր հյուրիդ, ախաբեր ջան,- ասաց կինը՝ թոնրի մոտից վեր կենալով:



որևէ  
հանկարծ  
խնդրել  
երեսունինգ  
տասներկու



Ափ անեմ,  
Ծափ անեմ,  
Տաք քարին  
Ծըմփ անեմ:



### Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր հոտ, խնդրել, հանկարծ բառերի հոմանիշները:
2. Գրի՛ր գալ, վաղը, քաղցած, վերջ, բարի, տալ բառերի հականիշները:
3. Բացատրի՛ր հազար տարվա ծանոթ բառակապակցությունը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեղինակը լեի հյուրին ինչո՞ւ էր Օշական տարել:
- 2.Տեքստում տարվա ո՞ր եղանակն է նկարագրվում:
- 3.Գյուղի փողոցներն ինչո՞ւ են համարյա դատարկ:
- 4.Տեքստում հայկական ինչ դիմելածներ են գործածվել: Մեկներկուսն էլ դո՞ւ ավելացրու:
- 5.Եթե արտասահմանից հյուր ունենաք, նրան ո՞ր կտանեք:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

- 1.Քո քևակավայրի մարդիկ հյուրասնը են: Պատմիր:
- 2.Մի հեքիաթ պատմիր, որտեղ բարի պառավ լինի:



## Լեզվաբանի դասը

### Գոյականի թիվը

Գոյականները լինում են եզակի և հոգևակի:

Եզակի գոյականները ցույց են տալիս մեկ առարկա: Օրինակ՝ երգ, ձուկ, ծաղիկ, երեխա:

Հոգևակի գոյականները ցույց են տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ: Օրինակ՝ երգեր, ձկներ, ծաղիկներ, երեխաներ:

Հոգևակի թիվը կազմվում է -եր և -ներ վերջավորություններով:

Միավանկ գոյականների հոգևակի թիվը կազմվում է -եր վերջավորությամբ: Օրինակ՝ վարդ - վարդեր, ծառ - ծառեր, ձի - ձիեր, տուն - տներ, գիրք - գրքեր:

Բացառություն են մարդ և կիև գոյականները՝ մարդ - մարդիկ, կիև - կանայք:

Զուկ, մուկ, բեռ, լեռ, դոր, գառ, եզ, թոռ, ծոռ, ծուկ, նոր, ոռոս միավանկ բառերի հոգևակին կազմվում է -ներ վերջավորությամբ՝ ձկներ, մկներ, բեռներ, լեռներ, դոռներ, գառներ, եզներ, թոռներ, ծոռներ, ծուկներ, նորներ, ոռոսներ:

Բազմավանկ գոյականների հոգևակի թիվը կազմվում է -ներ վերջավորությամբ: Օրինակ՝ փաթիլ-փաթիլներ, աստղիկ-աստղիկներ, բուշուն-բուշուններ :



## ՕԾԿԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԵՆԿԱԼՈՒԹ-ՅՈՒՆ 2

Ես ձայն տվեցի լեի հյուրիս՝ Վոյտեկին. Մտածեցի, որ նրա համար հետաքրքիր կլինի: Իրոք, հետաքրքրեց: Երեխայի պես. բերանը բաց, և այսում էր կարմրած թուրին, հետո՝ կարմրող տատիկին, հետո՝ լավաշներին, որ ծովափին մերկացած մարդկանց պես կարծես արևի լոգանք էին ընդունում:

Տանտիրուիին քիչ անց դուրս եկավ կողքի սենյակից:

- Ներս մտեք, ախատե՛ք ջան,- ասաց ևա ինձ,- հայերեն գիտի հյուրը...

- Չե,- ասացի ես,- իրենց երկրում հայերեն չեն անցնում:

- Յա՛,- զարմացավ կինը:


Ներս մտանք: Գյուղական համեստ մի տուն էր: Սեղանին թռու էր դրած, հաց, պանիր, կարագ, մածուն, մուրաբա, լոբի: Վոյտեկը զարմացած նայում էր ինձ:

- Ուտենք, - ասացի:

Զգիտեմ, ամեն ինչ համրվ էր, թե՞ մենք էինք շատ քաղցած: Ինքնամոռացության մեջ ուտում էինք, երբ քակից տղամարդու ձայն լսեցի, ու ձայնն անմիջապես ներս մտավ: Քառասունին մոտ տղամարդ էր:

- Բարով եք եկել,- ասաց նա՝ ձեռքը մեկնելով,- միսը տվի, իիմի կրակին կղնեն:

Մի խոսքով՝ քիչ անց մեր կողքին թշում էր մաճառը, իսկ սեղանին էլ տեղ ու դադար չկար: Վոյտեկն ուտում էր, խմում և մեկ-մեկ զենող հայացքով նայում ինձ, հետո՝ տանտիրոջը:



**կարագ  
նախօրոք  
թ22ալ  
օդանավակայան  
խարել**

Երևան հասանք, երբ արդեն գիշեր էր:  
Ամբողջ ճանապարհին Վոյտեկը պնդում  
էր, որ տանտերերն ինձ ճանաչում են, որ  
ես նրանց հետ նախօրոք պայմանավորվել  
եի: Ես սկզբում ուշադրություն չեի դարձնում,  
բայց նա նոյնը պընդեց նաև հաջորդ  
առավոտ: Նոյնիսկ օդանավակայանում, երբ ես ճանապարհում  
եի նրան, ասաց.

- Էավ խարեցիր, հայ, Օշականում...

## **Առած-ասացվածքներ**

**Աղու հաց, սիրտը բաց:**

**Հյուրը տանտիրոջ վարդն է:**



### **Բառերի գանձատուփ**

1. Գրի՞ր գիշեր, հաջորդ և հետաքրքիր բառերի հականիշները:
2. Հետևյալ անուններից -ացի, -եցի, -ցի վերջածանցներով  
բառեր կազմիր.

Օշական, Եղիշեածին, Գորիս, Լոռի, Գավառ, Տավուշ, Կյումրի,  
Ջերմուկ, Կոտայք, Մեղրի, Հանաձոր, Համա:

3. Դու գործածում ես ախովեր, հայ, յու, եխմի բառերը: Եթե այս,  
ապա նր և որտեղ:

4. Ինչ են նշանակում վեր կենալ, ձայն տալ, բերաել բաց:



### **Հարցերի և առաջադրանքների արկողիկ**

1. Բնութագրի՛ր հեղինակին, լրագրողին և նրանց հյուրընկալող  
հայ գյուղացիներին:
2. Տանտերերն ինչ հյուրասիրեցին անակնեալ հյուրերին:
3. Կարդացածիդ մեջ քեզ ինչը դուր եկավ, իսկ ինչը դուր չեկավ:  
Ինչո՞ւ:
4. Քո կարծիքով փոքրիկ աղջիկը հյուրերի հետ սեղան նստեց:
5. Քո կարծիքով այս պատմությունն իրական է, թե՞ հեղինակը  
հորինել է:



## Պատմությունների և գրուցների զամբյուղ

1. Դոք անակնեալ հյուր (կամ հյուրեր) ունեցել եք: Համառոտ գրիր այդ մասին:

2. Ո՞ր ընկերոջդ կամ ընկերուհուդ տանը հյուրընկալվելիս ես քեզ շատ լավ զգացել: Պատմիր այդ մասին:

### Իմաստունի օրատետրից

#### Մածուն

Մածունի հայրենիքը համարվում է հայկական լեռնաշխարհը:

Մածունի գյուղը հապատամյակներ առաջ պարսիստար է արվել, եթե կաթը վերափոխվել է «քրու կաթի»: Մածունի: Այսօր էլ մածուն արանազու կամ մերեցու եղանակը նույնն է մնացել:

Եռապատճ (30-35 ասդիման) կաթի մեջ միշ գանակությամբ թթված մածուն խառնեցով՝ մակարդում են կաթը: Խարկացես 5-6 օրական մածունը հրաշայի դեղամիջոցով է աղեստամոֆասին հիվանդությունների, թունավորումների, այրվածքների, խոցերի և ոսուցների դեմ: Այն պարկերավոր անվանում են «ասպիրինին կերպուր»:



### Տատիկի խորիուրդները

Վիոգրիկս, հյուրընկապությունը մեր ժողովրդի գեղեցիկ հայկանիշներից մեջն է:

Դու էլ աշխատիր պահել հյուրափրության հայկական ախանդութները:

Բայց պրով ու ժայիրով ընդունիր քո ցուն եկող հյուրին, զեմի ու հոգապար եղիր նրա նկարմամբ: Անկեղծ պրով նրա հետ կրիմ այն, ինչ ունես: Իրշիր, կարևոր ոչ թե սեղանի լիությունն է, այլ կանոքիրով պրապարապությունը:





## ԱՐՍՎԱԾԻ ԱՆՔՅՈՒՐՆԵՐԸ

Որտեղից են աշխարհ գալիս  
Աղբյուրները զրնգալից,  
Գառների պես ժիր ու կայտառ  
Ցատկոտում են ժայռերն ի վար,  
Խոսք են բացում խոտերի հետ,  
Ցողում ձամփան խայտաբղետ,  
Ծիլ ու ծաղկին՝ տապից այրվող,  
Նվիրում են կենարար ցող:  
Կարկաչում ու գալարվում են,  
Լանջերն ի վար գլորվում են,  
Շարավները մարում մարդկանց,  
Ծիծաղում են ձայնով մանկան  
Աղբյուր կոչվող զանգակները՝  
Արագածի զավակները:

**աշխարհ  
աղբյուր**



### Հանելուկներ

Գիշեր-ցերեկ  
Աևվերջ հոսում,  
Գիտի երգել,  
Բայց չի խոսում:  
  
Ծոգից թև առավ,  
Երկինք բարձրացավ,  
Դարձավ ձյուն, անձրև,  
Կրկին հետ դարձավ:  
Յրտին մերմակած  
Վերմակ է բացում,  
Ծոգին ծարաված  
Ծուրթեր է բացում:

### Շոածներ

Որ աղբյուրից մարդ ցուր խմի,  
այն աղբյուրին քար չի գցի:

Աղբյուրը որ կեղտոտես, ցուր  
որտեղից պիտի խմես:

### Օրինանք

Զրի նման երկար կյանք ունենաս:

## Արեգի Ջիրեանիկ



Բանաստեղծության մեջ ինչ հերաքրքրեց կենացը՝  
շող բառակապակցությունը: Բառանքը բացեցի և իմացա  
որ կենացը նշանակում է «կյանք կենդանություն լիվոյ»:  
Այսուղի հենց այդպես է. յոզք կյանք է պայիս կիսիչ արեկի  
այրվող ծիլ ու ծաղկին: Ջիրեան, թե ինչ լավ է. այսօր նոր  
բառ սովորեցի:

ինչուիք



### Բառերի գանձատուիք

1. Բանաստեղծության մեկ տողի մեջ հոմանիշ բառեր կան:  
Գտիր դրանք:

2. Հոմանիշ բառերը դեմ դիմաց գրիր:

զավակ	գույնզգույն
խայտարդես	շոգ
տապ	առուց
կայտառ	թռչկոտել
ցատկոտել	որդի

3. Կարդա բանաստեղծությունը և որոշիր, թե ինչ են նշանակում  
աշխարհի գալ և խոսք բացել բառակապակցությունները:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ աղբյուրներն ինչերի հետ են  
համեմատվում:

2. Իրենց ծանապարհին աղբյուրներն ինչ հանդիպումներ են  
ունենում:

3. Աղբյուրներն ինչպես են ծիծաղում:

4. Բանաստեղծության մեջ գտի՞ր հոգևակի գոյականները և  
լրացրու՛ աղյուսակը:

Եր վերջավորությամբ բառեր

Ներ վերջավորությամբ բառեր



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

- Արագածի մասին ինչ կարող ես պատմել:
- Հրաշք աղբյուրի մասին մի հեքիաթ հորինիր:



### Իմաստունի օրատետրից

#### Արագած

Արագածը հայաստանի հանրապետության ամենաբարձր լեռն է (4095մ). Խայկական լեռնաշխարհում՝ չեղ մեծ պարսպ է պատկենում:

Արագածից են սկիզբ առնում Արագած, Ամբերդ, Մանթաշ, Գեղարուր, Շաղկահովիր և այլ գետակներ: Կան 100-ից ավելի լեռներ: Դրանցից ամենաբարձրը Բարի լիճն է, որը գտնվում է լեռան հարավային լանջին, 3200մ բարձրության վրա: Չորր պարզ է, մաֆուր, սնվում է ջնիալիք գրեթե, ինչպես նաև արորդեալնա աղբյուրներից:



Արագածը հարուստ է պարմական հուշարձաններով: Խարավային լանջին է գտնվում Ամբերդ ամրոցը: Խնագույն քնակավայրերից է Բյուրականը, որտեղ գտնվում է Բյուրականի աշխարհական ասրդաղինարանը:



#### Դադարի պահ

Ըստ գույների բառակապակցություններ կազմիր ծիլ ու ծաղիկ կապակցության օրինակով:

**ծառ ու**



**թռիփ**

**հաց ու**

**ծաղիկ**

**պանիր**






## ՓՈ-ՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ 1

Մի անգամ հսպանիայից դեպի Խտալիա ճանապարհվեց ֆրանսիական մի շոգենավ, որի վրա կային ֆրանսիացիներ, խտալացիներ, իսպանացիներ: Ուղևորների ամբոխի մեջ կարելի էր նկատել միայնակ, վատ հագնված տասնմեկամյա մի տղայի, որը վայրի գազանիկի նման մի կողմ էր քաշվել և մռայլ նայում էր շուրջբոլորը: Զարմանալի չէր, որ նա այդպես մռայլ էր նայում:

Երկու տարի առաջ նրա հայրն ու մայրը՝ ծայրաստիճան աղքատ գյուղացիներ, նրան հանձնել էին թափառաշրջիկ կրկեսի տիրոջը: Տերը, ծեծելով ու կիսաքաղց պահելով տղային, սկզբում սովորեցրեց զանազան աճպարարություններ, իսկ հետո տարավ ֆրանսիա և իսպանիա՝ շարունակելով ծեծել և երբեք կուշտ չկերակրելով նրան: Երբ տեսավ, որ այլևս հեարավոր չէ դիմանալ քաղցին ու ծեծին, քաղաք հասնելուն պես տղան ողորմելի վիճակում փախավ իրեն ճնշողից և ներկայացավ խտալական դեսպանին՝ օգևություն խնդրելու:

Տղայի պատմությունից ու տեսքից ազդված՝ դեսպանը երեխային նստեցրեց Խտալիա մեկնող շոգենավ և ձեռքը տվեց մի նամակ՝ ուղղված ոստիկանության պետին: Սա երեխային պետք է հանձներ ծնողներին: Սոսկալի նիհար այդ խեղճ տղան ցեցուիների մեջ էր: Նրան մահճակալ հատկացրին ըստիանուր նավա-



**ուղևոր  
հարցուփորձ  
թախծուտ  
կցկտուր**

սենյակում: Ուղևորները նայում էին նրան մեծ հետաքրքրությամբ, ոմանք փորձում էին հարցուփորձ անել, բայց նա չէր պատասխանում և կարծես արհամարհում ու ատում էր բոլորին. զրկանքներն ու ծեծն էին նրան այդ պես ընկճված ու թախծուտ դարձրել: Չնայած դրան՝ ուղևորներից երեքին հաջողվեց հարկադրել, որ նա խռով տղան կցկտուր պատմեց իր պատմությունը:

Թեպետ և այդ երեք ճանապարհորդներն իտալացիներ չէին, բայց հասկացան նրան և մասամբ խղճահարությունից, մասամբ էլ նրանից, որ գինին նրանց տրամադրությունը բարձրացրել էր, տղային մի քանի մետաղադրամ տվեցին: Նրանք կատակում ու իրահրում էին տղային, որ էլի քաներ պատմի: Եվ քանի որ այդ ժամանակ նրանց էին մոտեցել ուրիշ ուղևորներ ևս, իրենց առատաձեռն ցույց տալու համար նրանք զրնգոցով նորից սեղանին էին նետում դրամներ՝ ասելով. «Ահա, վերցրո՛»: Տղան վերցնում ու գրպանն էր դևում դրամները՝ կիսածայն շնորհակալություն ասելով: Նա շարունակում էր զուսպ մնալ, և միայն աչքերն էին պայծառացել ջերմ ժահիտից» Ապա նա բարձրացավ իր մահճակալին, վարագույրը քաշեց ու լոեց. Միտք էր անում, թե ինչ պետք է անի այդ դրամը:

## **Բանապահություն**

*Օտար երկիրը հայրենիք չի դառնա:*



### **Բառերի գանձատուփ**

1. Ցեցուի, ընկճվել, ազդվել, ածպարարություն բառերը բաց թողնված որ տեղերում պիտի գրվեն:

ա) Երբ մեկը որևէ դեպքից կամ պատմությունից հուզվում է, ասում են ..... է:

բ) Տեսել ես, թե մարդիկ ինչպես են ձեռքերի արագ շարժումներով զանազան ծարպիկ և անհավատալի հեարքներ ցույց տալիս: Դա ..... է:

**զ) Մաշված, պատառութված հագուստը ..... են անվանում:**

**դ) Երբ որևէ մեկը հոգսերից խեղճացած կամ հուահատված է, ասում են՝ ..... է:**

**2. Ըստրիր և դեմ դիմաց գրիր հոմանիշ բառերը:**

իրակրից	տխուր
համապատասխան	խոշոր, հսկայական
բայցնուս	խոժոռ
մեռ	գրգռել, դրդել
մասը	ստիպել, պարտադրել

**3. Ուստի նախածանցով բառեր կազմիր:**

**Նմուշ՝ միտքուուր:**

**4. Ծարունակիր՝ բառերն ընտրելով տեքստում կապույտ գրվածներից: Ուշադրություն դարձրու դրանց արտասանությանը և գորությանը:**

**Նմուշ՝ պատճենական հայրենականություն, օնևառապարհիքի (ը-ից հետո չ է գրվում, որը թույլ է արտասանվում):**

**ա) առանձի, ..... թ) կիրառում ..... զ) բարձրացնելի .....:**

**5. Կրկեսի տիրոջը բնութագրելու համար գրիր հատկանիշ ցուց տվող երկու բառ և գործողություն ցուց տվող երկու բառ:**

**Նմուշ՝ (ինչպիսի) ..... մասը, որը (ինչ էր անում) .....**



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

**1. Ո՞րն էր տղայի հայրենիքը: Ինչից իմացար:**

**2. Ի՞նչ ազգերի ներկայացուցիչներ էին շոգենավի ուղևորները:**

**3. Նավի վրա տղան ինչո՞ւ էր մոայլ:**

**4. Տղան ո՞ր երկրներում էր եղել:**

**5. Ծոգենավ նստելու համար ո՞վ օգնեց տղային:**



### **Պատմությունների և գրույցների զամբյուղ**

**1. Երբնէ ճամփորդել ես, պատմիր:**

**2. Մի պատմություն հորինիր «Երբ ես նավապետ էի» կամ «Կախարդական գորգի վրա» վերնագրով:**

## Գոյականի ձևային փոփոխությունները

Գոյականները նախադասության մեջ տարբեր ձևափոխությունների են ենթարկվում: Այսպես:

Հայտառակից հայերի հայրենիքն է:

Հայտառակի մայրաքաղաքը Երևանն է:

Հայտառակին է կրտսել իմ սիրով:

Հայտառակից աշխարհի տարբեր երկրներ հակացին ջոր է արտահանվում:

Հայտառակով է անցել նշանակոր ճանապարհորդի ծամեխան:

Հայտառակոմ ապրում են հայեր, եղիներ, ոռաներ, ասորիներ, հոգելեր:

Այդ ձևերից յորաքանչյորը տարբեր դեր ունի նախադասության մեջ և տարբեր հարցերի է պատասխանում:



Եղմոնդո դե Ամիչիս

## ՓՈ-ՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ 2

Ամբողջ երկու տարի նա կուշտ հաց չէր կերել, իսկ այժմ շոգենավի վրա կարող էր կշտացնող մի կերակուր ուտել: Հետո, երբ հայրենիքում ափ իջներ, կազատվեր ցնցոտիներից ու նոր հագուստ կգներ: Եվ վերջապես, երբ այդքան փող տաներ տուն, հայրն ու մայրը թերևս այնքան խիստ չեին դիմավորի նրան, որքան եթե նա դատարկ գրապանով հայտնվեր: Ստացած փողը նրա համար մի ամբողջ կարողություն էր: Մինչ նա խորհում էր այդ մասին ու մի քիչ միսիթարված զգում իր դառն ճակատագրի համար, այն երեք ուղևորները, նավասենյակի ճաշասեղանի շուրջը նստած, շարունակում էին զրուցել: Նրանք գինի էին խմում ու խոսում իրենց ճամփորդություններից, այն երկրներից, որտեղ եղել էին և խոսքից խոսք անցնելով՝ հասան հտալիային:



Մեկն սկսեց գաևատվել Նրա հյուրանոցներից, մյուսը՝ երկաթգծից, իսկ հետո բոլորը միասին տաքացան ու սկսեցին հայիոյել մնացած ամեն ինչը: Մեկն ասաց, թե գերադասում է ճամփորդել ուրիշ երկրներում, մյուսը հայտարարեց, թե իտալիայում հանդիպել է միայն խաբերաների ու ավազակների, երրորդն ավելացրեց, թե իտալացի ծառայողներն անգրագետ են:

- Անկիրը ժողովուրդ է,- հաստատեց առաջինը:
- Կեղտոտ,- ավելացրեց երրորդը:

Դը:

- Գո...,- բացականչեց երրորդը: Նա ուզում էր ասել «գողեր են», բայց չհասցրեց խոսք ավարտել. մետաղադրամների կարկուտ թափվեց զրուցակիցների գլուխներին և ուսերին: Զրեզոցով սեղանին դիպչելով՝ դրամները ցած գլորվեցին: Երեքը զայրացած վեր թռան տեղներից, նայեցին վերև և մի բուռ դրամ ուղիղ երեսներին ստացան:

- Ես վերցրեք ձեր փողերը,- արհամարհանքով ասաց տղան՝ ցած կախվելով վարագույրի հետևից,- ես ողորմություն չեմ վերցնում Նրանցից, ովքեր վատարանում են իմ հայրենիքը:

**իջևել**  
**ճամփորդություն**  
**խաբերա**  
**արհամարհանք**

## Բամարտախոտություն

Նետերը խոցում են մարմինը. իսկ չար խոսքերը՝ հոգին:



## Բառերի գանձատուփ

1. Կարողություն ևշանակում է «որեւէ բան անելու ուժ, հեարավորություն» և «հարստություն»: Բառը պատմվածքի մեջ որի իմաստով է գործածվել (Անտառած փողը նրա համար մի ամբողջ կարողություն էր):

2. Ըստրիր և դեմ դիմաց գրիր հոմանիշ բառերը:

գանգատութել	չարախոսել, բամբասել, անարգել
դիացել	վերջացնել
վատարանել	կացել, զարկվել
զայրանալ	բարկանալ, ջղայնանալ
ավարտել	դժգոհել, բողոքել

3. Փորձիր բացատրել մետաղադրամների կարկուտ և առաջարկ գրպանով արտահայտությունները:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ինչպես կգնահատես տղայի արարքը: Իսկ դու՛ ինչպես կվարվեիր, եթե նրա տեղում լինեիր:

2. Տեքստից դու՛րս գրիր իտալացի տղային բնութագրող 4-5 բառ կամ արտահայտություն:

3. Տղային ինչպես ես պատկերացնում. Նկարագրիր:

4. Ինչ ես կարծում, հեղինակն ինչպես է վերաբերվում տղային և նրա արարքին:

5. Տեքստը բաժանիր մասերի և դրանք վերևագրիր:

6. Գրի՛ր գիծ, գլուխ, երկիր, ժայռագոյն: գոյականների՝ ինչի՞ հարցին պատասխանող ձևերը:

Նմուշ՝ ձեռագիր - (ինչի՞) ձեռագույն:



## Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Ընկերներիդ հետ քննարկիր դեսպանի և երեք ճանապարհորդների արարքները: Էսիր ընկերներիդ և հայտնիր քո կարծիքը:

2. Պատմության համար ուրիշ ավարտ մտածիր:

## ԱԽ, ԲՆՉ ԼԱՎ ԵՆ ՄԵՐԻ ՎՐԱ...

Ախ, ինչ լավ են սարի վրա  
Անցնում օրերն անուշ, անուշ,  
Ակրծային, թեթևանափ,  
Ամպ ու հովերն անուշ, անուշ:

Ահա բացվեց թարմ առավոտ,  
Վարդ է թափվում սարին-քարին,  
Ծաղ են շողում ծաղիկ ու խոտ,  
Ծաշում բուրմունք եղեմային:

Ախ, ինչ հեշտ են սարի վրա  
Սահում ժամերն անուշ, անուշ,  
Ծվին փչեց հովիվն ահա -  
Աղջիկն ու սերն անուշ, անուշ:

### Հանելուկներ

Ամեն առաջուտ  
Գոհար շուրթերով  
Տալիս է ծաղկանց  
Համբույրը իր զով:

Ցնցույի պես  
Փեշը բաց անում,  
Զոր ու հանդեր է  
Հեռվից թաց անում:

Ժիրունիկ զան,  
բանասպեղծության մեջ  
երկու անհասկանայի բառ  
կու՝ անըղային և եղեմնկան։  
Դրանք ականջին մեղեդու  
նման են հնցում։

Հնցուիկ զան, այդ  
բառերը սովորաբար  
բանասպեղծություններում  
են հանդիպում։ Խնորդ  
նշանակում է «համելի  
երսպ»։ Խեղբությամբ կարող  
ենք եպրակացնել՝ անրգային,  
այսինքն՝ երսպային։

Եղեմ բառը պրախոր-ի համանիշն է։ Պարզ է, չե՞  
ոք եղեմնկան նշանակում է «դրախարային»։

**թեթևանափ  
ամպ  
վարդ**



## Բառերի գանձատուփ

1. **ա) Համեմատիք հոտ և բորբոքված բառերը:** Իմաստային ինչ տարրերություն կա նրանց միջև:

**բ) Հոտ և բույր կամ բորբոքված բառերով երկուական բառակապակցություն կազմիր:**

2. Ինչը կարող է բարով լինել:

3. Ինչը կամ ով կարող է սահել:

4. Ձո՞ր բառերով բացատրի՛ր,թե ինչ է շաղը:

5. Նվի իշել, դաշնամուր նվազել և բնիքուկ զարկն: բառակապակցություններով մեկական նախադասություն կազմիր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ձո՞ր կարծիքով տարվա ո՞ր եղանակն է նկարագրված բանաստեղծության մեջ:

2. Այս բանաստեղծությունը երգվում է (երաժշտության հեղինակը ևս Հովհ. Թումանյանն է): Ո՞ր բառերն են մեղեղային դարձնում բանաստեղծությունը: Սովորի՛ր երգել այս երգը:

3. Ուրիշ բանաստեղծությունն զտիր, որի հիման վրա երգ է գրվել: Եթե կարող ես, երգի՛ր:

4. Ինչ գոյներ ես տեսնում, երբ արտասանում (կամ երգում) ես այս բանաստեղծությունը:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Սարի վրա երբեմն եղել ես: Պատմի՛ր այդ մասին:

2. Հովհաննես Թումանյանի մասին ինչ գիտես: Պատմի՛ր:



## Դադարի պահ

Կարդա միևնույն գոյնն ունեցող բառերը՝ նրանց միջև ։ ղեկով:

ծառիւսաբափափործաղիկանուսածիծաղ



## ԱՎԵՏԻՔ ԽՍԱՀԱԿՅԱՆ

### ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ 1

Աշնան մի պայծառ առավոտ էր. Արարատյան դաշտի հրաշագեղ աշունը: Փայլում էին խաղողի ոսկեղեն ողկուզները, նուռն ու խնձորներն ասես հրեղեն գնդակներ լինեին: Հութի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում: Վերևում՝ բաց կապուտում, հավքերի շղթան էր ձգվում, ներքեսում ցողապատ արահետներով հայ գեղջունի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձած աշնան հազար ու մեկ բերքերով:

Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով: Մեր գլխի վրա ծփում էր սոսիների խորհրդավոր սոսափը: Երկուսս էլ լուռ էինք, տարված մեր մտքերով:

Քայլում էինք դեպի մի գյուղ՝ Երասխի ձախ ափին:

Սքանչելի է Արարատյան դաշտը:

Մասիսն ուղղակի դիմացներս էր. այնպես պարզ ու վճիռ էր, որ նրա ոտքերից մինչև գագաթը մեկ-մեկ կարելի էր դիտել: Մի հսկա սպիտակաբաշ առյուծի է նման ևա՝ նստած հետևի ոտքերի վրա, ալոր գլուխը անհունի մեջ, հանգիստ և անվրդով:

Աշնան քաղցր ու մեղմ արևը Մասիսի վերից վար և Արարատյան երկրի վրա իր ծիրանին էր փոռել: Երեկոյան կողմ մտանք գյուղ:

Հաջորդ օրը՝ մեկնելուց առաջ, գնացինք գյուղական գաղտնի դպրոցը: Ուսուցչի հետ արդեն երեկոյան ծանոթացել էինք. նա նոյն գյուղից մի կրակոտ երիտասարդ էր:

Ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոց-

հոտքի  
գեղջուկ  
բարձել  
հինավուրց  
գաղտնի

Ները: Հայ ժողովուրդը զրկվել էր ազգային կրթություն ստանալու հնարավորություններից: Հայ հայրենասեր անհատները մտածում էին որքան հնարավոր է հակազդել պետական քաղաքականությանը: Հայկական գավառներում սկսեցին համեստ միջոցներով գործել գաղտնի դպրոցներ:

Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց գյուղերում՝ նվիրվելով մանուկ սերնդի ազգային կրթությանը: Նրանք սովորեցնում էին գրել-կարդալ և թվաբանություն: Հետագայում այդ տարրական դպրոցների թիվը մեծացավ:

Այդպիսի դպրոցներից մեկն էր, որ մենք այցելեցինք:

Արաքսի ափին՝ հաստաբուն ընկուզենու տակ, հասարակ նստարանների վրա խումբ-խումբ տեղավորվել էին բավական մեծ թվով մանուկներ և պատանիներ:

## Ասոյք

Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերն. որ տարվում է ամեն մի պատահական քամոց:

Ստեփան Զորյան (հայ գրող)



## Բառերի գանձատուփ

1. Բացատրի՛ր ուկեղեն ողկոյզեր ու եռան և ինչնորի իրեղեն գեղակելեր կապակցությունների մեջ գործածված ուկեղեն և իրեղեն բառերը: Այդ բառերով մեկական բառակապակցություն կազմիր:

2. Հուրբի այգիներից լիուրյան աւտոշ բորբունքն էր խելքուն և ախաղասության մեջ մի բառ հոմանիշ է պաղաքեր, բերբառատ, փարթամ, բարեբեր բառերին: Մը ն է այն:

3. Կեղծուկ բառը նշանակում է «գյուղացի»: Մի բառով ինչպես կասես գյուղացի կին:

4. Վճիտ բառի երկու հոմանիշ ասա: Դրանցից յուրաքանչյորով մեկական նախաղասություն կազմիր:

տարրական  
խորհրդավոր  
ուղղակի  
քաղցր  
անվրդով

## Արեգի Ժիշտամիկ

Այսուհետեւ արևո Արագածոտնին կողքի պատ իր մասնակին եղ մասն ասիստանության մեջ ինչ զարմանալով է մասնակի բառը: Ծիրանի հետ կապ կա:

## Արեգի Հնչուհի

Ծիրանի հետ անմիջական կապ այն կա:

Մասնակի բառը նշանակում է «պարմիր», «ժիրանագույն», այսինքն՝ ծիրանի

գույն: Ծիրանի է կոչվում նաև անթեժ շգեղ թիկնոցը՝ վերնազգեսարը,

որ կայսրերը թագավորները հագնում էին հանդիսավոր արարողությունների ժամանակ: Հնչու՞ի այդպես կոչվում:

Պրովիետ այն ծիրանագույն էր լինում:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Պատմվածքում նկարագրված ժամանակաշրջանում Հայաստան անկախ էր: Ո՞ր նախադասության միջոցով կարող ես հիմնավորել կարծիքը:

2. Պատմվածքում Մասիս ինչպիսին է:

3. Գաղտնի գործող հայկական դպրոցներում ովքեր եին ուսուցիչ դառնում: Նրանց մասին հատկանիշ արտահայտող 1-2 բառ ասա:

4. Չո բառերով արտահայտիր «Երևան» բաց կապուտում համբերի շլյուսի եր ձգվում նախադասության միտքը:

5. ա) Ինչ հարցերի են պատասխանում ընկույզենի, ընկույզենու, ընկույզենոց ձևերը:

բ) Գրի՞ր ուկի և ոզի գոյականների՝ նոցն հարցերին պատասխանող ձևերը:



## Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Կրկին կարդա Արարատյան դաշտի նկարագրությունը: Պատմիր քո բառերով՝ լրացնելով տարբեր տեղեկություններով:

2. Մասիսի կամ ուրիշ լեռան մասին մի ավանդություն պատմիր:





## Ածական. համեմատության աստիճանները

Առարկայի հատկանիշ ցուց տվող բառերը կոչվում են ածականներ:

Ածականները պատասխանում են ինչպիսի հարցին: Օրինակ՝ քաղցր (խաղող), փայլուն (աստղ), մեծ (գյուղ), դաշտային (ծաղիկ), հայկական (երգ) և այլն:

Որոշ ածականների ցուց տված հատկանիշը տարբեր առարկաների մեջ տարբեր չափով է լինում: Օրինակ՝ Երկնքում մի աստղը կարող է ավելի փայլուն լինել, քան մյուսը: Կարելի է տեսնել նաև Երկնքի ամենափայլուն աստղը:

Հատկանիշի տարբեր չափը ցուց ենք տալիս ածականի համեմատության աստիճանների միջոցով. մեծ - ավելի մեծ - ամենամեծ, քաղցր - ավելի քաղցր - ամենաքաղցր:



## Ավետիք Խահական

### ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ 2



Օրը կիրակի էր: Գյուղը հանգստանում էր դաշտային աշխատանքներից, և այդ պատճառով դպրոցը լիք էր աշակերտներով, ինչպես բացատրեց մեզ ուսուցիչը: Դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ, բայց ուսուցչի եռանդը հասնում էր ամեն տեղ: Մի խումբ «այբ ու բեն» էր սովորում, մյուս խմբում «Մայրենի լեզու» էին կարդում, երրորդ խմբում հայոց պատմությունից էին դաս պատասխանում, մի ուրիշ խմբում «Դավիթ Բեկ» էին կարդում:

Երբ դասը վերջացավ, ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ երգ շատ էր սիրում, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն: Ուսուցիչը պատասխանեց, թե ինքը, դժբախտաբար, «բաղաձայն» է և դրա համար էլ երգ չի սովորեցրել, սակայն ավելացրեց, որ աշակերտների մեջ երգողներ կան:

- Էավ կլինի բոլորը գոնե մի ընդհանուր ազգային երգ գիտենան. օրինակ՝ «Մայր Արաքսի»-ն, որ շատ տեղին է, հենց նրա ափին ենք,- ասաց ընկերու:

Ուսուցիչը մի պահ մտածելուց հետո դարձավ աշակերտներին.

- Հապա, սիրելիներս, ամենքդ շարվեցնք այստեղ:

Հետո դառնալով մեզ՝ ավելացրեց.

- Ինչպես չե, գիտեն և լավը գիտեն:

Ու ձեռքի քանոնը վեր բարձրացնելով՝ գոչեց.

- Բոլորդ միասին ինձ հետ երգեցնք՝ «Այբ-բեն-գիմ»: ՉԵ որ բոլորիդ անգիր սովորեցրել եմ, և միասին ձայնով ասել ենք: Դեհ, այսպես:

Եվ քանոնի հավասար բախումներին ներդաշնակ՝ բոլորը, հետևելով ուսուցչին, սկսեցին միասին բարձր և երգեցիկ ձայնով հեգել.

Այբ, բեն, գիմ,

Դա, եչ, զա,

Ե, ըթ, թո...

Այսպես մինչև վերջ: Քառասուն-հիսուն կրծքից բխած այս հուժկու, բազմահնչյուն և միահամուռ ձայնը, որ ինքնին հայոց լեզուն է, երասիսի շառաչի հետ փռվելով Արարատյան աշխարհի վրա, թվում էր, թե սլանում է ազատ Մասիսն ի վեր:

Ամենքի երեսին պայծառ ժպիտ կար. ուսուցիչը շատ ոգևորված էր:

- Ահա ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պետք է գիտենա: Ահա չորս-հինգ տարի է՝ ես այդ



Երգն եմ սովորեցրել, ուրիշ երգչեմ ճանաչում...,-  
բոցավառ շրթունքներով շնչասպառ ասաց  
ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը:

- Ծատ ծիշտ եք ասում և կեցցեք, իսկապես  
որ աննման էք,- ոչ նվազ ոգևորությամբ պա-  
տասխանեցինք մենք:

Ապա մեր շնորհակալությունը հայտնելով՝ ամուր սեղմեցինք  
հեարամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք  
մեր ուղին:

Մի պահ գտևվում էինք այդ տարօրինակ երգի ազդեցության  
տակ: Ընկերու խզեց լուսությունը.

- Համաձայն չես, որ քանի հայն ապրում է, հայոց «այբ-  
բեն»-ը չի մեռնի:

- Այո՞,- ասացի,- բայց ես հակառակին ավելի համաձայն եմ.  
քանի հայոց «այբ-բեն»-ը ապրում է, հայը չի մեռնի...

**Երրորդ  
կուրծք  
հուժկու  
անպատճառ**

### **Առողջ**

Իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է  
հայոց լեզվին տիրապետելը:

Վիկտոր Համբարձումյան  
(հայ աշխարհահոչակ աստղագետ)



### **Բառերի գանձատուփ**

1. Յույց տուր զյուղական, ազգային բառերի արմատները և  
ածանցերը: Յուրաքանչյուր ածանցով երեքական բան կազմիր:

2. Գրիր որիշ, վերջանալ, խևորել, գոչել և հուժկու բառերի  
հոմանիշները:

3. Գրիր միասին, դժբախտաբար, ծիշտ, ուրախ և թեթև բառերի  
հականիշները:

4. Շնուցիչը պատասխանեց. թե ինքը. դժբախտաբար «բաղա-  
ձայն» է և ախաղասության մեջ ինչ է և շանակում չակերտներում  
գրված բառը:



## Իմաստունի օրատետրից

### Հայաստանի Հանրապետության օրիներգը

Օրիներգը հանդիսավոր երգ է, որը հնչեցնում են պարբեր սրարողությունների ժամանակ։ Բոլոր պետրություններն ունեն պետրական օրիներգ։ Օրիներգը ինչպես զրոյք և պինականք, պետրության պաշտոնական խորհրդանիշն է։

Հայաստանի հանրապետության օրիներգի բառերը գրել է բանասեղծ Միքայել Նայքանդյանը, երաժշտական մշակումը կապրարէ է երգահանն Բարեկ Կանաչյանը։



### Հարցերի և առաջադրանքների արկողիկ

1. Ազգային ինչ երգ երգեցին երեխաները։
2. Հեղինակը երեխաների երգածն ինչո՞ւ է «տարօրինակ երգ» անվանում։
3. Չո բառերով նկարագրիր գյուղական դպրոցը; Երիտասարդ ուսուցչին և երեխաներին։
4. Ո՞րև է պատմվածքի հիմնական միտքը։
5. Չո կարծիքով իր պատմության ընթացքում հայ ժողովուրդն ինչի շնորհիվ է հաղթանակներ տարել։ Կարծիքդ հիմնավորիր։
6. ա) Գրի՞ր լավ, ուրախ, պայծառ, թերև ածականների համեմատության աստիճանները։  
բ) Ըստրի՞ր ածականներից մեկը և նրա բոլոր ձևերով բառակապակցությունների կազմիր։



### Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Գրավոր նկարագրիր քո ուսուցչին։
2. Ներկայացրու՛ քո սիրած բանաստեղծությունը կամ երգը, հեղինակի և ստեղծագործության մասին տեղեկություններ հաղորդիր ընկերներիդ։



## ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԵ

*(ըստ Աստվածաշնչի)*

Վաղուց, շատ վաղուց աշխարհում մեկ լեզու կար: Մի օր մարդիկ հավաքվեցին ու որոշեցին. «Մեզ համար մի քաղաք



կառուցենք ու մի աշտարակ, որի գագաթը մինչև Երկինք հասնի: Այդպես անոն կհանենք ու աշխարհով մեկ չենք ցրվի»: Եվ նրանք սկսեցին շինարարությունը: Բայց այդ բանն Աստծուն դուր չեկավ: Նա վերևից նայեց մարդկանց ու տեսավ, որ նրանք գոռող էին և ուզում էին միայն փառք, համբավ ու անոն վաստակել: Նա հասկացավ, որ այդ մարդիկ ավելի լավը չեին, քան նրանք, որ ապրում էին մեծ ջրհեղեղից առաջ:

Հետո Աստված նայեց քաղաքին ու աշտարակին, որ կառուցում էին մարդիկ, և մտածեց. «Ահա նրանք մի ժողովուրդ են ու մի լեզվով են խոսում և կարող են անել այն, ինչ որոշել են: Այնպես

խառնեմ նրանց լեզուն, որ ոչ մեկը չհասկանա  
իր ընկերոջ ասածը...»:

Եվ Աստված այնպես արեց, որ մարդիկ սկսեցին խոսել տարբեր լեզուներով: Նրանք այլևս իրար լեզու չհասկացան և չկարողացան շարունակել քաղաքի և աշտարակի կառուցումը: Այդպես մարդիկ թողեցին հեռացան այդտեղից ու տարածվեցին աշխարհով մեկ: Իսկ այդ վայրը կոչվեց Բաբելոն, որ նշանակում է «խառնակություն»:

**աշխարհ  
ջրհեղեղ**



**Հանելուկ**  
Ի՞նչն է քո մասին  
Հավու վատ ասում,  
Թե՛ օգուտ տալիս  
Եվ թե՛ վնասում:

### **Բամասպախտություն**

Դեպի Աստված տաևող ճանապարհն անվերջ է, հաղթահարելը՝ անհեար:



### **Բառերի գանձատուփ**

1. *Տեքստի ո՞ր բառի իմաստն է սա՝ «շրջանածն կամ քառակողմ (երբեմն էլ բազմակողմ) բարձր ու նեղ շինություն»:*
2. *Տեքստի սկզբնամասում գտի՞ր հոչակ բառի հոմանիշը: Երկու բառն էլ գործածիր նախադասությունների մեջ:*
3. *Ուրիշ բառով ինչպես կասես գոռող: Երկու բառն էլ գործածիր նախադասությունների մեջ:*
4. *Զրիեղեղ բառի առաջին արմատով բառեր կազմիր:*



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. *Աստված ինչո՞ւ խառնեց մարդկանց լեզուն:*
2. *Մարդկային ինչպիսի հատկանիշներ են գոռողությունը, փառասիրությունը:*
3. *Մարդկային դրական հատկանիշներ թվարկիր: Ըստրիր*

քո կարծիքով ամենակարևորները: Հաշվի առ նաև ընկերներիդ կարծիքը:

4. Ձո՞ւ կարծիքով Աստված ինչպիսին է ուզում տեսնել քեզ և բոլոր մարդկանց:

5. ա) Եեզու, լեզվի, լեզվից, լեզվով շարքի նմանությամբ գրիր կատու, ձու բառերի շարքերը:

բ) Այդ շարքերից մեկական բառ գործածիր նախաղասությունների մեջ:



### Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Կարդա «Մանուկների Աստվածաշունչը», այնտեղից հետաքրքիր որևէ բան պատմիր:

2. Ինչո՞ւ է հայտնի քո բնակավայրը (հուշարձաններ, մարդիկ և այլն): Պատմիր:



Տեքստի մեջ գտիր բառերի այն կապակցությունները, որոնք նշանակում են «հոչակվել» և «լավ համբավ՝ անոն ձեռք բերել»:



#### Արքայի Գիրունիկ

Ես գիրեամ, որ լեզուների անոնները վերզանում են կրեն-ով՝  
հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլն:

Եիշը է արդյոգ ժինարեն բառը, թէ գրքում սիսակ է գրվել:  
Նախապես շնորհակալ եմ:

Ինչուրեն

Բարեկամն, շար լավ է, որ ուշադիր ես: Այս ծիշը ես նկազմուի,  
լեզուների անոնները կազմվում են՝ երեն-ով: Բայց ասամ,

որ ժինարեն բառում սիսակ չկա:

Իիշիր և ուրիշներին էլ հիշեցրու, որ ժինարեն և  
հոնարեն բառերը կազմվում են՝ արեն աճանայով:

Գիրունիկ



## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Իմ պատուհանից ցւծությունն ասես  
Գարեան քերշանքով մեղմ թափանցեց Ե  
Առաջին անգամ մանկիկն իմ խնդուն  
Դպրոցից եկել, և տառն է սերտուա:  
Ա. տառն է գրում մասրիկ մատներով,  
Տառեր է շարում խնամքով, սիրով:  
Մաշտոցն է այդպէս մանկան պես մի օր  
Հրծվել իր զյուտով՝ հրաշք լուսավոր:  
Քանի սերունդներ ա տառով զնդուն  
Զգացել են այս հրծվանքը մաքուր:  
Այս վեհ է, ինչպես ժպիտը մանկան,  
Մոր գգվանքի պես միշտ նվիրական,  
Նման ծլվլուն ծիծառի կանչին,  
Հայրենի հողի կենարար շնչին:  
Ամեն օջախի կրակն է անշեց  
Ամեն հարկի տակ, ամեն սրտի մեջ,  
Մեր ժողովրդի ոգին հրկիզուն  
Եվ երկու բառով՝ մայրենի լեզու:



### Առած-ասացվածքներ

Խոսք կա՝ սարի գլուխը կհանի, խոսք կա՝ սարից ներքև կըերի:  
Հայկական

Մարդու լեզուն իր նավի դեկն է:

Եղիպատական

Խոսքը գործիք է, որով բացում են սիրտը:

Չինական

Իմ լեզվով խոսող օտարականն ավելի թանկ է. քան իր լեզուն  
չիմացող ազգակիցը:

Չըղական

Երկար լեզուն կկարծացնի կյանքը:

Պարսկական



## Բառերի գանձատուփ

1. Բաց թողևված տեղում ո՞ր բառը պետք է լինի. ընտրիր տրված ներից՝ զգվածք, նվիրական, ոգի:

ա) Ոգևորությունը, եռանդը, հոգու ուժը այլ կերպ կոչում են .....

բ) Փաղաքշանքը, սիրով ու քնքությամբ գրկելը, շոյելը անվանում են .....

գ) Թանձ, սրտին մոտ ու շատ սիրելի ամեն բան ....., է:

2. Բանաստեղծության մեջ գտիր ցնծություն բառի հոմանիշը: Մեկ հոմանիշ էլ դու' ավելացրու:

3. Բանաստեղծության ո՞ր բառերը կղնես կրակ, մայրենի, գգվանք բառերի կողքին:

4. Բացատրիր մանկիկ բառի կազմությունը: Նմանատիպ մի բանի բան ասա, մեկն էլ գտիր բանաստեղծության մեջ:

5. Համեմատիր անշեց և հրշեց բառերը: Ինքնուրուց բացատրիր անշեց բառը:

Ես գիրեմ, որ մեր լեզուն  
անվանում են հայերեն կամ  
հայոց լեզու, ուստեղի լեզուն՝  
ուստեղեն կամ ուսաց լեզու:

Իսկ կարեցի՞ է ասել հայերեն  
լեզու կարծում եմ, որ սա սիսաց  
է: Բայց այդից ինչորում եմ, թե  
ինչո՞ւ:

Երբ ասում ենք  
պարսկերեն, հաս-  
կանում ենք պարսկե-  
ների լեզուն, լեհերենի  
լեհերի լեզուն և այլն:  
Այսինքն՝ երեւոք «լեզու» է  
նշանակում: Պայքի ավելացրդ և  
նաև սիսաց է երեւոք կազմված  
բառի կազմին լեզու բառը դնելը:  
Կամ պիտի ասել հայոց լեզու կամ  
հայերեն:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ ինչի՞ հետ է համեմատվում մայրենի լեզուն:

2. Հայերենի մասին ուրիշ ինչ բանաստեղծություններ գիտես:

3. Հայերենը մեր մայրենի լեզուն է. Մեզ համար ինչ են ոռուերենը, պարսկերենը և գերմաներենը:

4. Անգի՞ր ասա հայերենի այբուբենը:



### Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Որևէ հայի գիտես, որ հայերեն չի խոսում: Ինչո՞ւ է այդպես: Ինչ կարծիք ունես այդ մասին:

2. Բանաստեղծություններում ծիծեռնակը երբեմն անվանվում է : Նկարագրի՛ր այդ թոշունը:



Բանաստեղծության վերջին քառատողի մեջ այնպիսի բան մատևանչիր, որը կարող ենք բանաստեղծական համարել:



### Իմաստունի օրատետրից


#### Մայրենի լեզու

Ամեն ժողովուրդ ունի իր լեզուն:

Պուսները խոսում են ոռուերեն, ֆրանսիացիները՝ ֆրանսերեն, հույները՝ հունարեն, արաբական երկրներում արաբերեն և այլն: Կան լեզուներ, որոնք մի ժամանակ ժողովուրդների մայրենի լեզուներն են: Օրինակ՝ անգլերեն խոսում են Մեծ Բրիտանիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ավստրալիայում և Կանադայում, գերմաներեն՝ Գերմանիայում, Ավստրիայում, նաև Եվրոպայում:

Հայերի լեզուն հայերենն է: Այն մեր մայրենի լեզուն է: Մայրենի է կոչվում, որովհետեւ մեզանից յուրաքանչյուրը հայերեն առաջին բառերն իր մորից է լսում ու սովորում:

Մայրենի լեզվի շնորհիվ հայ ժողովուրդն իր գոյությունը պահել է մինչև այսօր:





## ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԱՐԵՐ

Անմար լուսեր եք, մեսրոպյան տառեր,  
Որքան իռացեր եք իմ սրտում վառել...  
Բացվել են ձեզնով աչքերը մտքիս,  
Վեհ երազներով լցվել է հոգիս:



Ձեզնով եմ զգում հմայքը խոսքի,  
Բացում գիտության դուսերը ոսկի:  
Կարդում հայրենի մեղմանոշ երգեր,  
Հրաշքներով լի հեքիաթներ, գրքեր:

Անշեջ կրակ եք, մեսրոպյան տառեր,  
Որքան լուսեր եք իմ ճամփին վառել:

### Հանելուկ

Մեծ գորավար Մաշտոցի,  
Զինվորներն են քաջարի:  
Ինչ է անոնն այդ հայտնի  
Խաղաղասեր քանակի:



### Ասույթներ

Հայոց գրերը նույնքան են նպաստել հայ ժողովրդի պահպաներ, որքան և հայ ռազմիկները:

Մեսրոպը իր կատարած գործով ամենամեծն է մեր պատմական հերոսների մեջ:



### Բառերի գանձատուփ

1. Այս նշանակում է «հիանալի, սքանչելի» և «բարձր ոիրք ունեցող»: Բառը որ իմաստով է գործածվել բանաստեղծության մեջ:
2. Բանաստեղծության մեջ զոյիր բառի հոմանիշը:

Լ. Եղ (հայ նշանավոր պատմաբան)

3. Առաջին քառատողում գտիր զգացմունք, ապրում նշանակող բառը: Այդ արմատով մեկ բառ էլ ինքդ ասա:

4. Մեղմական բառի բաղադրիչներից յուրաքանչյորդ երկուական բառ կազմիր:

### Արեգի՛ Ժիրեմնիկ

Չեմ հասկանում, թե միքի  
աչքերը որո՞նք են, և լուսերն  
ինչպէս կարող են բացել  
դրանք: Օգնիր, եթէ կարող ես:

Իմ լավ ընկերունի:

Այս բառերը ուզի՞ց

սովորական իմաստով

չպիրի հասկանաս: Անկի

աչքերը բացել կապակցությունը

նշանակում է «մեկին մի բան

հասկանայի դարձնել, ճանաչել լրաց»: Իհարկէ միքը աչքեր չունի բայց բանասրեղմները երբեմն այսպիսի ոչ սովորական կապակցություններ են արեգում, որպեսայի իրենց անդիքը աչքի լուսանեցի՝ պարկերավոր դարձնեն:

Իսկ միքի աչքերը բացել սրբահայրությունը նշանակում է «մեկի միքը հարարացնել, նրան ինչոք դարձնել»:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեղինակն ինչո՞ւ է տառերը մեսրոպյան անվանել: Ո՞ր տառերի մասին է խոսքը:

2. Հեղինակն ինչի՞ հետ է համեմատում հայոց գրերը: Դու՞ ինչի հետ կհամեմատես:

3. Նորից կարդա երկրորդ քառատողը և ասա, թե տառերով որիշ ինչ կարելի է անել:

4. a) Հմայք - հմայել գույզի նմանոթյամբ շարունակի՛ր՝ խոսք - ...., վազք - ...., ծալք - ....:

b) Գրածդ գույզերից մեկի բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

5. Խոսք, երգ, տառ բառերի հետ հատկանիշ ցուց տվող երկուական բառ գործածիր:



## Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Հայերեն ո՞ր տառի ձևն է քեզ ամենից շատ դուր գալիս: Այդ տառն ունեցող բառեր գործածելով՝ մի պատմություն հորինիր:

2. Ինչ ստեղծագործություններ ես սիրում կարդալ: Պատմիր դրանցից մեկի մասին:



### Եմաստունի օրատետրից

### Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերը

5-րդ դարի սկզբին՝ 405-406 թվականներին, Մեսրոպ Մաշտոցի սրեղծած այբուբենն ուներ 36 գրան: Նյու սկզբում է այսուհետ և ավագանում ժ-ով: Նվազի ուղ՝ 12-րդ դարում՝ ավելացան ու և յ գրտերը:

Մաշտոցը հայագրանոմ բացեց սոսագին՝ դպրոցները և ինչն էլ հայերենի սոսագին գրաւերը դվելց: Նյու պատճենով նրան սննդանոմ են հայերենի սոսագին ուսուցիչ:

հայոց այբուբենին նվիրված կարգ է կանգնեցված Օջախուի հանագարին:

հայոց գրաւերը գանդակվելով են խաչարերի տեսախով և գեղագրվելով Օջախու գյուղում՝ որպես բազմամ է մեսրոպ մաշտոցը:

հայկական 38 գրաւերի գանդակները են լրեզագրվելով երազանցութիւն մարզում՝ Արագածի սրորդութիւն:



### Դադարի պահ

Զինվորներին ծիշտ դասավորելով՝ կարդա՛ մաշտոցյան բանակի անոնք:



## Նախադասություն. Նախադասության անդամներ

Խոսելիս մենք նախադասություններ ենք կազմում: Նախադասությունը ցուց է տալիս առարկան և նրա կատարած գործողությունը: Օրինակ՝ Թոշունները ծլվում են: Ծառերը ծաղկել են:

Այն բառը, որը նախադասության մեջ ցուց է տալիս գործողություն կատարող առարկան, կոչվում է ենթակա: Օրինակ՝ թոշունները, ծառերը:

Այն բառը, որը ցուց է տալիս ենթակայի կատարած գործողությունը, կոչվում է ստորոգյալ: Օրինակ՝ ծլվում են, ծաղկել են:

Ենթական և ստորոգյալը նախադասության գիշավոր անդամներն են:

Միայն ենթակայով և ստորոգյալով կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն: Օրինակ՝ Տատիկը ժպտում է: Գետը կարկաչում է:

Նախադասության մեջ ենթակայից և ստորոգյալից բացի կարող են լինել նաև այլ բառեր: Օրինակ՝ Լեռնային գետը կարկաչում է: Լեռնային գետը կարկաչում է ձորում: Այդ բառերը լրացնում են ենթակային կամ ստորոգյալին և կոչվում են երկրորդական անդամներ կամ լրացնումներ:

Ենթակա, ստորոգյալ և լրացնում (կամ լրացնումներ) ունեցող նախադասությունը կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն: Օրինակ՝ Տատիկը մեղմ ժպտում է: Ուկեցող արևը փափում է երկեքում:



## Իմաստունի խորհուրդները

Հեղուն գիրեղիքների բանապի է: Հեղուի միզունի շաբ բան կարող եք սովորել մեծերից ու գրքերից: Ահա թե ինչու որևէ լեզու լավ իմանապր շաբ կարևոր է, իսկ եթե մարդ մեկից ավելի լեզու գիրք, նա կարող է ամեղի շաբ գիրեղիքներ չեռք բերել:

Խարկապոր է լավ սովորել, սիրել ու պահպանել մայրենի լեզուն: Խեմքե, օպար լեզուներ էլ պիտի սովորեք, սակայն ամենից առաջ և ամենից լավ մայրենի լեզուն պիտի իմանաք:



## ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆ

Թերթեր՝ դարսած իրար վրա,  
Մի վերևագիր ու մի անուն.  
Համեստ ու լուս դրված է նա,  
Դրված է նա պահարանում:

Եթե բացես, եթե կարդաս,  
Նա քեզ կտա թևեր անտես,  
Կհասցեի բարձունք անհաս,  
Նոր աշխարհներ կտանի քեզ:

Ուժ կտա քեզ, կամք անկոտրում,  
Եվ միշտ կօգնի դժվար ժամին,  
Կօգնի քեզ մարդ լինել կյանքում,  
Ապրել հպարտ, ապրել ազնիվ...

Երազ, երգեր, թռվենր գարնան,  
Հույս ու ընկեր, կյանք ու գալիք.  
Հարստությունն այս անսահման  
Մի պարզ բառով կոչվում է գիրք:



**ՎԵՐԵՎԱԳԻՐ  
ԲԱՐՁՈՒՆՔ**

### ԲԱՄԱԳՐԱԽՈՏՈՄԹՅՈՒՆՆԵՐ

Էակ գիրքն առաջին անգամ  
Կարդալիս մենք ունենում ենք  
Եռյն զգացումը, ինչ նոր բարեկամ  
Ճեղք բերելիս:

Կարդալը մարդու մտքի համար  
Եռյնն է, ինչ ֆիզիկական վար-  
ժությունը՝ մարմնի համար:

### ՀԱՆԵԼՈՒԿ

Մեզ տանում է տիեզերք,  
Օվկիանոսներ ու ծովեր,  
Մեր առջև նա է բացում  
Հազար ու մի գաղտնիքներ:  
Ասեք, ով է, դե ասեք,  
Բարի կախարդն այդ գորեղ:



## Բառերի գանձատուփ

1. Նոր աշխարհներ կտակի քեզ տողի մեջ քո կարծիքով աշխարհ բառն ինչ իմաստով է գործածվել:
2. Գրիր համեստ, լուս, օգևել, ազեխիվ և հարստություն բառերի հոմանիշները:
3. Բանաստեղծությունից դուրս գրիր այն բառերը, որոնց առաջին բաղադրիչը ան-մասնիկն է: Բացատրիր այդ բառերը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության ո՞ր հատվածներում է նկարագրվում գոքի ուժը: Նորից կարդա՞ դրանք:
2. Ըստ բանաստեղծի՝ ինչպիսին է դառնում գրքեր կարդացած մարդը: Դու ինչ կարծիք ունես:
3. Համաձայն ես, որ գիրքն այնպիսի հզոր ուժ ունի, ինչպիսին ներկայացված է բանաստեղծության մեջ:
4. ա) Տաղ, տա, կտա շարքերի նմանությամբ գրիր կարդալ և օգևել բառերի ձևերը:  
բ) Կազմած ձևերից երկուսը գործածիր պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունների մեջ:



## Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Ինչ գրքեր ունես: Դրանցից որն է քո ամենասիրած գիրքը: Ինչ ես սովորել այդ գրքից:
2. Երբնէ գիրք նվիրել ես կամ նվեր ստացել ես: Պատմիր այդ մասին:



Հմայել, հրապուրել, կախարդել բառերին հոմանիշ է թուփել-ը: Հմայք, հրապուրանք բառերի հետ համեմատելով՝ փորձիր բացատրել թովք բառը:



## ՆՇԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ



Գիտեք արդյոք, որ մարդկացին լեզուն փոխարինողներ ել ունի: Օրինակ՝ նշանների լեզուն: Մարդիկ հաճախ միմյանց ինչ-որ բան են ասում ձեռքի, գլխի տարբեր շարժումներով: Օրինակ՝ գլխի վերից վար շարժումը համաձայնության նշան է, ձեռքն ուսին թփթփացնելը՝ խրախուսանքի, գլխարկը վեր նետելը՝ ուրախության և այլն:

Փողոցներում ու ծանապարհներին կարող եք տեսնել տարբեր նշաններ, որոնք

վարորդների և անցորդների օգնականներն են:

Նրանք հուշում են, թե երբ պետք է կանգ առնենք, երբ շարժվենք առաջ, որ ողղությամբ գնանք, ինչ կա մոտակայքում և այլն:

Դուք երևի սիրում եք նաև մարզական տարբեր խաղեր ու մրցումներ դիտել և նկատել եք, թե ինչպես է մրցավարը նշաններով կամ տարբեր գույների քարտերով «խոսում» մարզիկների հետ:

Լեզվի այս «օգնականները» շատ հաճախ նույնն են տարբեր երկրներում և հասկանալի են տարբեր լեզուներով խոսող մարդկաց:

Սակայն երբեմն միևնույն շարժումը կարող է նույնիսկ հակառակ նշանակությունն ունենալ տարբեր ազգերի մարդկաց համար: Օրինակ՝ եթե գլուխը աշից ձախ տանելով մենք՝ հայերս, և աշխարհի շատ ժողովուրդներ «ոչ» ենք հասկանում, ապա բուլղարացիների

**միմյանց  
անցորդ  
ողղություն  
օգնական  
մրցավար**



համար դա «այս» է: Նույն ձևով էլ՝ գլուխը վերից վար շարժելով մենք «այս» ենք ասում, նրանք՝ «ոչ»:

### Հանելուկներ

Ծովի վրա լուս եմ տալիս, Այն ինչ սարք է խաչմերուկում,  
Մոլորվածին հոգս եմ տալիս, Որի վրա կարմիր, դեղին,  
Կանչում, ձեռքով եմ անում Մեկ էլ կանաչ լոցս է լինում:  
Ու նավը ափ եմ հանում:



### Բառերի գանձատուփ

1. Խրախոսանք բառի հոմանիշներն են բազալերանք-ը, ոգիշնչում-ը: Գրիր խրախոսել բառի հոմանիշները:
2. Մոտակայք բառի երկու հոմանիշ գրիր. որա համար առաջին բաղադրիչը փոխարինիր մերձ և շուրջ արմատներով:
3. Վարորդ և անցորդ բառերն ինչ ընդհանուր բաղադրիչ ունեն: Այդ վերջածակցով 3-4 բան կազմիր:
4. Մարզիկ բառի արմատով 3 բան գրիր:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բառերով արտահայտիր նկարներում պատկերված:



2. Որտեղ ես տեսել այս նշանները: Դրանք ինչ են նշանակում:



3. Ինչ են նշանակում ճանապարհներին և փողոցներում հանդիպող երթնեկության այս նշանները: Բացատրիր:



4. Բացատրի՛ր,թե ինչ են նշանակում տրված կետադրական նշանները՝ [:], [՝], [՞], [՚]:

5. Մարզական տարբեր խաղերի ժամանակ կիրառվող պայմանական նշաններ ներկայացրու և բացատրի՛ր:



### Պատմությունների և հեքիաթների գամբյուղ

1. Նշանների լեզուն քեզ երբեմ օգնել է դժվար իրավիճակում: Պատմի՛ր:

2. «Հարցական նշանի ճամփորդությունը» վերնագրով մի հեքիաթ գրիր:



## ԿԵՆԴԱՐԻՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Միթե կենդանիները լեզու ունեն:

Զարմանալի է, օրինակ, թե ինչպես են «խոտում» մրջյունները, որոնք կանոնավոր «հանրապետություն» ունեն, կազմակերպված «պատերազմ» են վարում, ունեն «հիվանդանոց», «վիրավորներ փոխադրող անձնակազմ»: Նոցեապես և մեղուները, որոնք թագուիի, զինվորներ և բանվորներ ունեն, ժամացուցի պես հստակ աշխատում են:

Գիտնականները փորձեր են արել և պարզել, որ մեղուների «լեզուն» ոչ ծայնային է, ոչ էլ տեսողական (այսինքն՝ շարժուծներով), այլ շոշափողական է:

Ծաքարաջրով հրապուրելով մի մեղվի՝ հետազոտողը տեսնում է, որ սա շտապում է դեպի փեթակը՝ ընկերներին լուր տալու և նրանց դուրս կանչելու: Փեթակը մութ է, իսկ մեղուները մթության մեջ չեն տեսնում: Միևնույն ժամանակ այնտեղ տիրում է մեղուների միալար բզզոցը, հետևաբար մեղուն չեր կարող շարժումներով կամ ծայնով բացատրել իր մտքինը: Եվ ինչ է անում նա:

մրջյուն  
թագուիի  
միևնույն  
բզզոց  
բաղդ



Փեթակ մտնելուց  
հետո լուր տանող  
մեղուն իր վայելած  
նյութից բաշխում է  
ընկերներին, որպեսզի

նրանք էլ լցնեն բջիջների մեջ:  
Հետո մի եզակի պար է սկսում շարունակ պտույտներ գործելով:  
Մյուս մեղուներն աշխատում են դիպչել լուր բերող մեղվին:  
Դիպչելուց հետո նրանք իսկովն թռչում են դեպի ավարը: Այս-  
ինքն՝ մեղվի պարը նշանակում է «ուտելու բան կա»:

Ուրիշ փորձեր էլ ցույց են տալիս, որ ընկեր մեղուները պա-  
րող մեղվի բերած նյութի հոտն են առնում և գնում այդ հոտի  
ուղղությամբ:

Այս ամենն իրոք հետաքրքիր է: Բայց հստակ է, որ խոսում են  
միայն մարդիկ, իսկ կենդանիները որոշակի ձայներ են հանում:  
Այդ ձայները, իհարկե, ինչ-որ բան նշանակում են՝ քաղց, ցավ,  
ուրախություն, վտանգ:

Կենդանիները մարդկային լեզվով խոսում են միայն  
հեքիաթներում, առակներում, մովտֆիլմերում:

### Հանելուկներ

Թև ուսի, թռչուն չէ,  
Միջատ է, մրջյուն չէ:  
Աշխատում է օրնիբուն,  
Բերքը տալիս է մարդուն:

Մեղվից հետո երևի,  
Որպես ժիր ու ժրաջան,  
Աշխատասեր ու համառ՝  
Նա է հայտնի բոլորին:





## Բառերի գանձատուփ

1. Ինչ է կոչվում այն տեղը, որտեղ շատ մրջյուններ կան:
2. Մեղութերը զլում են ծաղիկների հոտի ուղղությամբ նախադասության մեջ հոտ բառը որ հոմանիշով կփոխարինեն: Բացատրի՛ր հոմանիշների իմաստային տարրերությունը:
3. Իսկոցն և որիշ բառերի 1-ական հոմանիշ գտիր:
4. Տեքստի մեջ գտիր այն նախադասությունները, որոնցում գործածված է հստակ բառը: Դրանք նույն իմաստն են արտահայտում: Տեսակետով հիմնավորիր:
5. Ծաքարաջուր բառի նման որիշներն ասա, որոնք վերջանում են ջուր բաղադրիչով:
6. Բացատրի՛ր ուղղություն բառի կազմությունը: Յ բան հիշիր, որոնցում միևնույն բաղադայնը կրկնակի է գրվում:

### Արրեջի Ժիրոնիկ

Նյութն ընթերցեցին եւ  
նկարեցի, որ մի ժանի բառ  
գրված է չակերպների մեջ:  
ինչո՞ւ:

իմ բարեկամ ինչորկ  
Ու ինարկե գիրես, որ  
նախադասությունների մեջ  
վերնագրեցը գրվում են չակերպ-  
ինչորկ ներում: Օրինակ՝ Ու կարդացեց եւ  
«Ձայունն ու մ'ոզյունը» առակը:

Գրավոր խոսքում երբեմն չակերպ-  
ների մեջ են գրվում նաև այն բառերը,  
որոնք գործածվում են ոչ իրենց սովորական իմաս-  
տով: Օրինակ՝ պվարճայի է պարկերացնեղ, որ մե-  
ղունների մեջ կարող է պարզամափոր լինել, կամ էլ  
մեղունները կարող են խուզ ու պարերացնել:

Մեկ անգամ էլ ուշադիր կարդաց գրեքարը և փորձիր  
ինձդ բացապրտը, թե բառերն ինչո՞ւ են չակերպների  
մեջ առնվել:

Ժիրոնիկ





## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Կարող ես ասել, թե կենդանիներն ինչպես են իրար մի բան հաղորդում:
2. Ինչ միջոցով էր մեղուն հաղորդում իր գտածի մասին:
3. Զայերի միջոցով կենդանիներն ինչի մասին են հասկացնում:
4. Կենդանիները որտեղ են խոսում մարդկանց նման: Օրինակ՝ ներք բեր:
5. **ա)** Համացույց բառի նման են կազմված հեռուստացույց և կողմացույց բառերը: Կազմիր այս բառերի հոգևակի թիվը:
- բ)** Այդ բառերից մեկը եղակի և հոգևակի թվով գործածիր նախադասությունների մեջ:
6. Մեղու – մեղվի. Ինչ է տեղի ունեցել: Երեք բառ էլ դու' գրիր:
7. Բայց և իսկ բառերով 1-ական նախադասություն կազմիր:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Ինչ գիտես մեղրի օգտակար հատկությունների մասին:
2. Որևէ հեքիաթ կամ առակ հիշիր, որտեղ կենդանիները խոսում են մարդկային լեզվով: Պատմիր:



## Իմաստունի խորիուրդները

Հայվ խոսել մարդ սովորում է ամբողջ կյանքում: Որևէ լեզու այդ թվում մայրենի լեզուն սովորելու ընթացքը վերջ չունի և շար զանգ ու աշխարհանգ է պահանջում: Չուր մի՛ վարնիր թանկ ժամանակը՝ մրածելով, թե ինչ-որ բան հեզու կուվորես: Խնջուկ ժողովորդն է ասում, այսօրվա գործը վաղվան չեն թողնի:

Աիրին գիրքն ու ընթերցանությունը: Աշխարիք շար և ուշադիր կարդավ:

## ԲՉԵԶԻ ԴՊՐՈՅԸ

(փոփոխություններով)

Վարպետ բգեզն ամոան մի օր  
Դարոց բացեց մեծ ծառի տակ  
Ու հավաքեց թիթեռ, ճանձ, բռո,  
Մժեղ, մրջյուն, մլակ, մոծակ...

- Գիտե՞ք,- ասաց,- իմ փոքրիկներ,  
Դուք պիտի շատ սովորեք,  
Որ իմանաք՝ ինչ է ձեզ պետք,  
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքում:

Պետք է, անշուշտ, սովորեք շատ,  
Մինչև դառնաք ինձ պես վարպետ:  
Դճ, նստեցեք հիմա հանդարտ,  
Ինչ որ կասեմ, կրկնեք ինձ հետ:

Ա. անթառամ, Բ. բալենի

Գ. գնարբուկ Դ. դղում...

Եյ, դո՛, մորենիս, ինձ ականջ դիր,  
Ինչ ես թաքուն կտրտում:

Ե. երիցուկ, Զ. զարդենի,

Ե. էրեժնակ, Ը. ընկույզ...

Մի աղմկեք, հանաք իո չի,  
Թիթեռ՝ հանգիստ, մոծակ՝ սուս:





Մի խառնվեք, չեմ սիրում ես  
Բզզոց, տզզոց ու աղմուկ:  
Օ. թրթնջուկ, Ժ. ժանտափուշ,  
Ի. իշառվույտ, Լ. լեզվուկ:

Խ. խնձորուկ, Ծ. ծիրանի,  
Ա. կռատուկ, Հ. հաղարջ...

-Տես, վարժապետ, ես մլակին,  
Ինձ ասում է՝ սարի արջ:

-Մլակ, հանգիստ, ել չտզզաս,  
Լավ կանես՝ ինձ լսես լուս:  
Զ. ձմերուկ, Ռ. դանձլամեր,  
Շ. ճարճատուկ, Ո. մասուր:

Այ դու, ծղրիդ, ո՞ւսց ես նստել,  
Գլուխդ՝ հետ, մեջքդ՝ դուրս:  
Ո. յասաման, Վ. ևունուֆար,  
Շ. շազանակ, Ո. ոզնախոտ:

**Ճանձ  
դդում  
շազանակ  
սերկնիլ**

-Վայ, ես ինչեր կան դասերում,  
Ոզնախոտ ես շատ եմ սիրում...  
-Իսկ ես կաղամբ կուտեմ, կուտեմ...  
-Իսկ ես՝ ծիրան... -Իսկ ես՝ կուտեմ...

-Ձեզ չեն հարցնում՝ ինչ կուտեք դուք  
Դեռ չզարթեած առավոտյան:  
Զ. չինարի, Պ. պատատուկ,  
Շ. ջրկոտեմ, Ո. ռեհան:

Ո. սերկնիլ, Վ. վարդենի,  
Տ. տերեփուկ, Ց. ցորեն...  
ՈՒհ, մարդ քարից պիտի լինի,  
Ձեր մեջ գլուխ կճաքի:



Ո. փրփրուկ, Ռ. բարասոն,  
Ո. օֆ, պրծանք վերջապես...  
Դե, գևացեք, վաղը կզաք  
Անգիր արած ջրի պես:



Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,  
Մժեղ, մրջյուն, մլակ, մոծակ,  
Վարպետ բզեզն ամառն այսպես,  
Դաս էր տալիս մի ծառի տակ:

Հանելուկներ  
Հողից վերև՝  
Փոքրիկ արև,  
Վրան՝ հազար  
Սերմ ու տերև:

Առաստաղից կախվում է ցած,  
Հյուսում է մի բարակ ցած:  
Թաքնվում է, սպասում,  
Թիթեռ, ճանճեր է որսում:

Կապույտ երկինքը  
Փոքրիկ քույր ունի,  
Նրա աշիկը  
Աևուշ քույր ունի:

Ամբողջ օրը ջրի վրա  
Իր ստվերն է որսում,  
Ինքը ծովով է, բայց ժրաշան  
Մրջյունին է բամբասում:





## Բառերի գանձատուփ

- Գտի՞ր թաքուն, հանդարտ և զարթնել բառերի հոմանիշները:
- Քեզ ծանոթ են պրծելել և հանաբ խոսակցական բառերը: Կարող ես ասել դրանց գրական հոմանիշները:
- Ժողովրդի մեջ ո՞մ են վարպետ ասում:
- Բանաստեղծության մեջ զտիր այն բառակապակցությունը, որը նշանակում է «վայրենի, կոպիտ, բոի»:
- Դուքս գրիր այն բույսերի անունները, որոնք ուկ-ով են վերջանում:
- Բանաստեղծության մեջ կարդացիր ովելախոտ բառը: Խոսով վերջացող ուրիշ բույսերի անունները գրիր:
- Բացատրիր ջրի անունների անել արտահայտությունը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Ինչ նկատեցիր, հեղինակն ինչպես էր դասավորել ծաղիկների, խոտարուսերի, ծառերի ու պտուղների անունները:
- Տարվա որ եղանակն էր, երբ բգեզը դպրոց բացեց: Ինչո՞ւ հենց այդ ժամանակ:
- Ո՞ր կենդանիների, թռչունների կամ ձկների անուններով կտվորեցնեիր այբուբենը, եթե վարպետ բգեզի փոխարեն դու լինեիր անտառային դպրոցի ուսուցիչը:
- Քեզ ծանոթ բույսերի, ծառերի ու պտուղների անունները գրիր աղյուսակի մեջ:

Խոտարուսեր, ծաղիկներ	Բանջարանցային բույսեր	Ծառեր	Պտուղներ
մանրակամ	դրոս	բալենի	հաղարջ

- Ծարուեակիր շարքը: Կատուն մոռում է: Իսկ ինչ է անում՝  
 ա) մոծակը, բ) բգեզը, գ) ծղրիղը, դ) այծը, ե) գորտը, զ) խոզը,  
 է) հավը:

## **6. Շատիկ բառով բառեր կազմիր.**

**ծաղիկ բաղադրիչը սկզբում**

**ծաղկազարդ**

**ծաղիկ բաղադրիչը վերջում**

**ձևադիլ**

**7. Մասնագիտություններ նշանակող 5-7 բան գրիր: Նշիր, թե այդ մասնագետներից յուրաքանչյուրն ինչով է զբաղվում:**



### **Պատմությունների և գրույցների զամբյուղ**

**1. Բանաստեղծության մեջ թվարկված ո՞ր բույսերն են քեզ ծանոթ: Դրանց մեջ կա՞ այնպիսին, որը բուժիչ հատկություններ ունի: Պատմիր այդ մասին:**

**2. Քեզ ծանոթ ծառերից կամ ծաղիկներից մեկի մասին տեղեկություններ հավաքիր և փոքրիկ նյութ պատրաստիր: Նկարագրողիր այն:**



**Բացականչական ինչ բառեր են հեշում դասի ժամանակ: Դրանք ինչ տրամադրություն են արտահայտում:**



### **Եեզվաբանի դասը**

#### **Կոչական**

**Այն բառը, որ ցուց է տալիս, թե ո՞մ կամ ինչին է ուղղվում խոսքը, կոչվում է կոչական: Օրինակ՝ Ֆշաման, եկեղեց բակում ծառեր տեսնենք ու խնամենք: Առվանդ, այսօր ինչո՞ւ ես տխուր:**

**Բանակոր խոսքում այն անոնք կամ բառը, որով դիմում ենք, արտասանվում է հատուկ շեշտով:**

**Գրավոր խոսքում կոչականի վրա դնում ենք շեշտի նշանը [՝]: Այսպես, Գոհան, գիրքը մեկ օրով ինձ տուր, խնդրում եմ:**

**Նախադասություն կազմող բառերից կոչականն անցատվում է ստորակետով: Եթե այն մեջտեղում է, ապա ստորակետ դնում ենք կոչականի երկու կողմից: Օրինակ՝ Քէզ, Ալոն, կարևոր գործ է վատահիված:**



## Թ-ԱՓԱՌ-ԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ 1

(Ժողովրդական հեքիաթ)

Մի ավանակ, որն արդեն ծերացել էր ու չէր կարողանում աշխատել առաջվա պես, լսեց, որ տերն ուզում է ազատվել իրենից: Ակզբում մի պահ քար կտրեց, հետո որոշեց հեռանալ տևից: Թողեց ամեն ինչ ու Բրեմեն քաղաքի ճամփան բռնեց՝ մտածելով քաղաքային երաժիշտ դառնալ:

Քայլում էր նա ճանապարհով, երբ տեսավ մի շուն: Ծունը պառկել էր ճանապարհի եզրին ու ծանր հևում էր:

- Ինչո՞ւ ես այդպես հևում,- հարցրեց ավանակը:

- Ես արդեն ծեր եմ, թույլ և չեմ կարողանում օգնել տիրոջ, երբ նա որսի է գնում,- պատասխանեց շունը:- Նա էլ պատրաստվում էր կյանքիս վերջ տալ: Երբ զիսի ընկա, փախա նրա մոտից, բայց հիմա ինչպես պիտի գլուխս պահեմ:

- Արի ինձ հետ,- առաջարկեց ավանակը,- ես գնում եմ Բրեմեն: Որոշել եմ երաժիշտ դառնալ: Չեմ ուզենա բախտդ փորձել:

Ծանը դուր եկավ այդ միտքը, և նրանք միասին ճամփան ընկան:

Բայց շատ չեին քայլել, երբ ճանապարհի եզրին ողբալի տեսքով նստած մի կատու տեսան:

- Ինչ է պատահել քեզ, բարեկամ,- հարցրեց ավանակը,- ինչո՞ւ ես այդպես տխուր նստել:



## Ընդհակառակը ողբայի փախչել դարպաս լվացք

- Ինչպես կարող եմ ուրախ լինել, եթե կյանքս վտանգի մեջ ե,- պատասխանեց կատուն,- զնալով ծերանում եմ և մուկ բռնելու մեջ էլ այլքան ճարպիկ չեմ, ինչպես առաջ: Դե, տիրուհիս էլ որոշեց ինձ վերացնել: Հազիվ կարողացա փախչել, բայց այժմ ինչ պիտի անեմ:

- Լավ,- ասաց ավանակը,- արի զնանք, երաժիշտ դառնանք: Դու գիշերները լավ ես երգում: Գուցե Բրեմենում բախտդ բերի:

Կատուն սիրով համաձայնվեց և միացավ ավանակին ու շանը: Մեր երեք ծամփորդները շատ էին քայլել թե քիչ, երբ մի ազարակի մոտով անցնելիս աքլորի զիլ կանչ լսեցին: Աքլորը թառել էր դարպասի վրա ու ծղրտում էր, ինչքան կոկորդում ուժ կար:

- Լավ է,- ասաց ավանակը,- ինչ սքանչելի, ուժեղ ձայն ունես, բայց ասածդ ինչ է:

- Որ հարցնում ես, կասեմ,- պատասխանեց աքլորը,- ես տիրուհու ասում էի, որ այսօր իսկական լվացքի օր է, բայց նրա պետքն էլ չէ: Ընդհակառակը, որոշել է ինձ մորթել, գցել ապուրի մեջ՝ վաղը հյուրերի առաջը դնելու համար:

- Դու՝ էլ արի մեզ հետ,- ասաց ավանակը, եթե կարողանա լավ երգել, գուցե այսքանով մի համերգ տանք:

Աքլորն էլ համաձայնվեց, ու նրանք չորսով շարունակեցին ճանապարհը:



### Հանելուկներ

Միրելին եմ ամեն տան,  
Մանուկներին բարեկամ,  
Մուշտակս տաք ու քնքուշ,  
Ես՝ մկների աչքի փուշ:

Մորով ուսի՝ կարմիր բոց,  
Գլխին ասես՝ ալ սղոց:  
Զիլ կանչում է լուսաբացին,  
Ոտքի հանում քնածներին:



Արդեյի Գիրունիկ, ինչ լավն է «թափառության երաժիշտները» հեջիսաթը եւ սիրեցի հերոսներին։ Միայն շատկաց, թե ավանակն ինչո՞ւ ֆար կըրեց, եթք լուց, որ գեղն ուզում է ազարտել իրենիկ։ Ի՞նչ ֆարի մասին է խոսքը և ինչո՞ւ կըրեց այդ ֆարը։

Ինչուիկ զան ավանակը ոչ մի ֆար էլ չի կըրում։ Այս պեսին ֆար և կըրեց բառերն առանձին-առանձին շատերք է համանաս։ Որանք միասին մի բառակապակցություն են, որը նշանակում է «պարմանքից ֆարանալ, անշարժանալ»։



Եթէ հեջիսաթն ուզադիր եւ կարծացեց, ապա նկարած կինեւ, որ այնպեղ այդպիսի ուրիշ բառակապակցություններ էլ կան։ Որանք կարմիր են գրված։ Օրինակ՝ բախորը փորձեց, որ նշանակում է «որևէ բան անել՝ հույս ունենալով հազողության հանել»։ Բախորը բերեց՝ «հազողություն ունենալ», զրոյիր պահեց՝ «ապրուայր հոգալ, մի կերպ ասորեց»։ Իւրաքանչյուր է, որ կա նաև զրոյիր պահեց, որ բոլորութիւն ուրիշ իմաստ ունի՝ «ծովանալ»։



Վայ, զգանելուր, մեկ-մեկ եւ էլ եմ այդպիսի բառակապակցություններ գործածում։ Օրինակ՝ նկայալ օրը մայրիկին խոսքովայի, որ այլևս զրոյիր չեմ զրոյիր, այսինքն՝ չեմ պարծենա։



### Բառերի գանձատուիք

1. а) Գտիր ծեր, ծաւր, թույլ, ուրախ, լավ, բարեկամ, իիմաբառերի հականիշները։

բ) Հականիշների մեկ զույգը գործածիր միևնույն նախադասության մեջ։

2. Հեքիաթի ագարակ բառը նշանակում է «հողամաս՝ բնակության և տնտեսության համար կառուցված շենքերով»։ Հայաստանի Ազգարակ բնակավայրի անունն առաջացել է այս բառից։

Նման երկու օրինակ էլ ինքդ գտիր (եթք բառը բնակավայրի կամ մարդու անուն է դարձել)։

3. Հեքիաթի այս հատվածում հոմանիշ երկու արտահայտությունն կա, որոնք նշանակում են «ուղևորվել»։ Գտիր դրանք։

4. Հեքիաթում կարմիր գրվածներից ընտրիր այն արտահայտությունները, որոնք նշանակում են՝

ա) սպանել, բ) հաջողություն ունենալ, հաջողության հասնել:

5. Ինչ են նշանակում՝ ա) դուր գալ, բ) զիխի ընկելել, զ) ճամփարելել, դ) քար կտրել դարձվածքները։



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեքիաթի հերոսներն ինչ պարտականություններ ունեին իրենց տերերի տանը։

2.Տերերն ինչո՞ւ էին դժգոհ կենդանիներից։

3.Ինչպես ձևավորվեց թափառական երաժշտների խումբը։

4. Քո կարծիքով կենդանիներից յուրաքանչյուրն ինչ դեր պիտի ունենար երաժշտական խմբում։

5. ա) Փախչել - փախչում է - փախավ շարքի նմանությամբ գրի՞ր կաչել, թռչել բառերի շարքերը։

բ) Կազմածդ ձերը գործածիր նախադասությունների մեջ։



### Հեքիաթների և զրույցների զամբյուղ

1. Հեքիաթի հերոս կենդանիների մասին ուրիշ ինչ ստեղծագործություններ են կարդացել։ Դրանցից մեկը պատմիր։

2. Դու ինչպես կվարվեիր ձեր տանն ապրող ծերացած կենդանու հետ։



### Դադարի պահ

Ըստ գույնների որոշի՛ր, թե ստեղծագործություններից յուրաքանչյուրի հեղինակն ո՞վ է։

Հովհաննես Թումանյան

Հանս Քրիստիան  
Անդերսեն

Քաջ Նազար

Զյունե թագուհին

Կարմիր գլխարկը

Դազարոս Աղայան

Ծառլ Պերո

Անահիտ

Ստագե զինվորիկը

Սուտլիկ որսկանը



## Բառակապակցություն և դարձվածք

Երկու կամ ավելի բառերի կապակցությունը բառակապակցություն է: Օրինակ՝ չոր խոտ և չոր գլոխ, չոր բերել և բախտը բերել: Այս կապակցություններն իրարից շատ տարբեր են: Այսպես, չոր խոտ և չոր բերել կապակցությունների մեջ բառերը հասկանում ենք առանձին-առանձին: Մրանք ազատ կապակցություններ են, որովհետև սրանց մեջ բառերը կարելի է փոխել: Խոտը կարող է ոչ միայն չոր լինել, այլև կաևաչ, թարմ, կարելի է ոչ միայն ջուր բերել, այլև գիրք, ուտելիք և այլն:

Իսկ ահա չոր գլոխ կապակցության բառերն առանձին չպետք է հասկանանք. դրանք միասին մեկ իմաստ են արտահայտում «կամակոր, համառ»: Այդպես էլ բախտը բերել՝ «հաջողություն ունենալ»: Այսպիսի բառակապակցությունները կոչվում են դարձվածքներ:



## Թ-ԱՓԱՌ-ԱԿԱՆ ԵՐԱԾ-ԻՇՏՆԵՐԸ 2

(Ժողովրդական հեքիաթ)

Առաջին օրը Նրանք չկարողացան հասնել Բրեմեն, ու երբ մութեն ընկավ, մտան անտառ՝ գիշերելու: Ավանակն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, իսկ կատուն ու աքլորը տեղավորվեցին ծառի ճյուղերին: Աքլորը բարձրացավ ծառի կատարը՝ մտածելով՝ ինչքան բարձր, այնքան ապահով: Ու այնտեղից սովորության համաձայն մի հայացք գցեց շուրջբոլորը:

Հեռվում մի լուս նկատեց ու անմիջապես ծայն տվեց Ներքեսում գտնվողներին:

- Մոտերքում պետք է որ տուն լինի, որովհետև ես այստեղից լուս եմ տեսնոամ:

- Ինչ խոսք, ավելի հարմար կլիներ տանը գիշերել, քան մութ անտառում,- ուրախացավ ավանակը:



- Ինձ համար էլ յավ կլիներ,- ավելացրեց շունը,- մի կտոր ոսկոր կճարեի:

Բոլորը քայլեցին դեպի աքլորի տեսած լուսը: Իսկապես որ լուսը տարածվում էր տան ներսից. այդտեղ մի խումբ ավազակներ էին ապրում: Ավանակը, որը բոլորից բարձրահասակն էր, մոտեցավ պատուհանին ու ներս նայեց:

- Հը, ինչ ես տեսնում, ավանակ,- հարցրեց աքլորը:

- Տեսնում եմ մի սեղան՝ համեղ ուտելիքով ու խմելիքով, իսկ սեղանի շուրջը ավազակներ են նստած,- պատասխանեց ավանակը:

- Դա հենց մեր տեղն է,- ասաց աքլորը:

- Վաստ չեր լինի,- պատասխանեց ավանակը,- միայն թե կարողանանք ներս մտնել:

Չորսն էլ հավաքվեցին իրար գլխի, խորհրդակցեցին ու վերջապես ավազակներին դուրս անելու մի ծրագիր մշակեցին: Ավանակն առջևի ոտքերը դրեց պատուհանի գոգին, շունը բարձրացավ ավանակի վրա, կատուն նստեց շան ուսերին, իսկ աքլորը տեղավորվեց կատվի գլխին: Երբ աքլորը նշան արեց, որ տեղավորվել է, բոլորը միասին սկսեցին երգել: Ավանակը զռում էր, շունը՝ հաշում, կատուն՝ մլավում, իսկ աքլորը՝ ծղրտում: Հետո, ջարդելով պատուհանի ապակիները, բոլորը լցվեցին ներս ու սարսափելի իրարակցումով սկսեցին վազել սենյակով մեկ: Ավազակները, որ արդեն ահաբեկվել էին երգեցողությունից, հիմա մտածեցին, թե ինչ-որ զարհուրելի ուրվականներ են ներխուժել իրենց տուն, և սաստիկ վախեցած՝ փախան, ինչքան ոտքերում ուժ ունեին:

**խորհրդակցել  
գոգ  
պառկել  
համարձակ**



Հեսց որ սենյակը դատարկվեց, մեր չորս ծամփորդները նստեցին սեղանի շուրջը և մինչև վերջ կերան ավազակների թողածը։ Հետո մարեցին լուսն ու տեղավորվեցին քնելու։ Ավանակը պառկեց բակում, շունը՝ հետևի դռան մոտ՝ փոքրիկ փայտահի վրա, կատուն՝ տաք բուժարու առջև, իսկ աքլորը թռավ նստեց կտորի ծայրին։ Քիչ անց բոլորը քնեցին, իսկ ավազակների քունը չէր տանում։ Ծառ չէին շտապել փախչելու։ Գուցե կարիք չկար այդքան վախենալու։ Վերջապես նրանցից ամենահամարձակը որոշեց մոտենալ տանը և տեսնել, թե ինչ է կատարվում ներսում։

Տան լուսը չէր վառվում։ Մեր հերոսը գնաց խոհանոց՝ լուցկի ճարելու, որ մոմ վառի։ Քար լուրջուն էր տիրում։ Մթության մեջ նկատեց փայլող զուգ կետեր (դրանք կատվի աչքերն էին) ու կարծելով, թե շիկացած ածխիկներ են, լուցկին մոտեցրեց, որ վառի։ Կատուն մռաց, թռավ ավազակի վրա ու մի լավ ճանկուց։ Ավազակը ահաբեկված դուրս թռավ, բայց այստեղ էլ հանդիպեց շանը, որը կծեց նրա ոտքը։ Երբ փախչում էր բակի

միջով, ավանակը մի լավ աքացի տվեց: Իսկ աքլորը, որ աղմուկից արթևացել էր, ինչքան կոկորդում ուժ ուներ, կանչեց.

- Ծուլրուղո՞ւ...

Այդ օրվանից ավազակները սիրու չարեցին վերադառնալ, իսկ երաժիշտները գոհ ու երջանիկ ապրեցին այստեղ, և նովնիսկ համարձակվում եմ ասել՝ ապրում են մինչև օրս:

*հայացք*

*լուցկի*

*շորջբոլորը*

*առկայծել*

## **Առած-առացվածքներ**

Դյուդ կանգնի, գերան կկոտրի:

Հավատարիմ ընկերը գին չունի:



### **Բառերի գանձատուփ**

1. Հեքիաթից բառազույգերով դո՛րս գրիր կենդանու անունը, իսկ դիմացը՝ այն բառը, որը տվյալ կենդանուն բնորոշ ձայն հանելու գործողությունն է ցույց տալիս:

Նմուշ՝ սայուծ – մուշալ:

2. Գրիր կատար, համարձակ, արթևանալ, պատուհան, ջարդել, քեկել բառերի հոմանիշները:

3. ա) Հեքիաթում գտիր սարսափելի բառը. նրա հոմանիշը հաջորդ նախադասության մեջ է:

բ) Գրիր այն բառերը, որոնցից սրանք առաջացել են:

Նմուշ՝ հարգելի – հարգել:

4. Նախենալ բառի երկու հոմանիշ գրիր:

5. Գրիր բարձր, ուրախանալ, գոհ, երջանիկ, բարձրանալ, մոտենալ բառերի հականիշները:

6. Հեքիաթի այս հատվածի կարմիր գրվածներից ընտրիր այն արտահայտությունները, որոնք նշանակում են՝

ա) կանչել, բ) հասկացնել, գ) նայել, դ) մի տեղ հավաքել, խմբվել, ե) համարձակվել, զ) մթնել, հ) վոնդել:



## Հարցերի և առաջադրանքների արկողիկ

1. Հեքիաթի այս հատվածը մասերի բաժանելու հետ վերևագրեր կտաս դրանց:
2. Չո կարծիքով չորս կենդանիներից որևէ ավելի կարևոր դեր ուներ: Ինչո՞ւ:
3. Ինչ են նշանակում հետևյալ կատակ-և կարևորը: Բառակապակցություններն ընտրի՛ր տրվածներից՝ լեզուի կազմ ընկերելիք, գլուխ հանկելիք, ալբանիչի հետեւ զցելի, ասքից բեկելիք, քև տակ, ալբանիչի ող անելիք:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Եթե կարող ես, կարդա՛ թափառական երաժիշտների մասին պատմող հեքիաթի՝ Գրիմ եղբայրների մշակումը և համեմատի՛ր:
2. Դիտե՛ ես «Բրեմենյան երաժիշտներ» մուլտֆիլմը: Ինչ նմանություններ և տարբերություններ կան հեքիաթի և մուլտֆիլմի միջև:



Ինչպես ես հասկանում Քայր լուրջուն էր տիրոս նախադասությունը:



## Դադարի պահ

Հայտ գույների միացրո՛ թերթիկների կտրված մասերը և բառեր կազմիր: Ինչ են անվանում դրանք:



## Դարձվածք

Դարձվածքները կայուն բառակապակցություններ են: Դրանք պատրաստի մոցվում են խոսքի մեջ, ոչ թե ստեղծվում են խոսելու պահին: Օրինակ՝ եթե մեկը խելոքանում է, մարդիկ ասում են՝ խելքը գլուխ է համարել: Եթե շփոթվում է, «հանգստացիր, մի շփոթվիր» ասելու փոխարեն անմիջապես խորհուրդ են տալիս՝ բեզ մի կորոցու: Այդպես էլ՝ ձայնը գլուխ գցել «զողոզոալ, աղմկել», սիրու սուլու «համարձակվել», գլիտի ընկերու «հասկանալ, կռահել» և այլն:

Դարձվածքներն աշխույժ ու դիպուկ են դարձնում խոսքը:



Վարդան Այգեկցի

## ԱՌՅՈՒՄԸ, ԳԱՅՆԸ ԵՎ ԱՂՎԵՄԸ



Առյուծը, գայլը և աղվեսը եղբայրացան ու որսի ելան: Գտան մի խոյ, մի մաքի և մի զառ: Ճաշի ժամին առյուծը գայլին ասաց.

- Մեր մեջ բաժանիր որսը: Գայլն ասաց.

- Ո՞վ թագավոր, աստված արդեն բաժանել է. խոյը՝ քեզ, մաքին՝ ինձ, իսկ գառը՝ աղվեսին: Առյուծը զայրանալով ապտակեց գայլի ծնոտին:

Գայլի աչքերը դուրս թռան. Նա նստեց ու դառնաղի լաց եղավ: Առյուծն ասաց աղվեսին:

- Ոչխարները բաժանիր մեր մեջ: Աղվեսն ասաց.

- Ո՞վ թագավոր, աստված արդեն բաժանել է. խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ նախընթրիքին, գառը քեզ՝ ընթրիքին: Եվ առյուծն ասաց.

- Խորամանկ աղվես,քեզ ով սովորեցրեց  
այդպես ճիշտ բաժանել:

**առյուծ  
ոչխար  
ընթրիք**

Աղվեսը պատասխանեց.

- Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուքս  
թռան:



Կենդանի է վայրի,  
Քեքուշ ու թանկ մորթ ունի,  
Ինքը՝ ագահ, խորամանկ,  
Բույնը հազար ծակ ունի:

### **Շամօ-առաջպատճը**

Անալի կերակուրին ծար կա.  
անալի խելքին ծար չկա:



### **Բառերի գանձատուփ**

1. Խոյը արու ոչխարն է: Ինչ են ասում եղ ոչխարին և ոչխարի  
ծագին: Պատասխանը գտի՞ր առակում:

2. Նախընթրիք բառի նախածանցը ածանց, սենյակ, վերջին  
բառերին միացնելով՝ բառեր կազմիր:



### **Հարցերի և առաջադրանքների արկղին**

1. Աղվեսն ինչպես է կոչում առյուծին:

2. Առյուծն ինչ բառով է բնութագրում աղվեսին:

3. Առյուծի արածն արդար էր:

4. ա) Ըստ նմուշի գրիր օգևել, հարգել, կարդալ, զեալ բառերի  
համապատասխան ձևերը:

Նմուշ՝ բաժակել-բաժակելիր, խաղալ-խաղալ:

բ) Գրածներից երկուսը գործածիր նախադասությունների մեջ:

գ) Ինչ բառեր կավելացնեն քո գրած նախադասություններին՝  
խոսքդ ավելի բարեկիրթ դարձնելու համար:



### **Պատմությունների և զրոյցների զամբյուղ**

1. Պատմիր, թե ինչ ես սիրում ուտել նախաճաշին և ընթրիքին:  
2. Պատմիր, թե հայերը ինչ ծաշատեսակներ են պատրաստում  
տոնական օրերին:



Ռուբեն Մարտիսյան

## ՉՈՐՍ ԽՆՁՈՐ 1

Իմ այգում մի խնձորենի կա, որը երբեք չի հաղկել: Նա մտածեց մի ամբողջ ձմեռ, մի ամբողջ ամառ, մի ամբողջ գարուն և վերջապես զարդարվեց ճերմակ-ճերմակ ծաղիկներով և ունեցավ չորս խնձոր:

Առաջին խնձորը բազմել էր ծառի ամենաբարձր ճյուղին: Նա ամենագեղեցիկն էր: Ամբողջ օրը արևի շողերը գուրգուրում էին նրան, թշիկները համբուրում, դրա համար էլ օր օրի կարմրում էր, պսպղում: Նա շատ հպարտանում էր իր գեղեցկությամբ, շարունակ շուռումուռ էր զալիս, որպեսզի լավ կարմրի: Նրա անունը Հուրի էր:

Երկրորդ և երրորդ խնձորները մի քիչ ավելի ներքևի ճյուղերին էին բազմել: Նրանք հարևաններ էին ու անընդհատ շխկշխկում էին, փսփսում:

Տերևները ծածկել էին նրանց, և Արևի շողերը համարյա երեսները չեին տեսնում: Ամբողջ օրը նրանք ծիծաղում էին, նմանակում, ծաղրում էին Հուրիին, որև արդեն ձանձրացել էր իր գեղեցկությունից: Այդ խնձորներից մեկի անունը Շեկիկ էր, մյուսինը՝ Անուշիկ:

Չորրորդ խնձորը... Սիրտս շամ է ցավում այդ չորրորդ

**երբեք  
զարդարել  
որպեսզի  
համարյա  
զուգել**

խնձորի համար: Նա դժբախտ էր: Կախվել էր ծառի ամենացածր ճյուղից: Ոչ արևի երես էր տեսնում, ոչ էլ քամին էր խաղում նրա հետ: Նրա մեջ որդ կար: Խեղճը ճյուղի վրա դողդողում էր: Նրա անոնքը Ռակեշողիկ էր...

**առաջին  
երկրորդ  
երրորդ  
չորրորդ**

## **Ասույթ**

Մի գովիր մարդու տեսքը, այլ գովիր մարդու խելքը, իմաստությունը, գործը:

Ֆրիկ (միջնադարյան հայ բանաստեղծ)

Արդյո՞ք Գիրեմնիկ,

նկարեցի, որ երեք  
ինչորների անունները -իկ  
կամ -իիկ վերզածանցներով  
են կազմված: Անենու ինչու  
է այդպես:



Արդյո՞ք ինչոնի, -իկ և

-իիկ վերզածանցները նիսպա-  
կան կամ փաղավշական  
իմաստը են հաղորդում բառե-  
րին: Օրինակ՝ չկնիկ, բռնիկ,  
հասրիկ, թիւիկ:



Ուստի ինչդ էլ համարյա ամեն օր լսում են:

անունների փաղավշական նման չենք՝ Արամիկ, Հիլիթիկ  
և այլն: Այդպես էլ այսպեղ է՝ Անուշիկ, Ծեկիկ, Պոկեզողիկ:



## **Բառերի գանձատուփ**

1. Գրիր մերմակ, շող, պսպղակ, դժբախտ, բազմել և արև բառերի հոմանիշները:
2. Գրիր դժբախտ, բարձր, շատ և երբեք բառերի հականիշները:
3. Գտիր խնձորենի, գեղեցկություն, դժբախտ, Անուշիկ բառերի ածակցները և նրանցով մեկական բան կազմիր:
4. Գտիր և դեմ դիմաց գրիր տրված բառերի հակառակ իմաստն արտահայտող գույգ բառերը:

համեստ  
ազնիվ  
հոգատար  
բարի  
աշխատասեր

գոռող, մեծամիտ  
անուշաղիր, անտարբեր  
ծովյ, ալարկոտ  
խարդախ, խաբեքա  
չար, վատ



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Տարվա ո՞ր եղանակի անունը չի հիշատակվում այս հատվածում:
2. Ո՞ր խնձորն էր ամենագեղեցիկը:
3. Չորրորդ խնձորն ինչո՞ւ էր դժբախտ:
4. Խնձորներից ո՞րի անունը հավանեցիր, ո՞րը կառաջարկեիր փոխել:
5. 26, 73, 84, 101, 4000 թվականները գրի՞ր բառերով:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Նկարագրիր գարնանային այգին:
2. Որեւէ ծառի մասին կարդացած հեքիաթներից մեկը պատմիր:

## Եղանակի դասը

### Թվական

Մաթեմատիկայում թվերը գրվում են թվանշաններով, իսկ լեզվում բառերով, որոնք կոչվում են թվականներ:

Թվականները ցուց են տալիս առարկաների թիվ և թվային կարգ կամ հերթականություն: Օրինակ՝ երեք (զիրք), տասնմեկ (աշակերտ), չորրորդ (դասարան), երկրորդ (հարկ):

11-99 երկնիշ թվեր նշանակող թվականները գրվում են միասին՝ մեկ բառով: Օրինակ՝ տասնմեկ, երեսուներեք, քառասունոթ, հիսունմեկ, վաթսունչորս, յոթանասուներկու, ութսունվեց, ինևսունինը:

Եռանիշ և քառանիշ թվեր նշանակող թվականների բաղադրիչները գրվում են առանձին: Օրինակ՝ հարյուր քսան, երկու հարյուր տասնմեկ, երկու հազար ինը:

Առարկաների թվային կարգ ցուց տվող թվականները կազմվում են՝

- -րորդ ածանցով երկու, երեք, չորս թվականներից՝ երկրորդ, երրորդ, չորրորդ,
- -երրորդ ածանցով հինգ և նրանից բարձր թվականներից, օրինակ՝ հինգերորդ, տասներեքերորդ, հարյուրերորդ:

Մեկ թվականից կազմվում է առաջիկ:

## ՉՈՐՍ ԽՆՁՈՐ 2

Մի գիշեր, բոլորովին աննկատ, աշումը մտավ իմ այգին ու հազար գույնով գուգեց բոլոր ծառերն ու թփերը: Այնքան գեղեցիկ էր, որ խենթանալ կարելի էր: Բոլոր գույները երգում էին աշխանը նվիրված մի չքսաղ երգ... Եվ ահա եկավ խնձորները քաղելու ժամանակը:

Հուրիին քաղելու համար սանդուղք բերեցի, զգուշությամբ պոկեցի, որ հանկարծ վայր չընկնի, դրեցի թգենու տերևի վրա, տեղավորեցի զամբյուղի մեջ: Շեկլիկն ու Անուշիկը, առանց սպասելու, որ իրենց պոկեմ, ծիծաղելով իրենց զցեցին զամբյուղը:


**սանդուղք  
զգուշություն  
վայր ընկնել  
ոչ ոք  
զցել  
աղբանոց**

Ոսկեշողիկը... Որդը կերած, ճլորած խնձորն ո՞ւմ է պետք: Նա ընկավ գետնին, և ոչ ոք նրան չնկատեց: Ճիշտ է, որդը նրան կերել էր, բայց սև, հասած ու պսպղուն կորիզները մնացել էին նրա ծոցի մեջ...

Հուրիին ես նվիրեցի իմ բարեկամ նկարչին: Նա հիացավ Հուրիի գեղեցկությամբ: Տարավ իր արվեստանոցը, որը ներկերի բույրով էր լցված, դրեց բյուրեղապակյա մի սքանչելի սկահակի մեջ: Երեսուներեք անգամ նկարելուց հետո տեսավ, որ Հուրիին փափկել է, կորցրել իր գեղեցկությունը: Նկարիչը նրան վերցրեց ու զցեց աղբանոցը:

Շեկլիկից ու Անուշիկից հրուշակագործը կարկանդակ պատրաստեց: Ազնիվ խոսք, այնքան համեղ էր, այնքան համեղ, որ բոլոր սիրով հիշեցին նրանց անունները:

Այստեղ վերջանում է չորս խնձորի պատմությունը... Բայց ոչ,



ոչ, սպասեք: Քիչ մեաց մոռանայի:

Ոսկեշողիկի կորիզները մեացին հողի մեջ: Հողը նրանց գրկեց, տաքացրեց, սևեց իր սրտի մեջ պահած ամենահամեղ սևուսդով: Գարենանը կորիզներից կանաչ ծիլեր դուրս եկան, որոնք պիտի դառնան չորս նոր խնձորենի... Ես նրանց շատ եմ սիրում, այդ չորս Ոսկեշողիկներին...



### Ասացվածք

Ամեն գործի վերջն է գովելի:



Գիրեմնիկ  
զան հեքիարում՝ գրված էր,  
որ հրուշակագործը ինչորով  
կարկանդակ պապրասրբեց:  
Ես մինչև հիմա գիրեի, թե  
զա խոհարարն է անում: Իսկ  
հիմա նոր ու գեղեցիկ մի բառ  
կրուզակացրեց: Կրացագրեան:



### Բառերի գանձատուիք

1. Գրիր չքնառ, զցել, տարանալ և մնա: Բառերի հոմանիշները:
2. Արվեստանոցը նկարչի աշխատանոցն է, ստեղծագործելու տեղը: Անոց վերջածանով 3-5 բան գրիր:

ինչուի՞ զան, հարցիդ  
պապրախանը սկսեմ հրուշակից:  
հրուշակ նշանակում է «պանապան  
փաղյրասթենիք» իմորեղեն, կոնֆեր,  
անուշեղեն»: Արդեն հարսկ է որ  
որովայսուհետու հրուշակ,  
այսինքն՝ փաղյրասթենիք  
պապրասրող մանագերն է: Իսկ  
խոհարարը ճաշեր և այլ ուրեմնիներ  
եփող-պապրասրողն է:



3. Ակահակը ապակյա կամ մետաղյա մրգաման է: Իսկ ինչի՞ մեջ են դնում ծաղիկները, ինչի՞ մեջ են լցնում աղը, շաքարը:

4. Հրուշակագործ բառի օրինակով գործ բաղադրիչով վերջացող 2 բան ասա:

5. Աև, բույր, ազևիվ և սիրու արմատներով 1-ական բան կազմիր:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Խնձորերից յուրաքանչյուրն ինչ բախտի արժանացավ:
2. Քո կարծիքով ո՞ր խնձորն է ավելի շատ օգուտ տվել մարդկանց:
3. Հեքիաթի համար նոր վերևագիր առաջարկիր:
4. Աշխան այգին ինչ գոյներով էր ներկվել:
5. Բույրը անուշ հոտն է: Ինչի՞ բույրն ես սիրում:



Նկարից խնչորը դրեց  
սկսակի մեզ և նկարեց:  
Ժիրտեմ, որ այդպիսի նկարը  
առանձին անոն ունի, բայց  
չեմ հիշում:

Երբ այն դեմքի  
նկար է, կոչվում է  
լիմանիկար, բնության  
գրեսարան՝ բնանկար, ծո-  
վային գրեսարան՝ ծովա-  
նկար: Իսկ երբ նկարիչն իր  
պարկերն է սպեզզում, ինչ-  
ուանիկար է: Այդ մեկը չգիտեմ:



Այդպիսի ուրիշ  
բառեր ել կան: Օրինակ՝  
յուղանկար և զրանկար  
այսինքն՝ զրանք յուղա-  
ներկով և զրաներկով են  
արեղջմել: Բայց աս երեք  
կապ չունի գո հարսի հետ:

Իիշեսի իիշեսի:  
Այս նկարը որ մե-  
ռած բնությունն է  
պարկերում ճաղկամա-  
նի մեզ դրված ծաղիկներ,  
պարողներ՝ սկսակի մեզ  
կամ սեղանին, կամ էլ  
ապանփած թոշուններ. կոչվում  
է նարյուրունոց:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Պատմիր հեքիաթը՝ խնձորերից մեկի ճակատագրի մեջ փոփոխություն մոցնելով:
2. «Ծառատուսկ» վերևագրով փոքրիկ շարադրություն գրիր:



Արշավիր Դարբնի

## ՁԵՌ-ՔԵՐԸ

Մարդուն գեղեցիկ ձեռքեր են տրված՝  
Ցանելո՞ւ համար,  
Հնձելո՞ւ համար,  
Կալսելո՞ւ համար,  
Ուրիշի վերքեր կապելո՞ւ համար,  
Մայիսյան վարդեր փնջելո՞ւ համար,  
Մանուկ ու մերիկ գրկելո՞ւ համար,  
Աղբյուր ու ճամփա բացելո՞ւ համար...  
Հարկ եղած դեպքում՝

Աևարգ թշնամուն խոցելո՞ւ համար:  
Մարդուն գեղեցիկ ձեռքեր են տրված՝  
Սվինամարտում հաղթելո՞ւ համար,  
Իր ծանր բեռը ռասելո՞ւ համար,  
Ուրիշի ձեռքը  
Բարեկամաբար սեղմելո՞ւ համար,  
Քեքուշ շոյանքով  
Ուրիշի ցավը մեղմելո՞ւ համար:

**աղբյուր  
ճամփա  
հաղթել**

## Առածներ

Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես:  
Մի ձեռքը ծափ չի տա:

## Խմասքախոսություն

Մարդու կյանքի ամենամեծ երջանկությունը ուրիշներին օգտակար լինելու մեջ է:

  
Արեգի Գիրունիկ, մանուկ  
ու մերիկ բառակապակցությունը  
զարմանացի թվաց ինչ: Ի՞նչ կարծիք  
ունես:

ինչուիկ զան  
սս ժողովրդական  
չե է: Որոշ բառերի  
այլ բարբառներում,  
ինսական լեզվում

  
փոխավում է ե-ի, օրինակ՝ ասլ -  
սե (այսպեսից էլ սեղվոր), զայլ - զել (գիրտն  
կա զելիւող զուն): Այդպես էլ մայր - մեր, որի  
փաղաժշկական չեն է մերիկ: Ժողովրդական երգերում,  
եթե ուշադիր լինեն, կհանդիպեն այդ բառին: Կա արև  
մեր ու մանուկ պարբերակը ևս, այսինքն՝ մայր ու մանուկ:  
Պարզ է, չի՞:



### Բառերի գանձատուփ

1. Գրիր գեղեցիկ, մանուկ և ծամփա բառերի հոմանիշները:
2. Գրիր ծանր, քերուշ և թշնամի բառերի հականիշները:
3. Աևարդ բառը նշանակում է «ստոր, նվասո»: Որիշ ինչպիսին  
է լինում թշնամին:
4. Բացատրիր մայիսյան և բարեկամաբար բառերի կազմու-  
թյունը: Գտածդ վերջածանցներով որիշ բառեր կազմիր:
5. Սվինամարտ բառի վերջին բաղադրիչով բառեր կազմիր:



### Հարցերի և առաջադրանքների արկողիկ

1. Բանաստեղծության շատ բառեր շեշտ են կրում, փորձիր  
կոահել, թե ինչո՞ւ:
2. Ավելացրո՛, թե Էլ ինչի համար են ծեռքերը:
3. Բանաստեղծությունը միայն ծեռքերի մասին է:
4. Ո՞րև է բանաստեղծության հիմնական միտքը:
5. Բանաստեղծությունից դուքս գրիր գործողություն ցույց տվող  
հինգ բառ:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. «Ձեռքերը» վերևագրով շարադրություն գրիր:
2. Բարի հերոս ունեցող մի հեքիաթ պատմիր:

Բույրիկ, զիտեն, թէ մարդովսի ի  
նչ անցամ: Չեղքերի մարներն  
անոններ ունեն: Խարսնացոն  
մարսնին ո՞ր մարդին էր որել  
խարսին, օրինակ, ինչպես պիտի  
պարասիսնեմ:

հեղափրքիր  
հարց լինեցիր: Ան-  
ներ ունեն: Օրինակ, առում ենք  
«խարսնացոն մարսնին զնոսմ է մար-  
նեմարդին» (այսինքն՝ մարսնու մարդին):

Սոսազկում եմ կարծազ ժողովրդական «Բութ  
մարն ասաց» արեղջագործությունը որպես այդ  
անոնները հերթով ներկայացված են:



## ԲՈՒԹ ՄԱՏՆ ԱՍԱՅ (Ժողովրդական)

Բութ մատն ասաց. «Եկան, եկան»:

Յուցամատն ասաց. «Ովքեր եկան»:

Միջեւամատն ասաց. «Գայլերն եկան»:

Մատնեմատն ասաց. «Դե շուտ, դե շուտ, եկեք փախչենք»:

Ճկուցը ասաց. «Ճստլիկ եմ, պստլիկ եմ,

Ոտքեր չունեմ, թևեր չունեմ,  
ինչպես փախչեմ...»:

Բութ մատն ասաց. «Մենք չենք փախչի,

Գայլերի դեմ չենք նահանջի:

Ուս ուսի տանք,

Դառնանք բռունք,

Զարդենք երանց քիթ ու մոռթ»:

փախչել  
ճկուց  
ուս ուսի  
բռունք  
զարդել

Մշակումը՝ Յուրի Սահակյանի

## Առած-սասացվածքներ

Երկու մուկ կիսեղդեն մեկ կատու:

Կաթիլ-կաթիլ՝ լիճ կլինի:

Ուս ուսի որ տանք, սարեր շուտ կտանք:



## Բառերի գանձատուի

1. Բացատրի՛ր ցուցամատ, միջևամատ, մատնեմատ բառերը:
2. Մարդու մարմնի մասերի ինչ անուններ կան ոտանավորի մեջ:
3. Ինս ուսի տաղ նշանակում է «իրար հենարան լինել, օգնել, աջակցել», իսկ ինչ է նշանակում զլոխ գլխի տաք: Ճիշտ պատասխանն ընտրի՛ր տրվածներից՝ ա) կովել, բ) խորհրդակցել, գ) պատահաբար իրար զարկվել:
4. Ժողովրդական մոռու բառի փոխարեն գրական հայերենում ինչ են ասում:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ցույց տուր մատներդ և ասա՞ նրանց անունները:
2. Ո՞րն է ոտանավորի հիմնական ասելիքը:
3. Հավատո՞ւմ ես, որ «Ծյուղ կանգնի, գերաև կը լուսրի»:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. «Մատների բողոքը» վերևագրով հեքիաթ հորինիր:
2. Մի ուրախ պատմություն պատմիր:



## Լեզվաբանի դասը

### Բայ. բայի դեմքը և թիվը

Գործողություն ցուց տվող բառերը կոչվում են բայեր: Օրինակ՝ գրել, հարգել, ծիծաղել, կարդալ, ժպտալ:

Նախադասության մեջ բայերը տարբեր փոփոխությունների են ենթարկվում և նշանակում են՝

խոսող՝ առաջին դեմք. (իս) հարգում եմ, (մենք) գրել ենք,  
խոսակից՝ երկրորդ դեմք. (դու) հարգում ես, (դուք) գրել եք,  
ոչ խոսող, ոչ խոսակից, այլ մեկ որիշը՝ երրորդ դեմք. (ևս) հարգում եմ, (ևրանք) գրել ենք:


Գործողությունը կարող է կատարել մեկը՝ գրեցի, ինձել ես, եռում  
է (եզակի թիվ) կամ մեկից ավելի անձեր կամ առարկաներ՝ գրում  
ենք, կարդալու եք, գևացին (հոգնակի թիվ):





# ՈՒՍ ՈՒՍԻ ՈՐ ՏԱՆՔ, ՍԱՐԵՐ ՇՈՒՌ ԿՏԱՆՔ

(հայկական ժողովրդական հեքիաթ)



Սողոմոն թագավորը մի փիղ ուներ: Էնքան հսկա  
էր, որ ամեն ինչ ոտևատակ էր տալիս: Բայց քանի  
որ թագավորի սիրելի փիղն էր, անպատճ էր  
մնում: Մեծ վնաս էր հասցենում էս հսկան,  
մանավանդ մրջյուններին: Պառկում ու  
մի քանի մրջևապալատ միանգամից էր  
ավերում, ոտքը դնում ու մի պալատ մրջյուն  
էր ջնջում, կնճիթով քաշում ու մի պալատ էր  
երկինք փչում:

Ճարահատյալ մրջյունները զնացին Սողո-  
մոնի թագավորի մոտ:

Իմաստուն թագավորն ապրած կե-  
նա,- ասացին,- քո փիղը մեր տներն ավերում,  
մեր ցեղը ջնջում է, արգելի՞ր:

- Ինչ,- գոռաց թագավորը,- մրջյուններն ով են,  
որ նրանց համար իմ փոխ առաջ արգելք դնեմ:

Երկրորդ, երրորդ անգամ զնացին գանգատի,  
թագավորը դարձյալ չլսեց: Եվ թագավորից հույսները կտրած՝  
մրջյունները որոշեցին մեծ ժողովի հավաքվել: Եկան աշխարհի  
բոլոր մրջյունները՝ մեծ ու փոքր, առողջ ու տկար, թույլ ու ուժեղ,  
անգետ ու գիտուն: Եկան, խելք խելքի տվեցին ու փոխին հաղթելու  
հեարը գտան: Մրջևավարի լուս գործի կպան ու փոխին վայել  
գերեզման փորեցին: Ծանր փեշոց ու խոլ ոտևաձայներ եկան.  
մրջյունները սսկվեցին: Դո՞փ, դո՞փ, դո՞փ. փիղը գալիս էր ավերելու:  
Ու մեկ էլ՝ թըմփ... հսկան փոսն ընկավ, ոտքը տևկեց. մնաց ու  
մնաց:

Օրեր անցան, փիղը չկար: Թագավորը ծառաներին ուղարկեց  
փևտրելու: Էստեղ փիղ, Էստեղ փիղ՝ փիղը չկար:

Մրջևաբների մոտից գարշահոտ էր գալիս: Գնացին տեսան, որ


<b>պառկել</b>
<b>միանգամից</b>
<b>արգելել</b>
<b>դարձյալ</b>
<b>հաղթել</b>

փիղը սատկել է: Ծառաները Սողոմոն իմաստունին հայտնեցին.

- Մեր թագավորը թող շատ ապրի, մը ջունները թակարդ են սարքել, փիղն ընկել է մեջը, սատկել:

Սողոմոն իմաստունը ողբաց իր փոխ մահը, ափսոսաց, բայց և մտածեց իրենից հետո եկողների համար. «Թշնամիդ թեկուզ մրջյուն լինի, մի արհամարհիր»:

Մշակումը՝ Նելլի Հակոբյանի



### Առաճներ

Փոքրիկ մրջյունները կարող  
են մեծ ծառ տապալել:

Ճապոնական

«Էմն» ու «քոնը» տուն կքանդի:

Հայկական

### Բժանակախոսություն

Թույլ հակառակորդին մի արհամարհիր, իսկ ուժեղից մի վախեցիր:



### **Բառերի գանձատուփ**

1. Գրիր հսկա, միանգամից, զանգատ, փևորել և ավերել բառերի հոմանիշները:

2. Ըստրիր և զուգգերով գրիր իմաստով մոտ բառերը.

պալատ	բույն	խրճիթ	հոր
որջ	դղյակ	փոս	տեսակ

3. Հեքիաթում միևնույն նախադասության մեջ հականիշների չորս զուգ կա: Գտիր դրանք:

4. Նեացին տեսան փիղը սատկել է նախադասությունից եզրակացրու՛, թե սատկել բառը ե՞րբ է գործածվում:

**5.** Միջևաբների մոտից գարշահոտ էր գալիս նախադասությունից կռահիք, թե գարշահոտությունը վան, թե լավ հոտն է:

**6.** Որոնք են ժողովրդական էս, Եսուն, Էսուն, Էլքան բառերի գրական ձևերը:



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

**1.** Ո՞ր նախադասության մեջ է ամփոփված հեքիաթի հիմնական ասելիքը:

**2.** Մեր թագավորը թող շատ ապրի արտահայտության հոմանիշը գտի՞ր հեքիաթում:

**3.** Կազմիր ուսնաձայն, արոտավայր, մրջյուն, ավագան, փիղ գոյականների հոգնակի թիվը:

**4.** Գրի՞ր գևսդ, ուղարկել բայերի ներկա, անցյալ և ապանի ժամանակների մեկական ձև:



### **Պատմությունների և զրույցների զամբյուղ**

**1.** «Մանուկների Աստվածաշնչում» կարդա Սողոմոն իմաստունի մասին և պատմիր:

**2.** Հետևիր մրջյունների աշխատանքին և պատմիր:



**Հեքիաթի վերնագրին հոմանիշ մեկ առած կամ ասացվածք ասա:**



### **Հեղվաքանի դասը**

#### **Բայ. բայի ժամանակը**

Նախադասության մեջ բայերը կարող են տարբեր փոփոխությունների ենթարկվել և նշանակել՝

• խոսելու պահին կատարվող գործողություն (ներկա ժամանակ), օրինակ՝ զրում եմ, ներկում են,

• խոսելու պահից առաջ կատարված գործողություն (անցյալ ժամանակ), օրինակ՝ զրում եմ, կառուցել եմ, թուավ, ներկել են,

• խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն (ապանի ժամանակ), օրինակ՝ զրելու եմ, կերպես, պիտի զենաեք:

## ՍԵԽԻ Թ-ԱԽՈ ՈՒ ԸՆԿՈՒԶԵՆԻ

Արևի շողով,  
Անձրևի ցողով,  
Երբ Սեխը ծաղկեց  
Եվ հյութով լցվեց,

Սկսեց ինքը իր գովքը երգել,  
Իսկ Ընկուզենուն ծաղրել, ծանակել,  
Բայց Ընկուզենին համեստ ու խոնարհ  
Ասում էր նրան շատ համբերատար.

- Ով շատ դիմանա,

Թող նա պարծենա...

Աշունը անցավ, եկավ ցուրտ ձմեռ,  
Սառուցով ծածկեց դաշտ, հովիտ ու լեռ,  
Մեր Սեխի թուփը սառեց, փայտացավ,  
Իսկ Ընկուզենին դարեր դիմացավ:



**ընկուզենի  
խոնարհ  
սառոց**



### Վարդվածքներ

Շատ պարծեցողը շուտ ցած կը նկնի:

Նախ առուն թոիր, հետո՝ քեզ գովիր:



### Բառերի գանձատուի

1. Առակի նոյն տողում հոմանիշ բառեր կան: Գտիր դրանք:
2. Գրիր արև, շող, լեռ, բայց, ու բառերի հոմանիշները:
3. Գովքը երգել բառակապակցության փոխարեն նոյն արմատներով մեկ բան ասա: Այն ինչ է նշանակում:
4. Պատասխանի՛ր հարցին՝ համապատասխան բառը ընտրելով  
տրվածներից՝ հոգատար, ազնիվ, բարի, համբերատար, համեստ:  
Ինչպես ենք անվանում այն մարդուն, որը՝
  - ա) չի պարծենում, իրեն ուրիշներից բարձր չի դասում,
  - բ) մեղմ է, վատ բան չի կամենում ուրիշներին, մարդկանց լավն է ցանկանում, լավություն է անում նրանց,

- զ) հոգ է տանում ուրիշներին, օգնում է նրանց, ուշադիր է,  
 դ) չի խաբում, խարդախություն չի անում, շիտակ է,  
 ե) համբերությամբ կատարում է դժվար աշխատանքները,  
 համակերպվող է, չի հրաժարվում իր պարտականություններից:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Քո բառերով պատմի՞ր առակի բովանդակությունը:
- Մարդկանց բնութագրող ինչ բառեր կան առակի մեջ: Դրանք  
ո՞ր հերոսին են վերաբերում:
- Ինչպիսի՞ մարդկանց է խորհրդանշում Սեխը:
- Ո՞րն է առակի հիմնական իմաստը:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

- Բոցսերի մասին ինչ առակ կամ հեքիաթ գիտես: Պատմի՞ր:
- Ընկուզենու մասին հետաքրքրական տեղեկություններ հա-  
վաքիր և ներկայացրո՛ ընկերներիդ:



### Լեզվաբանի դասը

#### Օժանդակ բայ. դրական և ժիտական ձևեր

Բայերի տարբեր ձևերի կազմությանը մասնակցում են օժանդակ կամ օգնական բայերը: Օժանդակ բայերը գործածվում են եզակի և հոգեակի թվով, ունեն ներկա և անցյալ ժամանակներ:

եմ	ենք	էի	էինք
լսում	ես	եք	լսում էիր էիք
է	ենք	էիք	էին

Մրանք կոչվում են օժանդակ բայի դրական ձևեր:

Երբեմն հարկ է լինում ցուց տալ, որ գործողությունը չի կատարվել, չի կատարվում կամ չի կատարվելու: Այդ դեպքում օժանդակ բայի սկզբից ավելացնում ենք չ մասնիկը: Օրինակ՝ չեմ խոսում, չի խոսում, չեր նկարում: Մրանք օժանդակ բայի ժիտական ձևերն են:

Ժիտականը կազմելիս օժանդակ բայի գրությունը չի փոխվում չեմ, չես, չի (կամ չէ), չենք, չեք, չեն, չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին: Միայն է-ն է դառնում է ի, ինչպես՝ խաղում է - չի խաղում: Կան դեպքեր, երբ է-ն անփոփոխ է մնում ինչպես՝ հոգեած է - հոգնած չէ:



## ԴԵՂԱԵՆԻ

Այգում ընկուզենու կողքին աճել էր դեղձենին: Սա նախանձով նայում էր շռայլորեն ընկույզ բռնած հարևանի ծյուղերին:

«Ինչից է, որ նա այդքան պտղառատ է, իսկ ես՝ ոչ, - չէր դադարում դժգոհել անխոհեմ ծառը:- Միթե սա արդարություն է: Թող ես էլ այդչափ դեղձեր ունենամ: Ընկուզենոց ինչո՞վ եմ պակաս»:


- Ուրիշի ունեցածին աչք մի դիր,- մի անգամ ասաց ծեր սալորենին: - Ինչ է, չնա նկատում, թե ինչքան ամուր բռն ու ճկուն ծյուղեր ունի ընկուզենին: Ավելի լավ կլինի, եթե մոթմոթալու և նախանձելու փոխարեն ջանաս համով-հոտով դեղձեր հասցնել:

Բայց սև նախանձից կուրացած դեղձենին չուզեց ականջ դնել սալորենու բարի խորհրդին, և նրա վրա ոչ մի խոսք չազդեց: Դեղձենին արմատներին խիստ հրաման տվեց ավելի խոր միսրածվել հողում ու ավելի շատ կենարար հյութեր ու խոնավություն քաղել նրանից: Ծյուղերին հրահանգեց որքան կարելի է խիտ պտղակալել, իսկ ծաղիկներին՝ առանց բացառության պտուղների վերածվել:

Երբ փթթումն անցավ, ծառը ամբողջովին ծածկվեց հասունացող պտուղներով:

Դեղձերն օրեցօր հյութով էին լցվում և ավելի ծանրանում: Աստիճանաբար ծյուղերը չէին կարողանում դիմանալ պտուղների ծանրությանը:

Ու մի օր էլ ծառը ծանրությունից սկսեց տնքալ, բռնը ծռնչոցով



**մյուղ  
դեղձ  
մխրճել  
փթթել**

Ճաք տվեց, իսկ հասուն դեղձերը թափվեցին գետնին, որտեղ նեխեցին-կորան անվրդով ընկուզենու ստվերի տակ:

### **Առաջ**

Հարևանի հացը մեծ է երևոս:



### **Բառերի գանձատուի**

1. Ինչպիսին են լինում նախանձը, խորհուրդը, հրամանը: Պատասխանիր ըստ հեքիաթի:

2. Գրիր անխոհեմ, աստիճանաբար և ամբողջովին բառերի հոմանիշները:

3. Յուրաքանչյուր բառակապակցության դիմաց գրիր համապատասխան բառը:

Նմուշ՝ պար գալ – պարել:

**ա)** Ճաք տալ, **բ)** հրաման տալ, **գ)** միտք անել, **դ)** խորք ասել:

4. Դեմ դիմաց գրիր դարձվածքները և նրանց իմաստները:

աչք դնել

կոահել, հասկանալ

ականջ դնել

հավանել, ձեռք բերելու մտադրություն ունենալ

աչքի ընկնել

լսել

գլուխ պահել

ուշադրություն գրավել, նկատվել, երևալ

գլխի ընկնել

աշխատանքի մեջ եռանդ չցուցաբերել



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. Ըստ հեքիաթի շարունակիր դեպքերի նկարագրությունը:

**ա)** Այգում ընկուզենու կողքին դեղձենի էր աճել:

**բ)** Դեղձենին նախանձով էր լցված ընկուզենու նկատմամբ. որի ծյուղերին անթիվ ընկույզներ կային:

**գ)** .....

2. Համարուտ նկարագրիր հեքիաթի ծառերը:

3. Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:



## Հեքիաթների զամբյուղ

- Որևէ հեքիաթ պատմիր նախանձ մարդու մասին:
- Հեքիաթը վերապատմիր՝ նոր հերոսներ ավելացնելով:



## Իմաստունի խորհուրդները

Բարեկամ սովորիր գնահարել այն, ինչ ունես շնորհակայ եղիր զրա համար: Պարզ վերմակիդ չափով մեկնիր հույսով գո ոմերի վրա՝ դիր: Երբեք ուրիշի ունեցածին աչք մի՛ դիր մի՛ նախանձիր: Պարիշին վայր բան մի՛ կամեցիր: Վարվիր այնպես, ինչպես ուզում ես, որ գեղ հետք վարվեն:

## Լեզվաբանի դասը

### Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման և պատակի

Մարդիկ իրենց մտքերը հաղորդում են նախադասությունների միջոցով: Երբեմն նախադասություններով պատմում են այն, ինչ տեսել են, մտածել կամ զգացել (Մի այգում ընկույզենու կողքին աճել էր ոկողձիկիլ), երբեմն հարցելում են այն, ինչ ուզում են իմանալ (Ինչո՞ւ է այս ծառը պաղպաղատ), երբեմն իրար խնդրում են կամ խորհուրդ տալիս որևէ բան անել կամ չանել (Ուրիշի ունեցածին աչք մի՛ դիր), կամ էլ բացականչությունների միջոցով արտահայտում են զգացած հիացմունքը, որախությունը, ցավը, զարմանքը (Շեղձերի այլրանի հյութեղ էիլ) և այլն:



## Դադարի պահ

Ըստ գովների կարդա՛ բառակապակցությունները:

լացող

դարավոր

կաղնի

քունեսի



## ԳԵՏԸ

Գետը լեռներից շառաչով գալիս  
Եվ անց է կենում դաշտերի միջով,  
Կանչում-կարկաչում, հորձանք է տալիս,  
Ափերն է զուգում զմրուխտ կանաչով:

Պաղ ջուր է տալիս մարդուն ու բույսին  
Եվ կաթիլս անգամ զուր չի կորցնում,  
Կյանքի է կոչում կայաներ լույսի  
Եվ ինքն իր ծամփին լույս տալով գնում...

Այսպես վաստակած նա ծով է մտնում,  
Եվ ծովն է վերջին կայանը նրա,  
Բայց ծովի մեջ էլ հանգիստ չի գտնում,  
Նավեր է պահում իր կրծքի վրա:

Դու էլ գետի պես անցիր քո ծամփան,  
Եվ նման եղիր գետի հորձանքին,  
Որ կյանքիդ վերջին կայանում անգամ  
Ինչ-որ մի բանով պետք լինես կյանքին:

### Հանելուկ

Երգ է ասում անվերջ,  
Ո՞չ ցավ ունի, ո՞չ վիշտ,  
Գնում է, հա՛ զնում,  
Բայց իր տեղում է միշտ:



**հորձանք  
զմրուխտ  
կործք**





## Բառերի գանձատում

1. Հորձանք նշանակում է «ջրերի հորդ հոսանք», իսկ հորձանք տալ՝ «բարձր ու մեծ ալիք բարձրացնել»: Հորձանք գոյականին տալ-ը ինչի իմաստ է հաղորդում:
2. Զմրուխտը կաևաչ գուցի թանկարժեք քար է: Զմրուխտ բառն ինչ է նշանակում զմրուխտ դաշտեր բառակապակցության մեջ:
3. Գրիր զուգել, պաղ և ճամփա բառերի հոմանիշները:
4. Գրիր զալ, մտել, կորցել և տալ բայերի հականիշները:

**Արթեյի՛ Ժիրեմիկ**

ինչպում եմ բացարձեա,  
թէ նյացես վասպակած նու  
ծով է մ'ընում նախազա-  
սոթյան մեզ ի՞նչ է նշա-  
նակում վասպակած քառը:  
**Ինչուիկ**



**Արթեյի՛ Ընկերուիկ**  
հարցիդ պարասիս-  
նելու համար բառարան  
բացեար: Ժիրեմ, այնուղե-  
նեկու վասպակել կա: Մեկը  
նշանակում է «աշխապան-  
գով փող չեռք բերեց  
պանայ» (Այրծանութեան պա-  
մար վասպակեց), իսկ մյուսը՝  
«աշխապարեց, չարչարվել, հոգնել»:

Քո ուզարկած նախադասության մեզ  
երկրորդ վասպակել-ն է, ուստի կարեցի է  
ասեց Ժիրեմ ծով է մ'ընում բայր աշխապան:  
հոգնած չարչարված:

**Ժիրեմիկ**



## Հարցերի և առաջադրանքների արկողիկ

1. Կարդա այն տողերը, որոնց մեջ ամփոփված է բանաստեղ-  
ծության հիմնական գաղափարը:
2. Գետն ու մարդը նմանություն ունեն:
3. Տարբեր տարիքներում մարդն ինչպիսին է լինում:
4. ա) Ո՞րն է Հայաստանի մայր գետը:  
բ) Հայաստանը ծով կամ ծովային սահման ունի:
5. Բանաստեղծության մեջ զոհի՛ր այն նախադասությունը, որով  
հեղինակը խորհուրդ է տալիս քեզ:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Նկարագրիր գետը տարվա տարբեր եղանակներին:
2. Հեքիաթ հորինիր ծովի կյանքի մասին:

Ինչ է նշանակում լոյսի կայան բառակապակցությունը: Մեկ բառով ինչպես կասես:



Անահիտ Պարսամյան


### ՀՐԱՅ ՎՐԱԽԵ


Նոր տարվա գիշերը Բակուրը շատ նվերներ էր պատացել, դրանց թվում մատիտներ ու վրձին՝ նկարիչ հորեղբորից:

Առավոտյան նա սկսեց մեկիկ-մեկիկ դասավորել նվերները, գրքերը, մատիտներն ու վրձինը, ավտոմեքենան ու ձիուկը, ինքնաթիռը, կոնֆետները... Երբ ամեն ինչ դասավորել էր, ձեռքն առավ տեսրե ու վրձինը: Պատկերացրեց մի թմբիկ ծնձղուկ ծառի ճյուղին և մտածեց. «Նկարեմ ծընծղուկին»: Ու սկսեց: Նկարեց թե չե, ծնձղուկն իսկովն կենդանացավ՝ ծիվ-ծիվ, պտույտներ գործեց սենյակում և բաց օդանցքից դուրս թռավ:

Այ քեզ բան... Բակուրը սկսեց ուշադիր զնենել վրձինը, ուրեմն կախարդական է:

Այս ամենը տեսնում էր զարդարված տոնածառի տակ կանգնած Զմեռ պապը և քթի տակ ժպտում: Իհարկե, վրձինը հորեղբայրն էր նվիրել, իսկ Զմեռ պապն էլ որոշել էր վրձնին կախարդական հատկություն պարզեցնել՝ կենդանացնելու, իրականացնելու այն, ինչին նա կոհիպչի:





Բայց ինչպես ամեն ինչ, վրձնի կախարդանքը էլ իր սահմանն ուներ: Նա կախարդական էր միայն Նոր տարվա առաջին օրը:

Երբ զարմացած Բակուրիկը շուտումուռ էր տալիս վրձինը, Զմեռ պապը նրան ասաց այդ մասին:

«Այդպես,- մտածեց Բակուրը,- ուրեմն պետք է շտապել»:

Նա արագ բակ դուրս եկավ:  
Պապիկի տնկած խաղողի տունկը

դեռ աշխանը սկսել էր չորանալ: Բակուրը վրձինը մի քանի անգամ տարավ ու բերեց բնի վրայով:

Իհարկե, քանի որ ձմեռ էր, տունկը չկանաչեց, բայց զարևանն անպայման կկանաչի:

Մոտակայքում թափառում էր չգիտես որտեղից հայտնված անտուն մի շնիկ:

«Տերերը մոռացել են նրան», - որոշեց Բակուրը ու ցանկապատի տակ՝ ծյան վրա, նրա համար փոքրիկ ու հարմար մի բույն նկարեց: Նկարեց թե չէ, բույնն իսկույն դարձավ իսկական:

Հետո Բակուրը տուն վազեց: Ամանեղենի պահարանում փետրեց գտավ ունեկը կոտրված գեղեցիկ կարմիր գավաթը, որ ամռանից պահում էր, որպեսզի հատուկ սոսնձով կպցնի: Վրձինն իր գործն այստեղ էլ արեց: Բաժակը տեղնուտեղը կպավ ամրացավ, ասես պոկված չէր էլ եղել:

Մութեն ընկնում էր արդեն, օրն ավարտվելու վրա էր, վրձնի կախարդանքն էլ՝ հետը, և տղան շտապում էր: Նա ուզում էր, շատ էր ուզում նավակ նկարել, իր ուզածի պես, որպեսզի նավակը դառնար իրական:

Արդեն սկսել էր, երբ հիշեց հարևան բակում ապրող Խաչիկ պապին: Խաչիկ պապը կույր էր:

**ավտոմեքենա  
վրձին  
Զմեռ պապ  
Նոր տարի  
բազկաթոռ  
առողջանալ**

Մթևում էր, երբ Բակուրը տնից դուրս եկավ:

- Այդ ու՞ր, - հարցրեց մայրիկը:

- Հիմա կզամ, - գոչեց Բակուրն ու վազեց: Հետո կարող էր ուշինել:

Երբ նա շնչակտուր ներս ընկավ խաչիկ պապենց տուն, տնեցիները նստած հեռուստացուց էին նայում, իսկ խաչիկ պապը, լուր ընկղմված իր բազկաթռռում, համրիչի հատիկներն էր շարժում...

Բակուրիկը մոտեցավ և վրձինը քսեց նրա աչքերին:

Խաչիկ պապի աչքերը առողջացան. նա սկսեց տեսնել: Ինչ ուրախություն էր:

Օրը վերջանում էր արդեն, վրձինը շուտով դառնալու էր սովորական, բայց Բակուրիկը շատ գոհ էր և ուրախ:



### Հանելուկ

Փայտե մարմին,  
մազոտ գլուխ:



### Բառերի գանձատուփ

1. Բաժակ բառի հոմանիշը գտնիր հեքիաթի միևնույն հատվածում:

2. **ա)** Արտագրիր առայիտյան, կախարդական, ձիուկ, ամսնեղեկ, շնիկ, նավակ, պահարան, կախարդակ, ունեցի, որսիուրյուն բառերը և ընդգծիր ածանցները:

**բ)** Գրածող բառերից որոնք փոքրացնուիք նշանակություն ունեն:

### Առացվածք

Դու որիշին օգևիր,  
Աստված էլ քեզ կօգևի:

3. Ո՞ր բառերից են առաջացել տրված նախադասություններում գործածված բնի ձևերը: Բացատրի՛ր այդ բառերը:

**ա)** Բակուրը վրձիև մի բանի անգամ տարավ ու բերեց ծառի բնի վրայով:

**բ)** Ճեմուկի բնի մեջ երեք ծոտիկ էին որպախ ծլվլում:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հրաշքների հավատում են:
2. Թվարկի՛ր կախարդական վրձնի հրաշքները:
3. Նկարագրի՛ր Բակուրիկին:
4. Տղան ո՞ր հրաշքից ավելի շատ ուրախացավ:
5. Բակուրիկը ո՞ր գործը կիսատ թողեց:
6. Դու ի՞նչ կանեիր, եթե կախարդական վրձին ունենայիր:
7. Սիրում ես նվերներ ստանալ, իսկ նվիրել:



### Պատմությունների զամբյուղ

1. «Ամանորյա հրաշք» վերևագրով շարադրություն գրիր:
2. Հիսուսի հրաշքներից մեկը պատմի՛ր:




### Լեզվաբանի դասը

#### Պատմողական և հարցական նախադասություններ

Այն նախադասությունը, որով ինչ-որ բան են պատմում, կոչվում է պատմողական նախադասություն: Օրինակ՝ Այսօր արևոտ եղանակ է: Վաղվանից ամեն առավոտ մարզակը եմ անելու:

Այն նախադասությունը, որով հարցնում են մի բանի մասին, կոչվում է հարցական: Օրինակ՝ Այսօր արևոտ եղանակ է: Տարին բանի օր ունի: Ո՞վ է ստեղծել հայերենի այբուբենը:

Հարցական նախադասության մեջ հարցում արտահայտող բառը միշտ արտասանում ենք հարցական ինչերանգով, իսկ գրելիս այդ բառի վերջին ծայնավորի վրա հարցական նշան ենք [՝] դնում:



## ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Նորից պապիս գերանդին  
Դիպավ կանաչ մեր հանդին:  
Մեկ էլ հանկարծ՝ թըռ, թևեր...  
Մի լոր թռավ դեպի վեր:

Պապս կանգնեց, դառնացավ,  
Չոքեց, տևքաց. «Այ քեզ ցավ...  
Այնտեղ բույն կար, բնում ձագ՝  
Աչիկներով կիսափակ»:

**հանկարծ  
բույն  
ձագ**

Ուրախացա ես այնպես.  
Բա, ճուտ էի գտել, տես...  
- Ինչ լավ է, պա՛պ, - ասացի,-  
Բայց դու ինչո՞ւ տիրեցիր...

- Բույնը տուն է, խոտը՝ հարկ,  
Ես քանդեցի տունը տաք...  
Հիմա սրանք ոնց կապրեն  
Գարևան այս բաց երկնի տա-



### Բառերի գանձատուի

1. Թոշունների անուններ գրիր:
2. Կենդանիների ձագերի ինչ անուններ գիտես. թվարկիր:
3. Բույնը կենդանիների, թոշունների պատսպարվելու տեղն է:  
Ինչ բառերով են անվանում այն շինությունները, որտեղ մարդիկ  
ըստանի կենդանիներ են պահում:
4. Աշխատանքային գործիքների անուններ թվարկիր:
5. Ինչ բառով ենք կոչում ա) շքեղ տունը, բ) անշուք տունը:





## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Կարդա՛ այն տողերը, որոնք ցուց են տալիս թոռնիկի որախությունը:
- Թոռնիկն ինչո՞ւ որախացավ, իսկ պապն ինչո՞ւ տիրեց:
- Քո կարծիքով կենդանիները պաշտպանության կարիք ունեն:
- Խոշել - բռամ զուգի օրինակով կազմիր փախչել, ոխաչել, կայչել բայերի համապատասխան ձևերը:
- Դուքս գրիր բանաստեղծության բայերը և դրանցից երեքով պատմողական նախադասություններ կազմիր:



## Պատմությունների և զրույցների զամբյուղ

- Կենդանիների վարքի մասին հետաքրքիր տեղեկություններ հավաքիր և պատմիր:
- «Լորիկը» վերևագրով մի պատմություն հորինիր:



Բանաստեղծության մեջ հոմանիշ բառերի մեկ զուգ կա: Գտի՛ր այդ բառերը:



## Իմաստունի օրատետրից

### Արգելոց

Մարդու գործոնեղությունը դարերի ընթացքում մեծ վնաս է հասցրել բնությանը, հայրեական բուսական և կենդանական աշխարհին: Եթև պերությունները արգելոց են դարձնում բնության այն սակավաթիվ անկյունները, որոնք անվնաս են մնայել:



Հայաստանում արգելոցներ են արեղջիկ խորովի, Որիխզանի և Ծիկահողի անդատներում: Խորովի արգելոցնում, օրինակ, ապարության մեջ արածում է հայկական մուֆլոնը (վայրի ոչիսը). Ճաների արվերում հանգարանում է գորշ արզը իսկ կաղնուպներում իրենց բույնն են հյուսում անգղերը օդում ճախրում են ճերմակաթե ճայերը: Այսպես երբեմն կարելի է գետներու մեջ հաղվաշեաց թռչունների:

Արգելոցներում արգելվում են որսը, ճառահարումները:



## ԾԱՂԿԱՆ ՊԱՐՏԵԶ

Մի երկրի թագավոր ծաղկեցրել էր իր թագավորությունը: Եվ ահա ծերացել էր ու պիտի մահանար: Որդիներից որին թագաժառանգ դարձնի, մտածում էր ծերունի թագավորը, որպեսզի տերությունը ծաղկու պահի իր մահից հետո: Կանչեց իր բոլոր որդիներին, վերցրեց զանազան տեսակի ծաղիկների սերմեր և բաժանեց նրանց:

- Որդիներս,- ասաց ծեր թագավորը,- հողեր ընտրեք ձեզ համար, մշակեք, պարտեզներ շինեք: Առեք այս սերմերն ու ցանեք, խընամեք և ծաղիկներ աճեցրեք: Ում պարտեզը ճոխ լինի, հողը՝ առավել խնամված, ում ծաղիկներն ավելի գեղեցիկ լինեն, նա էլ կլինի տերությանս թագավորն իմ մահից հետո: Ես այդպես եմ որոշելու, թե ով է ձեզնից առավել ազնիվը, բարեխիղծն ու աշխատասերը:

Որդիները վերցրին սերմերն ու գեացին: Հողամասեր ընտրեցին, խնամեցին, պարտեզներ շինեցին, ջուր բերեցին առուներով, ու ամեն մեկն սկսեց խնամել իր ծաղկանցը:

Գարևանը թագավորը ելավ իր պալատականների հետ, ժողովրդի և օտար երկրների դեսպանների մեծ բազմությամբ գնաց պարտեզները և այելու և թագաժառանգին որոշելու:

Մոտեցավ ավագ որդու պարտեզին: Ինչ պարտեզ, խսկական դրախտ: Ամեն գույնի, ամեն բուրմունքի ծաղիկներ ծով էին կապել պարտեզում:

- Այս ծաղիկներն իմ տված սերմերից աճեցին,- հարցրեց թագավորը:



- Այն, հայր իմ,- ասաց որդին:

**բարեխիղը  
ծաղկանոց  
դրախտ  
ռոռզել  
խաքեբա**

**արդարամիտ**

Թագավորը մոայլվեց ու անխոս առաջ գևաց:

Պալատականները, դեսպանները, ամենքը զարմացան ու լուռ գևացին նրա հետ:

Ահա մյուս որդու պարտեզը, ավելի շքեղ, հողը մեծագույն ջանասիրությամբ մշակված, ծաղիկներն այսքան փարթամ...

- Այս ծաղիկներն իմ տված սերմերից ածեցրիր,- հարցրեց թագավորը:

- Այո՛, հայր իմ,- պատասխանեց երկրորդ որդին:

Թագավորն առավել ևս մոայլվեց ու գևաց առաջ:

Վերջապես հասան կրտսեր որդու պարտեզին: Բոլորը քարացած կանգ առան: Մշակված, խնամված, ռոռզված հողամասում գլխահակ կանգնել էր կրտսեր որդին, իսկ պարտեզում ոչինչ չկար՝ ոչ ծաղիկ, ոչ կանաչ, ոչ անգամ մոլախոտ: Մերկ հողն էր:

- Որտեղ են ծաղիկներդ, որդի՛, ցո՞յց տուր մեզ,- ասաց հայրը: Որդին ասաց.

- Հայր, որքան ջանք, որքան քրտինք թափեցի, օր ու գիշեր ռոռզեցի, խնամեցի այս հողը, բայց քո տված սերմերից ոչ մեկը չձլեց, և իմ պարտեզն այսպես ամայի մնաց:

Հայրն ուրախացած առաջ նետվեց, գրկեց, համբուրեց կրտսեր որդու ծակատը:

- Ապրեն,- ասաց նա,- դու ազնիվ, շիտակ ու աշխատասեր մարդ ես: Չո ավագ եղբայրներն անազնիվ ու խաքեբա գտնվեցին, որովհետև այն սերմերը, որ տվել էի բոլորիդ, նախապես ջրի մեջ խաշել էի. այդ սերմերից ոչինչ ծլել չեր կարող: Դու միակն ես, որ խարդախություն չարեցիր և ուրիշ սերմեր չցանեցիր քո պարտեզում: Ես քեզ եմ ընտրում թագավորությանս ժառանգ: Դու արդար ու շիտակ կղեկավարես տերությանս ժողովրդին, քանի որ ազնիվ մարդ ես և արդարամիտ թագավոր կլինես:

## **Առած-ոսացվածքներ**

**Սուտը ծամփա չունի:**

**Հայկական**

**Ավելի լավ է դառը ծշմարտությունը, քան քաղցր սուտը:**

**Արարական**



## Բառերի գանձատում

1. Մարդուն քնութագրող ինչ բառեր կան այս հեքիաթում:
2. Օր ու գիշեր նշանակում է «գիշեր-ցերեկ»: Մեկ բառով ինչպես կասես օր ու գիշեր, գիշեր-ցերեկ:
3. Գլխահակ նշանակում է «զլուխը կախած՝ զլխիկոր»: Մարդիկ երբ են գլխահակ կանգնում:

Գիրունիկ, իմ՝ լով բարեկամ:  
հեքիաթում կա այսպիսի  
բառակապակցություն՝ մշակ-  
փած, ինչունիս, ոռոգված  
հոգամաս: Չեմ հասկանում  
ոռոգված բառը: Կրացարքեն:

ինչուիկ

Արթեի ինչուիկ  
Ասում ենք «հողամասը»  
մշակված է: ինամված»  
և պարկերացնում, որ  
հողը ֆարերից ապարաված  
է, փիրեցված, մողախոնդեր  
չկան: Իռոին կյանք են  
բայիս աշխարհանքը և  
զորքը: Չու բառին հոմանիշը է ոռոգելը, որ  
նշանակում է «զրել, հոսկով զորք  
մարտակարել»: Անեմ, որ ծաղկամանի ծաղիկները  
մենք զրում ենք, իսկ զաղցրելը՝ ոռոգում:

Գիրունիկ



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Թագավորն ինչ էր ուզում պարզել:
2. Հայրն ինչո՞ւ կրտսեր որդուն թագաժառանց հայտարարեց:
3. Թագավորի ավագ որդիների արարքը մեղադրելի՞ ես համարում:
4. Թագավորի վճիռն արդարացի՞ ես համարում:
5. Այս հեքիաթը ինչն է փառաբանում:



## Հեքիաթների զամբյուղ

1. Թագավորի երեք որդիների մասին պատմող ուրիշ հեքիաթ զոիր, կարդա և պատմի՛ր ըսկերներիդ:
2. «Հրաշք ծաղիկը» վերևագրով մի հեքիաթ հորինիր:



## ԿԱԹ-ԻՆԵ

Ամպից ծնվեց մի կաթիլ,  
Զուլալ, մաքուր, աչքը՝ բիւ  
Կաթիլն ընկավ ձանապարհ  
Դեպի երկիր, հող ու քար...  
Կաթիլ, կաթիլ, իսկ զիտես,  
Հողը ծարավ է այնպես,  
Կուլ կտա քեզ նա խկույն,  
Կաթիլ, իզուր ես զնում:  
Իսկ կաթիլը մեղմ ժպտաց,  
Էլ ավելի շողշողաց,  
Ասաց. «Թեև քիչ եմ ես,  
Կիովացնեմ սակայն քեզ,  
Դեռ ուրիշ հոգս էլ ունեմ.  
Մի հատիկի կյանք կփրկեմ»:



թեև  
հոգս



Ծոգից թև առավ,  
Երկինք բարձրացավ,  
Դարձավ ծյուն, անձրև,  
Կրկին հետ դարձավ:



### Բառերի գանձատուփ

1. ա) Մաքուր լինում է հագուստը, զրատախտակը, դեմքը: Ի՞նչ բառեր ենք գործածում, երբ մաքուր են լինում ա) ջորը,  
բ) երկիխը, գ) մեղքը:
- բ) Գրածդ բառերով բառակապակցություններ կազմիր:
2. Գրիր խկույն, շողշողալ և իզուր բառերի հոմանիշները:

Արելի Ժիրեմնիկ,  
հայսների բանապեղծությունը  
միայն թէ անհայտ մնաց թի:  
բայի իմաստը: Կրացարքն:

Արդով ինչուիկ զան:  
Ոի նշանակում է «բայ  
կրացոյր երկնագույն»: Բայց  
իմաստը եթե կարող ենք օրի-  
նակ ասել բայ կրացոյր կամ  
երկնագում և անցիկներ, ներիդ  
և այն, ապա թի բայ կրանց համար  
չենք կարող գործածել: Այն միայն աշխարք  
համար ենք ասում:

Երջու այդպես էլ բայուր կամ յորդ նարանք և  
կրացոյրի երանգներ են) լինում է երկինքը բայց ոչ  
ճաղիկները:

### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Կաթիլե ինչպիսին է՝ պարծենկո՞տ, թե ...
- Ո՞րն է բանաստեղծության հիմնական միտքը:
- Գրի՞ր գուզայ և մաքուր ածականների համեմատության  
աստիճանները և բառակապակցություններ՝ կազմիր:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

- Տեղեկություններ հավաքիր մարդու կյանքում և բնության մեջ  
զրի դերի մասին և պատմի՛ր:
- Մի հեքիաթ կամ պատմություն հորինիր բարի գործի, անձ-  
նազոհության մասին:



### Իմաստունի խորհուրդները

Խորժիկ բարեկամ, այնպես ապրիր, որ չամաշեն գոյ խոսքերի  
ու գործերի համար: Մարդկանց սիրիր և օգնիր ինչպես անծանոթ  
անցորդը՝ վիրավոր ճամփորդին: Այս բանագրքից մեզ ծանոթ  
բազավորի կրտսեր ողջու նման սպնիվ ու շիրակ եղիր, ընկույզնու  
նման՝ աննախանչ, զուսաց ու համբերապար, գերի ու կաթիյի նման՝  
որիշներին օգրակար:

Եղիր բարի ու աշխարհսեր, ինչպիսին ծեր հողագործն էր, հյուրընկազ ինչ-  
պես վայել է հայ մարդուն: Աստունայի Ռայֆի նման քաջ ու հայրենասեր եղիր...

Ժիրել հեղիր չէ, բայց արժե զանալ չէ որ մարդու խալ արարժներն են վայլ  
բայրին նրան:



Հայոց ազգային Մարզայան

## ԵՐԳ ՈՒՆԵՆ

Ճնճղուկներն են երգում,  
Երգ է շրջում հովը,  
Առվակներն են երգում,  
Երգ է ասում ծովը:

Երգ կա շուրթին քամու,  
Երգ կա շուրթին առվի,  
Եղնիկների վազքում,  
Թոփչքներում արծվի:

Ծիածանի ցոլքում,  
Երկինքներում կապուտ  
Իրենց երգն են երգում  
Ծիծեռնակ ու արտույտ:

Աստղերն ել երգ ունեն,  
Երգ ունեն հող ու քար,  
Որ երգում են անձայն,  
Որ երգում են անքառ:

Երգիր, թեկուզ անքառ,  
Երբ տխրում է հոգիդ,  
Ծատ դժվար է կյանքում  
Ապրել առանց երգի:

Վազք  
ծիածան  
հոգի



## Հանելուկներ

Անձրեզ թողեց  
Երկնքում ցողեր,  
Արև՝ նրան  
Յոթ գոյնի շողեր:



Արեջի Ժիրտամիկ  
Բանապեղծության մեջ  
զրված է՝ երգ է՝ զրշում  
հովր: Ինչ համար այս  
պողն այնքան էլ հարակ չէ:  
Կրացարրեն:

Երկնքի կրծքին  
Զարդ են փայլփլուն,  
Լուսը բացվում է՝  
Խամրում են, հալվում:



Արեջի ինչուի  
Նախ ասեմ, որ հովն  
այսպեղ փամին է, իսկ զրշու  
նշանակում է «մեզմ և հաճեյի  
չայն հանել»: Ծրղում են նաև  
տերեները անպատը մեկափեկ  
նորք զգեստները: Կարծում եմ,  
ամեն ինչ արդեն պարզ է:



## Բառերի գանձատուփ

1. Սրանցից յուրաքանչյուրն ինչ է անում: Կազմիր պարզ նախադասություններ:

Նմուշ՝ մնացուկ – ճնճղուկը ծլվլում է:

ա) (հովակ, թ) ծով, զ) քամի, դ) արծիվ, ե) եղնիկ:

2. Կազմիր տրված բառերի փաղաքշական կամ նվազական ձևերը: Օգտագործիր -ակ, -իկ, -ուկ ածանցեները:

Նմուշ՝ առու - առվակ:

ա) (ևսող, թ) արծիվ, զ) արտույտ, դ) ծով, ե) գառ; զ) գետ:

3. Մեկ երգի կողմից կատարվող երգը կոչվում է մեներգ, իսկ ինչ է կոչվում խմբով կատարվող երգը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. ա) Գրիր, թե բանաստեղծության մեջ ինչերն են հիշատակվում երգ ուսեցողների շարքում:

**թ) Գրածդիքաներից առանձնացրո՛ւթոչունների անունները և դրանցով նախադասություններ կազմիր:**

2. Բանաստեղծության մեջ ինչներն են անձայն երգում:
3. Բանաստեղծն ինչ խորհուրդ է տալիս և ինչ եզրակացության է հանգում:
4. Առաջին քառատողում գտի՛ր եզակի թվով գործածված բայերը և կազմի՛ր դրանց հոգեակին:

**Նմուշ՝** ... . . . . .



### **Պատմությունների և գրուցների զամբյուռ**

1. Ո՞րն է քո սիրած երգը: Այն երբ ես երգում:
2. «Գարնան համերգը» վերևագրով փոքրիկ շարադրություն գրիր:



### **Դադարի պահ**

Ասա՞ ծիածանի գույնների անունները:



**Հահազն Գրիգորյան**

## **ՀԵՐԻԱԹ ԱՐՑՈՒՆՔԻ ՈՒ ՄԻՄԱՆՔ ՄԱՍԻ 1**

Վաղուց, շատ վաղուց, երբ աշխարհը դեռ շատ նոր էր, երկրի վրա ոչ ոք և ոչ մի բան դեռ անուն չուներ: Բայց կամաց-կամաց ամեն ինչ տեղև էր ընկենում: Այն, ինչը վերևում էր ու կապուտ, կոչվեց երկինք, ինչը չոր էր՝ ցամաք, ինչը թաց էր՝ ջուր: Հետո մեկ առ մեկ անուն ստացան բոլոր ծառերը, խոտերն ու ծա-



ղիկները: Վերջապես մի օր էլ հերթը  
կենդանիներին հասավ:

Դա այն բանից հետո էր, երբ  
ով գերադասել էր ջրում ապրել,  
կոչվել էր ձուկ, ով նախընտրել  
էր երկնքի կապույտը՝ թռչուն,  
իսկ ով նախապատվությունը  
ցամաքին էր տվել՝ գազան:  
Այս բաժանումը լավ էր, բայց  
բավական չէր: Ավելին, շատ  
քիչ էր: Հապա պատկերաց-  
րեք, գազան ասելով ինչպես  
հասկանայիր, դա նա է, որ շլոհիկ  
է ու երկար ականջներ ունի, թե՛ նա,  
որ մեծ է ու բրդուտ: Իսկ թռչուն էր թե՛

երկարակտուց-երկարավիզ-երկարունի անունը, թե՛ մյուսի,  
որ շորորալով հազիվ էր տեղափոխում իր կարծ տոտիկները:  
Ամեն քայլափոխի անթիվ-անհաշիվ անհարմարություններ էին  
ստեղծվում ու թյուրիմացություններ տեղի ունենում: Անհրաժեշտ  
էր, որ թռչուն, գազան կամ ձուկ կոչվելուց բացի յուրաքանչյուրն  
իր անունն ունենա: Երբ անորոշությունը շատ նեղեց գազաննե-  
րին ու թռչուններին, երբ ձանձրացան թյուրիմացություններից,  
մի գեղեցիկ օր հավաքվեցին Աղբյուրի մոտ:

Աղբյուրը լուս աշխարհ էր գալիս ժայռի տակից ու լցվում  
կանաչ, մամռուտ ափերով ավազանի մեջ: Եվ այնքան վճիռ էր,  
որ նրա հատակի քարերը փոքրիկ, գուևավոր արնեների պես  
էին կայծկլտում: Գազաններն ու թռչունները հերթով մոտենում  
էին Աղբյուրին, նրա հայելու մեջ դիտում իրենց և ընտրում այն,  
ինչը հարմար էին գտնում իրենց տեսքին: Նա, ով քաջությունը  
ընտրեց, կոչվեց Բազե, ով ուժը՝ Արջ, ում սրտին ավելի հաճելի  
էր նազանքը՝ Այծյամ: Այսպես բոլորն էլ մի-մի բան վերցրին:  
Անտեր չմնացին նույնիսկ վախկոտությունը, խորամանկու-

**ամեն ինչ  
վերջապես  
ևախընտրել  
թյուրիմացություն  
այծամ  
վախկոտ**

թյունն ու անպատճախատվությունը. դրանց տերերը մինչև օրս ել կոչվում են Նապատակ, Աղվես ու Կաչաղակ: Վերցրին ու զնացին իրենց գործին:

Միայն անհասկանալի մի բան մնաց: Ոչ ոք չուզեց տեր կանգնել նրան: Փորձում էին, բայց բանի որ փորձելուն պես նախ նրանց տրամադրությունն էր ընկենում, իետո ել աչքերից արտասուր էր իոսում, իսկույն մի կողմ էին դնում:

Երբ գազաններն ու թռչունները զնացել էին, թվերի միջից դուրս եկան Աղջիկն ու Տղան: Իհարկե, իրարից խռոված: Մինչև Աղբյուրին հասնելը Տղան մի երկու անգամ հրել էր Աղջկան, քաշքշել մազերից և խփել ու ձեռքից թափել մորիները: Աղջիկը ևստեց քարին, Աղբյուրի մեջ տեսավ իրեն, և նրա հետ մի տարօրինակ բան կատարվեց: Հանկարծ նա իրեն մենակ ու լքված զգաց: Ինչքան երկար էր նայում իր պատկերին, այնքան ավելի էր տխրում: Աղջիկն այնքան տխրեց, որ հանկարծ ... աչքերը խոնավացան, ու թարթիչներից արտասուրներ կախվեցին: Մի խոսքով, Աղջիկն էլ իր կերպարանքին հարմար գտավ մնացած վերջին բանը՝ թախիծն ու տխրությունը:

## **Ծառայք**

**Մարդկային էությունը բարու է ձգտում և ոչ թե չարի:**

**Եզերիկ Կողբացի (5-րդ դարի հայ իմաստասեր)**



### **Բառերի գանձատուփ**

1. Գրի՞ր արտասուր, թաց, ոչ ոք և կապույտ բառերի հոմանիշները:

2. Վճիտ բառին մեկ հոմանիշ ասա: Ինչն է վճիտ լինում:

3. Ինչի՞ն մասին է խոսքը. ա) շլոյիկ ու երկարականջ, բ) մեծ ու քորոշ:

4. Անթիվ-անհաշիվ կամանթիվ-.....: Ո՞ր բառն է պակասում:



Արեգի ինչուիք և Գրեմանիկ, գրեթէք, թէ հետիարում  
Կաշաղակն ինչո՞ւ է պարապահանարու համարվում:

Բոլորովին չեմ հասկանում:

ինչուիք



Արեգի ինչուիք, հարսիդ պարապահանը գրնեցու համար  
Պարբեր գրիեր բացեցինք: Խմացանք, որ կաշաղակը զոյնպույն  
Վերսուրներով մի թոշոն է, որ պարկանում է ագռամների ցեղին:  
Նու անընդհան կը զոյն չայն է հանում: Երեք զա է պարճառը:



Որ զարախոս մարդկանց կաշաղակ են անվանում: Խակ  
զարախոսներին երբեք լորդ և պարապահանարու չեն համարում:  
Ի՞նչ ես կարծում, համովիչ է:

ինչուիք և Գրեմանիկ

- 
- ### Հարցերի և առաջադրանքների արկղիկ
1. Հեքիաթում կենդանիներն անոնեներ ստացան երկու փուլով:  
Որոնք են դրանք:
  2. Հեքիաթում ո՞վ էր՝ ա) քաջ, բ) ուժեղ, գ) նազելի, դ) վախելու,  
ե) խորամանկ:
  3. Այս հեքիաթի հերոս ո՞ր կենդանուն են անվանում ծուռթայք:
  4. Աղջիկն Աղբյուրի մեջ իրեն հարմար ինչ զուավ:
  5. Կենդանիներն ինչո՞ւ չը կորեցին այն, ինչը մնաց Աղջկան:



### Պատմությունների և հեքիաթների գամբյուլ

1. Հեքիաթը պատմիր քո բառերով. ավելացրո՛ նոր հերոսների, որոնք անոն ստացան:
2. Կենդանիների անոն ստանալու մասին որիշ ինչ պատմություն գիտես: Պատմի՛ր:



### Դադարի պահ

Բառերն ըստ գույների դասավորիր թվերի հաջորդականությամբ  
և կարդա՛ իմաստուն խոսքը:

Քշում է որը արև է մարդու դեմքից ծիծաղն ձմեռը  
1      2      3      4      5      6      7      8      9



Հահագև Դրիգորյան

## ՏԵՐԻԱԹ ԱՐՑՈՒՆՔԻ ՈՒ ՄԻՇԱՆԻ ՄԱՍԻՆ 2

Տղան առաջին անգամ էր արցունքներ տեսնում և կարգին վախեցավ: Բարեբախտաբար, իսկական վախը Նապաստակն էր տարել, և Տղան ուշքի գալով հասկացավ, որ ճիշտ կլինի բերանը բաց կանգնելու փոխարեն ինչ-որ բան անել: Ակզրում նա գլխապատառ նետվեց դեպի թփուտները. ուզում էր Աղջկա համար մորի հավաքել: Հետո միտքը փոխած վազեց դեպի տանձենին: Բայց դարձյալ միտքը փոխեց ու մագլցեց ժայռն ի վեր, որտեղ կարմիր-կարմիր կակաչներ էին օրորվում:

Երբ Տղան կակաչները Աղջկան տվեց, Էլ ավելի անսպասելի բան տեղի ունեցավ: Աղջկա արցունքները դեռ չեն չորացել, իսկ նա արդեն ... ժպտում էր: Այն, այն, մի զարմացեք: Բանն այն է, որ Աղջկա գտածը մետաղադրամի պես երկու երես ուներ. մեկում թախիծն ու արտասուրքն էին, մյուսում ժպիտն ու ծիծաղը: Ժպիտը նույնպես Տղան առաջին անգամ էր տեսնում, բայց այս դեպքուա ոչ միայն չվախեցավ, այլև չհասցրեց զարմանալ: Ժպիտը նրան այնքան դուր եկավ (իսկ ավելի շատ՝ ժպտացող Աղջիկը), որ ինքն էլ չզգաց, թե ինչպես սկսեց ժպտալ:

Հետո Աղջիկն ու Տղան խաղում էին ու ծիծաղում, ծիծաղում էին ու խաղում: Աղջիկն էր ծիծաղում Տղային թվում էր, թե երբեք ավելի գեղեցիկ բան չի տեսել ոչ երկնքում, ոչ ջրում, ոչ էլ ցամաքում: Տղան էր ծիծաղում Աղջկան թվում էր, թե ավելի բաց մեկին չի տեսել:

այնս  
օրորել  
միևն  
հեծկոտալ  
զիցել

Աղջիկն ու Տղան չզգացին, թե օրն ինչպես անցավ: Սթափ-վեցին, երբ արդեն երեկո էր: Վազում էին խավարին կով գևացող արահետներով, մտածում էին, որ ծանապարհը կորցրել են, այլև երբեք չեն հասնի տուն, չեն տեսնի իրենց մայրիկներին: Աղջիկը վազում էր՝ ամբողջ սրտով լաց լինելով: Տղան, չնայած կարծում էր, թե քթի տակ է հեծկլտում, ետ չեր մնում Աղջկանից: Այսպես նրանք լաց եղան ու վազեցին, վազեցին ու լաց եղան այնքան, մինչև որ հասան տուն ու տեսան իրենց մայրիկներին: Մայրիկների գրկումնրանք արդեն նորից ծիծաղում էին. ծիծաղելու հարցում է Տղան Աղջկան չեր գիշում:

Այսպես Աղջիկն ու Տղան արտասվել ու ծիծաղել սովորեցին: Այդ օրվանից հետո բոլորն են արտասվում ու ծիծաղում, մինչև անգամ մեծահասակները:

Մարդիկ հասկացան, որ արցունքն ու ծիծաղը մարդու սիրտը մաքրում են բոլոր դառը բաներից, և մարդն ընդունակ է դառնում այև ամենին, ինչը կենդանիները առանձին-առանձին էին վերցրել. դառնում է բարի ու գեղեցիկ, ուժեղ ու քաջ, ինարամիտ ու աշխատասեր:

### **Բամագախոսություն**

Մարդը մյուս բոլոր էակներից տարբերվում է ծիծաղելու ընդունակությամբ:



Արեգի ընկեր, ինչ մի բան է  
հերափրում. բառարանում մազցով  
բառի դիմաց գրված է «մեր եղներ,  
բարձրանալ»: ինչպես հասկանամ.  
աս սովորական բարձրանալն է: Արեգի ինչորի,  
մազցով բառը պիտի  
հասկանալ այսպես՝ «բռնվե-  
րնիվ, կառչեղով, զանիվ գործադրեղով  
բարձրանալ»: Պարզ լինելու համար  
ասեմ, որ դու ասդիմաններով բարձրանում ես, իսկ  
ժայռը՝ մազցում:



### Բառերի գանձատուփ

- Գրիր արտասվել, քաջ, վախենալ, խավար և կրկին բառերի  
հոմանիշները:
- Գրիր բարեբախտաբար, գեղեցիկ, մաքրել, բարի, քաջ և  
աշխատասեր բառերի հականիշները:
- Պարզիր, թե Տղան քթի տակ հեծկլուում էր նախադասության  
մեջ ինչ է նշանակում քթի տակը:



Արեգի Շիրեմնիկ, ես  
զիյուն, որ հեծկլուայ բառը  
հոմանիշ է արտասվել, լայ  
լինել բառերին: Մեռնես ո՞ն  
է նրանց բարբերությունը:

Ինչուի՞ զան, ես սրս  
պարսախանը զիյուն, հե-  
մայածը: Հեծկլուայ-ը նույն  
լայ լինելն է, բայց անշայն կամ ոչ  
բարձրացայն, ընդհար-ընդհար շունչ  
ժաշեղով:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Տղան երբ վախեցավ:
- Աղջկա սիրուը շահելու համար Տղան ինչ փորձեց անել:
- Աղջիկը երբ սկսեց ժպտար:

4. Տղան և Աղջիկը ինչպես անցկացրին օրը:
5. Տղան և Աղջիկը Երբ լաց եղան և Երբ ծիծաղեցին:
6. Արցունքն ու ծիծաղը ինչ դեր ունեն:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուտ

- Կենդանիները լալիս կամ ծիծաղով են: Հետաքրքրվիր և պատմիր:
- Մի ուրախ հեքիաթ պատմիր:



Տղան գիշապատու եետվեց դեպի թփոտերը և ախա-դասության մեջ ինչ է նշանակում գիշապատու բառը:



### Իմաստունի օրատետրից

#### Ծիծաղի և լացի մասին

Ջիրնականների կարծիքով՝ մարդը միակ կենդանի էսէն է, որն իրավական լայ է լինում: «Արդապնդ» կենդանիներն իրականում լայ չեն լինում: Արանց աչքերում հայրնախած արցոնները պարզապես անհրաժեշտ են աչքերը խռնախացնելու և մաքրելու համար: Մարդուն նույնականացնելու և մաքրելու համար՝ արցոնները, ասկայն նաև, ի պարբերություն կենդանիների, լային է նաև լրիկությունը և ուրախությունը:



Պարզվել է, որ նորածինները սկսում չեն ունենալ արցոններով լայ լինելու և ծիծաղելու հարկություններ: Երեխան սկսում է հոգմոններից լայ լինել իր ծննդեղուց 5-12 զարաք հետո: Նաև ծիծաղել սկսում է ավելի ուշ՝ մորավորական 4-5 ամսական հասակում:

Հաշվել են, որ 6 պարեկան երեխան ժայռում ու ծիծաղում է օրուան զորդ երեք հարյուր անգամ. և նրա ծիծաղը անհոգ ու լիարոգ է:

Ծիծաղը բուժից հարկություն ունի և առույգացնում է մարդուն: Ասում են՝ ծիծաղի 5 րոպեն հավասար է հանգստի 40 րոպեների կամ անըստում կարծարև կրոսանքի:



## ԻՄ ՀԱՐԵՎԱՆ ՃՆՁՂՈՒԿՆ ՈՒ ԵՍ

Իմ հարեւան ճնձղուկն ու ես  
Օգտվում ենք նույն պատշգամբից:  
Պատշգամբը մեզ երկուախս  
Տեղ չի անում միանգամից...

Երբ ճնձղուկն է պատշգամբում,  
Դուրս չեմ գալիս ես պատշգամբ:  
Երբ որ ես եմ պատշգամբում,  
Ճախրում է նա ուրախությամբ

Իմ հարեւան ճնձղուկն ու ես՝  
Ծատ բաներով իրար նման,  
Միրում ենք նույն լուսաբացում  
Բնաշխարհով մեր իիանալ,

Դիտել ամպերը, որ ձգվում են  
Արևմուտքից դեպի հարավ,  
Անձրևները, որ թրջում են  
Ծոգ ամառվա դեմքը ծարավ,

Եվ, իիարկե, իրաշքը այն,  
Որ բացվում է պատշգամբից.  
Լեռը՝ դաշտի հոգուց բխած,  
Եվ այդ լեռան ծյունը անբիծ...



**պատշգամբ  
բնաշխարհ  
արևմուտք  
Ծոգ  
անբիծ**

### Բառախաղ

Սուտը խորը է ծառին, ծտին,  
Թէ՛ ծառ, թէ՛ ծիտ դեմ են ստին:  
Զգիտեն էլ ծառ ու ծտեր  
Հանուն ինչի՞ պիտի ստել:





## Բառերի գանձատուփ

**1.** Լրացրո՛ւ աշխարհի չորս կողմերը ցոյց տվող մյուս բառերը՝  
արևմուտք - ..... , հարավ - .....

**2.** Անթիծ, անթասիր, անտառ, անտարյան բառերը միմյանց  
հոմանիշ են: Դրանք ինչ են նշանակում:

**3.** Տան տարբեր մասեր նշանակող մի քանի բան գրիր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծն ու ծննդուկն ինչ են սիրում:
2. Բանաստեղծն ինչո՞ւ դուրս չի գալիս պատշզամբ, եթե ճընծ-  
դուկն այստեղ է:
3. Ինչ է երևում պատշզամբից, այն ինչպիսին է:
4. Ինչ ես տեսնում քո պատշզամբից:
5. Բանաստեղծության մեջ ինչպիսին են ամառը, լեռան ձյունը:



## Պատմությունների և հեքիաթների գամբյուլ

1. Պատմիր քո սիրած կենդանու մասին:
2. Մի հեքիաթ պատմիր, որի հերոսներից մեկը թռչուն է:



Վարուժան Նալբանդյան

## ԿԱՄԱԿՈՐ ՆՈՅԵ 1

Նոյն ուսի ավագ քոյր ու եղբայր և կրտսեր քոյր ու եղբայր: Այդպես մեջտեղում լինելու համար նա իրեն բախտավոր էր համարում և չափից ավելի երես էր առել: Հայրը նրան պատմել էր Նոյի տապասի պատմությունը, Արարատ լեռան և Փուտ-բոլային թիմի մասին, ազռավի և աղավեռու մասին, և նա իրեն, բնականաբար, համարում էր մարդկանց ու կենդանիների փրկիչն ու բարերարը: Այն, որ անունը Նոյ են դրել, նրան պարտավորեցնում էր արդարացնել ծնողների վստահությունն ու նահապետի կոչումը: Բայց խեղճն ինչ աներ, որ մեր երջանիկ

Ժամանակներում ջրհեղեղ չի լինում...

Մի անգամ Նոյի ծնողները զեացել էին կարևոր այցելության: Տանը մնացել էին միայն երեխաները: Երեխաների թագավորություն էր կամ ել թե չէ՝ հանրապետություն:

Մեծ եղբայրը բոլորին բակ իջեցրեց, որ տունը տակնուվրա չանեն: Ինքն էլ, պարզ է, հետները իջավ: Բակում նրանք խաղացին հարևան երեխաների հետ, բայց Նոյե արդեն ձանձրանում էր սովորական խաղերից, երբ ճակատագիրը նրան վայել մի նոր խաղի առիթ ստեղծեց: Ամպերը կուտակվեցին, և տեղատարափ անձրև սկսվեց: Երեխաներն անմիջապես պատսպարվեցին իրենց մուտքի միջանցքում, այսպես որ կարելի էր հաստատ ասել՝ շատ քիչ թրջվեցին, և հիվանդանալու վտանգ ամեննին չկար:

Մուտքի բաց դռնից Նոյը, նրա եղբայրներն ու քույրերը կլանված նայում էին ջրհեղեղի հին պատմության փոքրիկ, բայց և ազդու կրկնությանը և ականջ էին դևում ջրի աղմուկին:

- Վերև բարձրանաք, թե չէ կմըրսենք, - ասաց Նոյի մեծ եղբայրը, - վերսից կսայենք:

Նոյը մեծ եղբորն ասաց.

- Բանալին տուր, ես դուռը շուտ բացեմ:

Մեծ եղբայրը նրան տվեց բանալին, և նա վազեվազ բարձրացավ չորս հարկերի վաթսունվեց աստիճանները: Հսիհին բացեց դուռը, ներս մտավ և իր հետևիք ուրար փակեց: Այն փակեց:



**արդարանալ  
անընդհատ  
բռջւել  
հսկին  
վաթունվեց  
բարձրանալ  
ուղղել**

Երբ եղբայրներն ու քույրերը հասան չորրորդ հարկ ու դուռը փակ գտան, շատ բարկացան և սկսեցին անընդհատ զանգահարել և թխկթխկացնել:

- Բաց արա,- աղմուկի միջից կարգադրում էր մեծ եղբայրը:

Փոքր քույրը, որ չէր հասկանում, թե ինչ է տեղի ունեցել, բարձրաձայն լաց էր լինում: Մեծ քույրը նրան հանգստացնում էր և հանդիմանական խոսքեր ուղղում Նոյի հասցեին: Փոքր եղբայրը ձայնը գլուխն էր գցել և որոշում էր ընդունում, որ հաջորդ անգամ ելինքը կփակի դուռը և մյուսներին կթողնի դրսում:

## **Առաջիածր**

**Փորձանքի կես ճանապարհից ետ դառնալը խելոքություն է:**



### **Բառերի գանձատուփ**

**1.** Գրի՞ր անմիջապես, անընդհատ և բարկանալ բառերի հոմանիշները:

**2.** Գրի՞ր կրտսեր, բախտավոր, սովորական, բաց, բարձրանալ, բարձրաձայն բառերի հականիշները:

**3.** Ըստրի՞ր և դեմ դիմաց գրի՞ր դարձվածքները և նրանց իմաստները:

ականջ դնել իրար խառնել, քարուքանդ անել

երես առնել լսել

ձայնը գլուխը գցել շփանալ

տակնուպրա անել չափազանց բարձր ձայնով խոսել կամ երգել

**4.** Նահապետ նշանակում է «սոռնի, ցեղի կամ ազգի նախայր»: Ո՞վ է Հայկ Նահապետը:

**5.** Հանդիմանել նշանակում է «ոչ խրախուսելի որևէ արարքի կամ խոսքի համար նախատել, կշտամբել, սաստել»: Ի՞նչ է նշանակում հանդիմանական բառը:

**6.** Հազեվագ բառի նման բառեր կազմիր գող, կող արմատներով:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ո՞ր հարկում էր ապրում Նոյենց ընտանիքը:
2. ա) Քանի եղբայր ու քույր ուներ Նոյը:  
բ) Հայկական անուններով անվանիր Նոյի քույրերին և եղբայրներին:
3. Հայրը ֆուտբոլային ո՞ր թիմի մասին էր պատմել Նոյին:
4. Երեխաներն ինչի հետ էին համեմատում տեղատարափ անձրեզ:
5. Երեխաներն ինչպես էին փորձում ազդել Նոյի վրա, որ դուռը բացեր:
6. ա) Տաղ և բացել բայերով 1-ական հրամայական նախադասություն կազմիր:  
բ) Հասկանոյ և հիմանդրանոյ բայերով հարցական ու պատմողական 1-ական նախադասություն կազմիր:

Հմ լավ ընկեր Գիրունիկ

Պարմվածքում այսպիսի  
նախադասություն կա՝ եթե  
խոնկը բազմվարժան էր  
իմ՝ ի թե չի հանրապետա-  
րյուն:

Թագավորության և հան-  
րապետության բարբերու-  
թյունը կրացարդեն:

Արդյո՛ ինչուրկ

Երկու բառն էլ պետրոյան  
դրասկ են նշանակում:

Մարդերությունը սա  
է. թագավորությունում  
իշխանությունը պարկանում  
է թագավորին, իսկ

հանրապետությունում իշխանությունը  
պարկանում է որոշ ժամանակով ընդունած  
մարմիններին, օրինակ՝ խորհրդարանին:

Արդաշեա Առաջինի ժամանակներում  
հայաստանը թագավորություն էր իսկ այսօր՝  
հանրապետություն:





## Պատմությունների և գրուցների զամբյուղ

- Ինչ գիտես Նոյի տապասի մասին: Պատմի՛:
- Ո՞մ անոնք են կոչել քեզ: Պատմի՛:



Հեղինե նշանակում է «հենալով, այսինքն՝ արագ-արագ և ընդհատումներով շունչ քաշել»: Կոահի՛ր, թե ինչ է նշանակում հեղապատ:



## Լեզվաբանի դասը

### Հրամայական նախադասություն

Այն նախադասությունը, որ հրաման կամ կարգադրություն է արտահայտում, կոչվում է հրամայական: Օրինակ՝ հօջևումնե ցարդիք՝ ու վուլուքիք հայրենի երեխից: Անկարգապահ աշխատողներին հետազոտություն՝ աշխատանքից:

Հրամայական նախադասությամբ հայտնում ենք նաև մեր խնդրանքը կամ մեկին հանձնարարում ենք մի բան անել: Օրինակ՝ Շնորհ փակի՛ր, խնդրում եմ: Պատմի՛ր քո կարդացած եկեղիայներից մեջը:

Հրամայական նախադասության մեջ հրաման, հանձնարարություն կամ խնդրանք արտահայտող բառը արտասանում ենք հատուկ շեշտով, իսկ գրելիս այդ բառի վերջին ձայնավորի վրա դնում ենք շեշտի նշանը [՝]:



## Դադարի պահ

### Հումոր

- Ո՞րն է ամենակարծ ամիսը:
- Մարտը:
- Ինչո՞ւ:
- Քանի որ չորս տառից է բաղկացած:





## ԿԱՄԱԿՈՐ ՆՈՅԵ 2

Անձրևը չէր դադարում, և ջրհեղեղի աղմուկը հասնում էր փակ դռան երկու կողմերում գտնվող երեխաներին։ Մեծ եղբայրը սկսեց խնդրել և սիրաշահել Նոյին։

- Դու մեզ չե՞ս սիրում, ապերիկ,- ասաց Նրան։

Նոյն իհարկե սիրում էր Նրանց, ինչպես հորը և մորը, հորական պապին ու տատին, մորական պապին ու տատին, հորեղբայրներին ու հորաքոյրերին, մորեղբայրներին ու մորաքոյրերին, Նրանց կանանց ու ամուսիններին, Նրանց աղջիկներին ու տղաներին։ Բայց չարձագալքեց։

- Ես քեզ քացրավենիք կտամ,- խոստացավ մեծ քոյրը։

- Ես քեզ կտամ իմ տիկնիկը,- լացը դադարեցնելով՝ ասաց փոքր քոյրը։

- Չեզ իմ ատրճանակը կտամ,- ասաց փոքր եղբայրը։

Դուն մյուս կողմից ծպտուն չկար։

- Տես, թե ո՞ւս եմ վզակորթիդ հասցնելու,- Նորից քարկացավ մեծ եղբայրը։

- Զրիեղեղ է. ջուրը բարձրացել հասել է երրորդ հարկ,- խաղ սկսեց մեծ քոյրը։

- Մենք բոլորս կխեղդվենք, եթե դուքը չբացես,- շարունակեց փոքր եղբայրը։

Սա արդեն դուր եկավ Նոյին, և նա ասաց.

<b>դադարել արձագանքել ատրճանակ սեղմել ձեղք խեղդել գողգոռոց</b>
--

- Ես ձեզ բոլորիդ կվերցնեմ իմ տապանը, ես ձեզ բոլորիդ կփրկեմ։

Նոյն ինչ լավ էր զգում, որ բոլորի փրկությունն իրենից է կախված։

- Դե, շու՛տ, բաց արա,- խաղին մասնակցեց փոքր քոյրը։


- Թող ջուրը հասնի չորրորդ հարկ՝ հետո,- ասաց Նոյը։

- Ուրիշ ճար չկա, պիտի սպասենք,- հառաչեց մեծ եղբայրը և ինչ-որ բան փսփսաց մեծ քրոջ ականջին:

Մեծ քույրը գլխով արեց, այսինքն՝ հասկացա, և սեղմեց հարևանի դռան զանգը: Չիչ հետո նա վերադարձավ՝ ծեռքին մի դոյլ ջուր: Մեծ եղբայրը վերցրեց դոյլը և կամացուկ շուռ տալով՝ լցրեց հատակին, դռան ճեղքին մոտիկ:

Զուրը դանդաղ լցվում էր ներս, և Նոյն սկսում էր համոզվել, որ կատակը՝ կատակ, բայց ջրհեղեղն իրոք բարձրացել է մինչև չորրորդ հարկ: Եղբայրներն ու քույրերը խեղդվելու վտանգի տակ են: Նա արագ բացեց դուռը, և եղբայրներն ու քույրերը ծիծաղ-գոռգոռոցով ներս լցվեցին ու թափվեցին Նոյի վրա:

Մեծ քույրն իր խոստումը չկատարեց. Նոյին քաղցրավենիք չտվեց: Փոքր եղբայրը խոստումը չկատարեց. ատըրծանակը չտվեց: Փոքրն քույրն էլ խոստումը չկատարեց:



Մեծ եղբայրը խոսքի տերն էր. Նա իր խոստումը կատարեց:

### Առած-ասացվածքներ

Ինչ ցանես, այն կհնձես: Զուրն ընկնողը անձրևից չի փախենա:



### Բառերի գանձատուփ

1. Գրիր դադարել, մեծ և խնդրել բառերի հոմանիշները:
2. Գրիր արագ, մոտիկ, ներս, տալ և բացել բառերի հականիշները:
3. Զուրն ինչի՞ մեջ են լցենամ. ասա՛ ավելորդ բառը՝ դոյլ, տակառ, ցւցող, տափոր, կուժ, պարկ, շիշ:

**4. «Ուրիշ ձար չկա, պիտի սպասենք» նախադասության մեջ ինչ  
բառով կփոխարինես ձար բառը:**

**5. Ի՞նչ է նշանակում ժողովրդական ուց բառը. այն երբ ենք  
գործածում:**



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. Նոյր չար էր, թե՞ չարաճի:
2. Նոյն ինչ նպատակ ուներ, երբ փակում էր դուռը:
3. Նոյր Երբ բացեց դուռը:
4. Դուռը բացելու համար եղբայրներն ու քուրերը ինչ խոս-  
տացան Նոյին:

**5. Ո՞վ կատարեց իր խոստումը, այլ կերպ ասած՝ ո՞վ էր իր խոս-  
քի տերը:**

**6. Տրված բառերից բայեր կազմիր:**

**Նմուշ՝ անձրև - անձրևել:**

**ա) փակ, կրտոակ, ծիծաղ, իսաղ**

**բ) մեծ, փոքր, արագ, եղբայր**

**գ) աղմուկ, ջուր, մուշ, սուր**

**7. ա) Գրի՞ր զեալ, լսել, կարտալ, եիշել բայերի այն ձևերը,  
որոնցով հրաման է արտահայտվում:**

**Նմուշ՝ իսաղալ - իսաղա՛:**

**բ) Դրանցից երկուսով հրամայական նախադասություններ՝  
կազմիր:**



**Աիրեղի՝ Գիրեմնիկ:**  
պարմվածքում ասվում է,  
որ Նոյր սիրում էր իր  
հորեղբայրների ու հորա-  
քույրերի մորեղբայրնե-  
րի ու մորաքույրերի աղ-  
զիկներին ու դղաներին:  
Անդեղի կարծ հնարավոր  
չէ ասել:

**Հնչուիկ՝ զան, իհարկե  
հնարավոր է: Խորեղբայր  
հորաքորդ, վեռու և  
մորաքորդ լրային ասուն  
ենք զարմիկ, իսկ աղջկան  
զարմուիր: Այնպես որ  
կարող ես հենց այսօրվանից  
գործածել:**





## Պատմությունների և զրուցների գամբյուղ

- Պատմիք քո չարաժամկետություններից մեկի մասին:
- Ո՞րևէ քո սիրած խաղը: Նկարագրի՛:



### Իմաստունի խորհուրդները

Իմ փոքրիկ բարեկամ, եղիք համառ լողեռն, քայլ ոչ  
կամակըր: Խմացիք, որ կամակորությունից լուսնամ է հենց  
ինքը կամակորը: Խամառորդն զգիք հասնել նպարակիդ  
զանան քայլ մի՛ փորձիք ամեն ինչ քո շանկովթյուններին  
հարմարեցնել: Առվորիք կյանքում նաև պիզող լինել:

Մի՛ մոռացիք խոսքի արժեքը: Եթե որևէ քան եւ խոսքանում,  
անպայման կարարիք: Խնչուե ժողովուրդն է ասում, «Խոսքը ասեցը  
յէ, անեղն է», «Ենթար հեշտ է, անեղը՝ զժվար»:



### \*ՏԱՄԵՐՆ ԳԵՐԱԶԻԿՆԵՐ\*

Գիշեր ինչից են պատրաստված

Տղաները երես առած:

Եղույլ խխունջից, գորտից կաևաչ

Ու շլիկից երկարականջ:

Այ թե ինչից են պատրաստված

Տղաները երես առած:

Գիտեք՝ ինչից են պատրաստված

Իղջիկները չափված-ձևված.



Կարկանդակից, մեղրից աևուշ,  
Ծաղիկներից, վարդից քնքուշ:  
Այ թե ինչից են պատրաստված  
Աղջիկները չափված-ձևված:



### Շուածներ

Ամեն ծաղիկ իր հոտելու ունի:  
Աղջիկը տան ծաղիկն է:

գորտ  
վարդ



### Բառերի գանձատուփ

1. Բառեր գրիր, որոնցում որևէ բաղաձայն կրկնված լինի:  
Նմուշ՝ ինունգ:
2. Եղանակ, նորություն և առջիկ բառերով բառակապակցություններ կազմիր:
3. Ի՞նչը կարող է լինել՝
  - ա) անոշ, բ) քարոշ, գ) առօնություն, դ) ծովը



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Դու այս բանաստեղծությունը կատակով ես ընդունում, թե լուրջ:
2. Բանաստեղծությունը քեզ դուր եկամվ: Ասա կարծիքդ:
3. Քո կարծիքով ինչից են պատրաստված աղջիկները, և ինչից՝ տղաները:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. «Ամենալավ տղան (կամ աղջիկը)» վերևագրով փոքրիկ շարադրություն գրիր:
2. Մի հեքիաթ կարդա արքայադստեր կամ արքայազնի մասին և պատմիր:



## ՀՐԱԺԵԾ ԴՊՐՈՑԻՆ

Ահա ուսումնական տարին վերջացավ, Եկրիկո: Այժմ դու պետք է բաժանվես քո ուսուցիչներից ու ընկերներից, և ես մի տխուր նորություն պիտի հայտնեմ քեզ: Դու նրանցից բաժանվում ես ոչ թե երեք ամսով, այլ ընդմիշտ: Հայրդ աշխատանքի բերումով պետք է մեկնի Թուրինից, և մեկը բոլորս՝ նրա հետ: Դա կլինի աշխանը, և դու ուրիշ դպրոց պիտի ընդունվես: Դա քեզ շատ կվշտացնի, այսպես չե՞:

Ես գիտեմ, թե ինչքան ես սիրում քո դպրոցը: Չե՞ որ երեք տարի շարունակ օրը երեք անգամ այդ դպրոցն ես գնացել, և այստեղ ընթացող աշխատանքն ուրախացրել է քեզ: Այնտեղ միևնույն ժամերին դու տեսել ես նույն տղաներին, նույն ուսուցիչներին ու ծնողներին և քո հարազատ հորեւ ու մորը, որոնք մուտքի մոտ ժպտադեմ սպասում էին քեզ: Այդ դպրոցում են երևացել քո առաջին ընդունակությունները, այստեղ ես գտել այնքան լավ ընկերներ. դպրոցի պատերի ներսում լսածդ ամեն մի բառը ասվել է քո բարօրության համար, և ապրածդ ամեն մի անախորժություն օգուտ է բերել քեզ:

Ուրեմն սրտիդ մեջ պահպանիր սերը քո հին դպրոցի հանդեպ ու սրտագին հրաժեշտ տուր բոլոր տղաներին: Սիրալիր հրաժեշտ տուր նրանց. սրտիդ մի կտորը թող այդ մեծ ընտանիքում, ուր մտել ես իբրև մանուկ և որից դուրս ես գալիս իբրև պատանյակ: Քեզ սիրել են այստեղ, և դրա համար քո հայրն ու մայրը սիրել են այդ ընտանիքը:

Դպրոցն էլ է մայր, Եկրիկո: Նա ինձնից վերցրել է քեզ, երբ դու հազիվ էիր խոսում, իսկ այժմ ինձ է վերադարձնում մեծացած, ուժեղ, աշխատասեր ու լավ տղա դարձած: Երբեք չմոռա-

ընդունակություն  
 բարօրության  
 անախորժություն  
 օգուտ  
 իբրև  
 պատանյակ



Նաս այդ դպրոցը, որդին: Բայց ոչ, դու չես մռանա, միթե դպրոցը կմռացվի:

Դու հասուն տղամարդ կդառնաս, կշրջես ողջ աշխարհը, մեծ քաղաքներ ու սքանչելի շենքեր կտեսնես, ու դրանցից շատերը կմնան քո հիշողության մեջ: Բայց այս համեստ սպիտակ շենքը, այս փոքրիկ պարտեզը, որտեղ պոկել ես քո գիտակցության առաջին ծաղիկները, քո աչքերի առաջ կհայտնվի մինչև կյանքիդ վերջը, այնպես, ինչպես ես չեմ մռանա այն տունը, որ առաջին անգամ լսել եմ քո նվազ ձայնը:

Քո մայր

## Իմաստախոսություն

Ուսուցիչը դպրոցի համար նույն է, ինչ արևը տիեզերքի համար:



### Բառերի գանձատուփ

1. Բառեր գրիր, որոնց բառամիջում լինի օ տառը:
2. Հրամեշտ տալ բառը ինչպիսի՞ բառերի հետ է գործածվել: Դրանցից մեկը գործածիր նախադասության մեջ:
3. Նամակում գտիր ընդ նախածանց ուսեցող երկու բառ, երկուսն էլ ինքդ ավելացրո՛:
4. Լավ աշակերտին բնութագրող բառեր գրիր:

Արդյի ինչոքիկ, պարսևական բառի մասին մի պարզաբանում եմ ուղում ցայ: Այս առաջայտել է պարսևի բառից որին միացնելով է -ակ փաղագլաւան ածանցը քառամերզի ի-ն զարշելով է): Այդպես էլ՝ կոյփի - կոյլոկի, որ նշանակում է «պիոֆիկ կոյփ»:



### Գիրունիկ

Արդյի Գիրունիկ, զնորհակայ եմ նամակիղ համար: Գիրեն, մի դժվար բառ էլ ինքնուրույն սովորեցի: Բարօրություն, կազմվել է բարի որ կապակցությունից -ուրյուն վերզածանցով: Որս համար է օ-ով գրվում: Իսկ բարի-ն այսրեղ նշանակում է «զավ ապահով, երգանիկ»: Խեղիսար բարօրությունը ապահովածությունն է, լավ վիճակը, երգանկությունը:

Հնչուիկ



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ենրիկոն քանի տարի էր սովորել դպրոցում:
2. Տղան ինչո՞ւ պետք է թողներ դպրոցը:
3. Մայրն ինչ խորհուրդներ է տալիս որդուն:
4. Ենրիկոն ինչպիսին էր դպրոց գնալու ժամանակ և հրաժեշտի պահին:
5. Ենրիկոն և նրա ծեռղները դպրոցից գոհ են:
6. Նկարագրիր տղայի դպրոցը:



### Պատմությունների և գրույցների զամբյուղ

1. Պատմիր քո դպրոցի կամ դասընկերներիդ մասին:
2. Սրտի խոսք կամ նամակ գրիր ուսուցիչդ կամ դասընկերոցդ:



Մարդու տարիքային տարբեր փուլեր նշանակող բառեր կան նամակի մեջ: Գտիր դրանք:

## ԳԼՈԲՈՒՍԸ 1

Դուք գիտեք,թե ինչ է գլոբուսը: Երկրագնդի փոքրիկ մոդելն է, որ պատվանդանի վրա պտտվում է մետաղե առանցքի շուրջը: Փայտից, ստվարաթղթից կամ այլ նյութից պատրաստված մի գումար է դա, որով մենք աշխարհագրություն ենք սովորում: Այնքան է փոքր երկրագնդից, որ եթե վրան մի ճանձ նստի, կարող է ծածկել Լոնդոնի նման մի քաղաք կամ Եվրեստի նման մի սար: Գլոբուսը շատ նման է երկրագնդին:

Բայց մի մոռացեք, որ երկրագունդը մի հատ է, ուրիշ երկրագունդ չկա տիեզերքում, իսկ այդ հասարակ ու էժանագին գլոբուսներն անհաշիվ են:

Սակայն այս գլոբուսը, որի մասին պիտի պատմեմ, բոլորովին այլ կարծիք ուներ իր մասին: Եթե նրան դասարան բերեցին, հպարտացավ ու ասաց.

- Էյ, զգո՞յշ վարվեցեք ինձ հետ: Դուք գիտեք, թե ո՞վ եմ ես: Եթե ես չկանում, երկրագունդը չի իմանա, թե ինչպես պտտվի: Նա ամեն ինչ ինձնից է սովորում: Խոսքը մեր մեջ, այդ երկրագունդ կոչվածն իմ մեջ ու կլոր արձանն է...

- Հապա ինչո՞ւ քեզ վրա էլ ամպեր ու կայծակներ չկան,- հարցրին երեխաները,- ինչո՞ւ քեզ վրա էլ ծովերն ու օվկիանոսները չեն ալեկոծվում, ինչո՞ւ իրաբուխներ չեն ժայթքում:

Գլոբուսը ծիծաղեց ու ասաց.

- Այդպիսի բաներ կարող են պատահել խեղճ երկրագնդի վրա: Նա թույլ բնավորություն ունի, և նրանից չեն վախենում: Իսկ ես այդպիսի բաներ չեմ սիրում: Դուք գիտեք՝ ո՞վ եմ ես:

- Իսկ դու ինչո՞ւ ես այդ ծողի շուրջը պտտվում. չե՞ որ երկրագունդը ոչ մի ծող ու հենարան չունի:

- Դա նրանից է,- ասաց գլոբուսը,- որ երկրագունդը դեռ երեխա է: Այդ ծողն իմ ձեռնափայտն է: Մեծ ու խելք մարդիկ ձեռնափայտ են ունենում:

## **ստվարաթուղթ զգոյշ օվկիանոս ժայթքել օրեցօր**

Երեխաները հավատացին ու սկսեցին հարգանքով վերաբերվել նրան: Իսկ գլուխուն օրեցօր ավելի էր հպարտանում:

Երբ մեկնումեկը ձեռքով ուժեղ խփում էր նրան, որ արագ պտտվի, ևա բարկացած ասում էր.

- Եյ, ինչ ես անում: Մոռացնել ես. ինչ որ ես անեմ, երկրագունդն էլ պիտի անի: Հիմա այս արագությունից խեղճի գլուխը պտույտ կգա, կընկնի ու քթից արյուն կհոսի...

Երբ պտտում էին հակառակ ուղղությամբ, բղավում էր.

- Կանգնեցրեք, կանգնեցրեք ինձ: Հիմա երկրագնդի վրա ցերեկները գիշեր դարձան, գիշերները՝ ցերեկ: Քնածներն արթնացան, իսկ արթուն մարդիկ մնացին խավարում: Կանգնեցրեք:

Մի անգամ դաս պատմելիս, Երեխաներից մեկը եղունգով անզգուշաբար քերեց գլուխուի Երեսը:

- Վայ, վայ,- ծչաց Նա,- այդ ինչ արեցիր, հիմա երկրագնդի վրայից տասնյակ քաղաքներ ջնջվեցին:

Երեխան հավատաց, նստեց ու լաց եղավ:



### **Հանելուկ**

Հարմանալի նախշուն գնդակ,  
Վրան՝ ծով, լեռ, դաշտ ու քաղաք,  
Ծիշտ պատկերն է երկրագնդի,  
Թեև փոքր չափսեր ունի:



### **Բառերի գանձատուի**

1. ա) Գրիր քսել, գիշեր, էժանագին, հասարակ և թոյլ բառերի հականիշները:

բ) Հականիշների մեկ զույգը գործածիր միևնույն նախադասության մեջ:

**2. Գրիր սակայն, արթևանալ, այլ, խելոք, խափար, ծչալ և հիմա բառերի հոմանիշները:**

**3. Աշխարհագրություն բառի ածանցով որիշ առարկաների և զիտությունների անունները գրիր:**

**4. Բառեր կազմիր որ և ուղիղ արմատներից:**



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

**1. ա) Գլոբուսի կարծիքով ինչպիսին է Երկրագունդը:**

**բ) Քո կարծիքով ինչպիսին է գլոբուսը:**

**գ) Ինչպիսին է Երեխան:**

**2. Ո՞ր Երկրի մայրաքաղաքն է Լուսոնը: Երեք Երկրի և նրանց մայրաքաղաքների անունները գրիր:**

**3. Գլոբուսի վրա ինչներ են պատկերված լինում:**

**4. Նախադասություններ կազմիր՝ գործածելով հետևյալ բառերը՝**

**ա) ով, ինչ, ինչո՞ւ,                  բ) Էյ, վայ:**

**6. Ինչպիսին են հետևյալ նախադասությունները: Ուշադրությունը դարձրու կետադրական նշաններին և նախադասությունների ինչերանգին:**

**ա) - Հասկա ինչո՞ւ քեզ վրա էլ ամսեր ու կայծակյուններ չկան-իարցրին երեխանները. - ինչո՞ւ քեզ վրա էլ ծովերի ու օվկիանոսները չեն ալեկոծվում, ինչո՞ւ երաբոխներ չեն ժայթքում:**

**բ) Բայց մի՛ մոռացեք. որ Երկրագունդը մի համ է, որիշ Երկրագունդ չկա տիեզերքում:**

**գ) - Էսյ, վայ. - ծչաց ևա:**

**դ) Գլոբուսը Երկրագունդի փոքրիկ մոդելն է. որ պատվանդանի վրա պատվում է մետաղի առանցքի շուրջը:**



### **Պատմությունների զամբյուղ**

**1. Պատմիր քո սիրելի առարկայի մասին:**

**2. Որևէ Երկրի մասին հետաքրքրական տեղեկություններ, նկարներ հավաքիր և ներկայացրո՛ ընկերներիդ:**



## Բացականչական նախադասություն

Այն նախադասությունը, որով մեր ուրախությունը, հուզմունքը, ցավը, տխրությունը բացականչությամբ ենք արտահայտում, կոչվում է բացականչական: Օրինակ՝ ինչ լավ անցած օրերը Սևանի ափին: Հայ, որքան գեղեցիկ են դաշտային ծաղիկները:

Այս նախադասություններում բացականչություն արտահայտող բառը արտասանում ենք բացականչական հետերանգով, փոքրինչ երգեցիկ: Իսկ գրելիս այդ բառի վերջին ձայնավորի վրա դնում ենք բացականչական նշան [՛]:



### Տատիկի խորհուրդները

*Թանկագինս, խոհեմ եղիր, որևէ բան անեղոս կամ ասեղոս առաջ մցածիր:*

Աշխարհի լավ ու բարի գործերով աչքի ընկնել: Համեստ ու խոնայի եղիր: Քո հազորություններով ժագալերսիր, բայց մի՛ պարծեցիր: Թող գո մասին «խոսեն» գո լավ գործերն ու արարժները, թող որիշները գնահատեն ու գովեն գեց:



### Դադարի պահ

#### Հումոր

Դպրոցից տուն գալով՝ տղան դիմում է հորը.

- Հայրիկ, այսօր ուսուցուիին մեզ պատմել է ծիերի մասին: Գիտե՞ս, թե ինչ ենք անվանում հայր ծիուն:

- Այո՛, հովատակ:
- Իսկ մայր ծիուն:
- Մատակ:
- Իսկ նրանց ձագին:
- Մորուկ կամ բուռակ:
- Ճիշտ է, բայց չեմ հասկանում՝ այդ դեպքում ո՞ր ծին է ուղղակի ծի կոչվում:





## ԳԼՈԲՈՒՍ 2

Մի օր ել՝ վաղ առավոտյան, գլոբուսն արթևացավ շատ լավ տրամադրությամբ: Արևի ճառագայթներն ընկել էին նրա վրա, և նա հաճույքից փայլում էր:

**ոչ մի  
մոքմոքալ  
ճանկ  
վագր  
առյուծ  
մյուս  
վախճան**

Նասարանում ոչ ոք չկար: Բաց լուսամուտից ներս մտավ դպրոցի հավաքարարուհու կատուն, դես վազեց, դես վազեց, հետո թռավ այն սեղանին, որի վրա ուռած-փքված կանգնած էր գլոբուսը ու սկսեց նայել նրան:

- Հը, ինչ ես ապուշի պես նայում,- ասաց գլոբուսը,- ինձ վրա Մկստան անունով երկիր չկա:

Կատուն, իհարկե, աշխարհագրություն չգիտեր և ոչ մի երկիր էլ չեր փնտրում: Շիշտն ասած՝ չհասկացավ էլ, թե ինչ էր մըռթմոթում գլոբուսը: Նրան պարզապես դուր էր գալիս այդ գունդը, որի հետ կարելի էր խաղալ: Կանգնեց երկու ոտքերի վրա և թաթը դրեց գլոբուսի այն տեղին, որտեղ գտնվում էր Սահարա անապատը:

- Զգույշ,- ասաց գլոբուսը՝ զգալով նրա ճանկերի ծակոցները,- զգույշ, այդտեղ վագրեր և առյուծներ են ապրում, քեզ կրզկտեն...

Կատուն մոռաց, թաթը դրեց մի ուրիշ երկրի վրա և հանկարծ նկատեց, որ գլոբուսը շարժվում է: Դա այնքան դուր եկավ նրան, որ սկսեց թաթով անվերջ խփել ու պտտեցնել գունդը: Քանի զնում, գլոբուսն այնքան արագ էր պտտվում, իսկ կատուն այնքան տարվեց այդ խաղով, որ մյուս թաթն էլ դրեց վրան: Գլոբուսը



չդիմացավ ծանրությանը, չրխկոցով ընկավ ցած և երկու կես եղավ:

Իսկ հետո՝ Հետո ներս եկան երեխաները և տեսան, որ գլորուսի կեսն ընկած է բերանը դեպի վար, իսկ մյուս կեսի մեջ առօք-փառոք քնել է հավաքարարութու կատուն:

Ծիծաղեցին երեխաները: Նրանք տեսան, որ գլորուսը, որն իրեն երկրագնդից խելոք էր համարում, բոլորովին դատարկ է եղել: Մեջը ոչ կրակ կար, ոչ էլ լավ:

Այդպիսի վախճան ունեցավ մեծամիտ գլորուսը:



**Հանելուկ**  
Այն ինչ աշխարհ է արդյոք,

Որտեղ չի ապրում ոչ ոք.

Չաղաքները տներ չունեն,

Ծովն ու գետը ջրեր չունեն: քանդում:



**Սպածեկը**  
Դատարկ տակառը բարձր  
ձայն կհանի:

Սուտը սուտ ասողի տունն է



### Բառերի գանձատուփ

1. Հայքարարարութիւնի բառի ածանցով հինգ բան գրիր:
2. Կատուն մոռաց: Ինչ են անում առյուծը, հորթը, այծը, զայլը:
3. Ճիշտն ասած՝ կատուն չհասկացավ էլ. թե ինչ էր մոթմոթում գլորուսը նախադասության մեջ ինչ է նշանակում մոթմոթալ բառը:
4. Մարդկային բևավորության լավ և վատ կողմեր նշանակող բառեր գրիր:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Քո կարծիքով հեքիաթի գործողությունները ո՞րերորդ դասարանում կարող էին տեղի ունենալ: Ինչո՞ւ ես այդպես մտածում:
2. Գլորուսի ինչ «ազգական» գիտես:
3. Հեքիաթի նոր վերևագիր առաջարկիր:
4. Մկստան երկիր չկա: Գոյություն չունեցող մի երկրի անուն էլ դու՛ հորինիր:
5. Մարդկային լավ կամ վատ հատկանիշների մասին մի առաջ ասա:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Փորձիր հեքիաթի շարունակություն գրել:
2. Մի պատմություն պատմիր որևէ ընտանի կենդանու մասին:



### Արեգի Գիրունիկ

Իեքիաթի մեջ կային հրարուս և լավա բաները: Պրանչ մասին գրքերում հեքիաֆրիքիր բաներ կարդացի:

Պարզվում է՝ աշխարհի պարբեր երկրներում հուր ժայռ- գող ավելի ժան վեց հարյուր լեռներ կան, որոնք կոչվում են հրաբուիններ: Հրաբուիր երկար ժամանակ «գնած է մնում»: Միայն լեռան ճեղքերից զորս եկող թեթև ծովն ու գոլորշին են հիշեցնում, որ հրաբուիր կարող է «արթնանալ»: Օ՛, իսկ եթք արթնանում է... շավում է թնդյուն զորզը մթնում է, երեսում են միայն վեր ներփառ զիկացած ժարերը՝ հրաբիսային ոռմթերը: Նաևս վրա է հանում ամենասարսա- փելի պահը. զորս է հորդում հրահեղուկը՝ լավան: Խուզով լրանյակ կիլոմետրեր՝ լավան իր ճանապարհին այրում է ամեն ինչ: Նաևս այն սաղում է և գերինը պայտում ժարե կեղեսով: Հրաբուին ասքիճանաբար հանդարդում է ու կրկին «գոն մինում»:

Անկեղծորեն խոսքովանեմ, որ կարդային նույնիսկ վախենում էի: Միաժամանակ ուրախանում էի որ մեր լեռնուր հայաստանում հրաբուներ չկան:

Բռ ընկեր ինչուիկ



### Դադարի պահ

#### Հումոր

Ֆիզիկայի ուսուցիչը հարցենում է.

- Ի՞նչ կարող եք ասել տաքության և սառնության մասին:
- Մի տղա ձեռք է բարձրացնում և ասում.
- Տաքությունից առարկաներն ընդարձակվում են, իսկ սառնությունից՝ փոքրանում:
- Ճիշտ է,- ասում է ուսուցիչը,- մի օրինակ թեր:
- Ամռանն օրերը երկարում են, իսկ ձմռանը՝ կարճանում, որովհետև ցուրտ է:






Երկանդ Պետրոսյան

## ԴԱՏԱՅԻ ՄԱՂԻԿՆԵՐ

Սար ու ձորերի, լեռնալանջերի,  
Դաշտ ու անտառի քնչու՛շ ծաղիկներ,  
Հաճախ անանոն, հաճախ աննկատ,  
Բայց հավատարիմ դուք կոչումին ձեր,  
Մի և ախչ եք դառնում, մի թել, մի երանգ  
Երկնի աչքի դեմ փոված գորգերին  
Ու գոհ եք բախտից, որ մասնակից եք  
Բնության կյանքին, Աստծու գործերին:

ևախչ  
կորցենել  
ինքնամոռաց

...Հյուավում եք այդպես դուք ինքնամոռաց,  
Բայց չեք կորցենում ինքնությունը ձեր,  
Որպես անձրևի կենարար կաթիլ՝  
Մեղմի գգվանք եք վայելում ու սեր...




Խանելուկներ

Գլխարկը՝ կապույտ,  
Հազուսը՝ կանաչ,  
Մի համեստ աղջիկ,  
Միրուն, կապուտաչ:

Ինքը՝ կարմիր,  
Մրտիկը՝ սև:

Արևի պես է:  
Կլորերես է:  
Մերմը՝ ծննդուկի  
Կողոցի պես է:





## Բառերի գանձատուփ

- Գոյսերի աևուններ գրիր:
- Անձրսի կաթիլն ինչո՞ւ է կենարար համարվում:
- Դաշտային ծաղիկներից բացի որիշ ինչպիսի ծաղիկներ գիտես: Թվարկի՛ր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Բաևաստեղծությունից ելնելով՝ ասա, թե ինչպիսին են դաշտային ծաղիկները:
- Երկներանգ ծաղիկներով ծածկված տարածքը բաևաստեղծն ինչի հետ է համեմատում:
- Ընկերներիդ, քրոջդ կամ եղբորդ նմանեցրո՞ւ ծաղիկների: Ինչո՞ւ այդպիսի ընտրություն կատարեցիր:



## Պատմությունների և հեթիաթների գամբյուղ

- Նկարագրի՛ր դաշտային մի ծաղիկ:
- Դաշտային ծաղկի մասին մի հեթիայթ հորինիր:



## Դադարի պահ

Դասավորելով խառնված վանկերը՝ գրի՛ր յուրաքանչյուր ծաղկի անունը և ըստ գոյսերի որոշի՛ր, թե յուրաքանչյուրնինչ է խորիրդանշում:



ավանդույթ



եցուկրի



եղշակակին



շանշու



հովշոտաշան



զիզեար



զանկազաղիկծա

քերշություն  
հոսսիրություն

մաքրություն  
համեստություն  
պարզություն

շատախոսություն

## Իմաստունի օրատետրից

### Հայրենի քևաշխարհը

Մասշխարհը հայրենին է, նրա բնությունը:  
Խնչուին է մեր երկիրը:

Կայելուան լեռնաշխարհը կարծես լեռնային մի կղզի լինի, որի ամենաբարձր գագաթը զյունապար Արարատն է (քարզրությունը՝ 5165մ):

Մեր երկիրը հարուստ է արգավանդ ռազմերով, երիներանց ծաղիկներով ծածկված մարզագետիններով, ասոնորակ աղբյուրներով, լեռնային արագահոս գետերով, ինք չորերով, մեծ ու փոքր լճերով:

Իր գեղեցկությամբ առանձնանում է Աևանս լիճը, որի զուրը ֆաղրահամ է:

Բյուրակնյա լեռների կարկաչոն աղբյուրներից է սկիզբ առնամ Արսակ գետը: Այն հոսում է Արարայան ռազմով, որը հայոց երկրի բերք ու բարիքի շրեմարանն է:

Կայսարանի լեռներում գարայծ ու այծամ կա, անդատներում եղնիկ ու արզ:

### Իմաստունի և Տատիկի խորհուրդները

Վիոքի կա, հետեւիր գո խոսին, կոսիր, անքարեկիրթ բառերով ու արդահայրություններով մի՛ աղցորդիր այն:

Նախան խոսեցր լավ միամիկ, ծիջը ընսրիր բառերն ու արդահայրությունները, որուեսիր ոչ մեկի չիրավորես:

Պարզ խոսիր, միգետոյ ծիջը չեսկերսիր, որուեսիր վեզ սիսաշխատան:

Խոսեցիս մի՛ զրասպիր, բառերը ծիջը և հարակ արդասանիր, որովհետեւ սա նույնական կարելոր է գեղեցիկ խոսեցու համար:






## Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նոր բառեր սովորեցիր այս ուսումնական տարում: Փորձիր հիշողությամբ գրել դրանք և համեմատիր ընկերներիդ կազմած բառացանկերի հետ:
2. Դասագրքի ո՞ր բաժինը քեզ ամենից շատ դուր եկավ: Ինչո՞ւ: Հիմնավորիր, լսիր նաև ընկերներիդ կարծիքը:
3. Ո՞ր բանաստեղծությունը քեզ ամենից շատ դուր եկավ: Ինչո՞ւ: Եթե անգիր գիտես, արտասանիր:
4. Ո՞ր պատմվածքը կամ հեքիաթը քեզ ամենից շատ դուր եկավ: Ինչո՞ւ: Լսիր նաև ընկերներիդ կարծիքը:
5. Լեզվաբանի դասերից ո՞րն էր ամենահետաքրքրականը: Ինչ սովորեցիր այդ դասից:
6. Ո՞ր ասույթը կամ իմաստախոսությունն ամենից շատ դուր եկավ քեզ: Մեկնաբանիր այն:
7. Ինչ նոր առած-ասացվածքներ սովորեցիր: Դրանցից երկուը մեկնաբանիր:
8. Իմաստունի օրատետրի ո՞ր գրառումն էր քեզ համար ամենահետաքրքրականը: Եթե այդ մասին ուրիշ տեղեկություններ ես հավաքել, պատմիր:
9. Ինչ սովորեցիր Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների մասին:
10. Գրքի հերոսներից (Ինչուիկ, Ինչուիի, Գիտունիկ, Գիտեմնիկ) որին կնմանեցնեիր քեզ: Ինչո՞ւ:
11. Գրքի հերոսների երկխոսություններից ո՞րն էր քեզ համար ամենահետաքրքրականն ու օգտակարը:
12. Իմաստունի և Տատիկի ո՞ր խորհուրդներն են տարվա ընթացքում քեզ օգնել: Իսկ դու ինչ խորհուրդ կտաս քո հասակակիցներին:
13. Փորձիր գևահատել այս ուսումնական տարվա քո աշխատանքը: Ինչ հաջողություններ ես ունեցել: Քո կարծիքով որևէ հարցում թերացել ես: Ինչ պիտի անես այդ թերացումները վերացնելու համար:

14. Տարվա ընթացքում կարդացած ստեղծագործություններից մեկը ներկայացրո՞ւ ընկերներիդ: Ասա՞ նաև, թե ինչ ես պատրաստվում կարդալ ամռանը:
15. Դասագրքում ամենից շատ քեզ ինչը դուր եկավ: Իսկ ինչը դուր չեկավ: Ինչո՞ւ: Մի նամակ գրիր հեղինակներին:
16. Ուշադիր դիտիր նկարները:
- ա) Հիշո՞ւմ ես, թե դրանք ո՞ր ստեղծագործությունների համար են արվել:
- բ) Պատմիր նկարներում պատկերված հեքիաթներից կամ պատմվածքներից մեկը:
- գ) Ո՞ր բանաստեղծությունն անգիր գիտես, արտասանիր:
- դ) Սրանց մեջ առակի նկարազարդում կա՞: Եթե այո, ապա ո՞րն է:



## Իմ տեղեկատուն 1

Բազմիմաստ են կոչվում այն բառերը, որոնք մեկից ավելի իմաստներ են արտահայտում:

Ուղիղ իմաստ է կոչվում բառի հիմնական՝ սովորական իմաստը:

Փոխաբերական իմաստ է կոչվում բառի ոչ սովորական իմաստը:

Հոմանիշ են կոչվում մոտ իմաստ արտահայտող բառերը:

Հականիշ են կոչվում հակառակ իմաստ արտահայտող բառերը:

Բառի բաղադրիչներ են կոչվում բառը կազմող մասերը՝ արմատը և ածանցը:

Արմատ է կոչվում բառի հիմնական իմաստն արտահայտող մասը:

Ածանց է կոչվում այն մասնիկը, որը միանում է բառի սկզբից կամ վերջից և նոր իմաստ է տալիս բառին:

Նախածանցը բառի սկզբից ավելացող ածանցն է:

Վերջածանցը բառի վերջից ավելացող ածանցն է:

Հոդակապը բառի տարբեր մասերն իրար միացնող ա ձայնավորն է:

Պարզ են կոչվում այն բառերը, որոնք կազմված են միայն մեկ արմատից:

մեծ

1. «խոշոր» (մեծ քար),
2. «եշանավոր» անվանի» (մեծ գրող)

ուկի «դեղիև զույնի թանկարժեք մետաղ»

ուկի «ազևիվ, լավ»  
Պետրոսը ուկի մարդ է:

փայլել – շողալ

թեթև – ծակը

համաշխարհային  
համ/աշխարհ/ային

հյուր, հյուրանոց,  
հյուրասեր

դժգույն, գունավոր

անօգուտ

դասարան

զարդատուի

մարդ, օր, արև, ծառ,  
լուս

Բարդ են կոչվում այն բառերը,  
որոնք կազմված են մեկից ավելի  
արմատներից:

Ածանցավոր են կոչվում այն  
բառերը, որոնք կազմված են  
արմատից և մեկ կամ ավելի  
ածանցներից:

Բարդ ածանցավոր են կոչվում  
այն բառերը, որոնք կազմված  
են մեկից ավելի արմատներից և  
առևկազն մեկ ածանցից:

Գոյական են կոչվում առարկա  
(անձ, իր, կենդանի, երևոյթ)  
ցոյց տվող բառերը:

Հասարակ անուն է կոչվում միա-  
տեսակ բոլոր առարկաներին  
տրվող ընդհանուր անունը:

Հատուկ անուն է կոչվում միատե-  
սակ առարկաներից ամեն մեկին  
տրվող առանձին անունը:  
Հատուկ անունները գրվում են  
մեծատառով:

Անձ ցոյց տվող գոյականներ են  
կոչվում ովկ հարցին պատասխա-  
նող գոյականները: Մրանք  
մարդկանց հատուկ և հասարակ  
անուններն են:

Իր ցոյց տվող գոյականներ են  
կոչվում ինչ հարցին պատասխա-  
նող գոյականները:  
Մրանք իրեր, երևոյթներ և կեն-  
դանիներ անվանող գոյականներն  
են:

Ճովափ (ճով+ափ)  
խաղաղաշտ (խաղ+ղաշտ)

անվախ (ան+վախ),  
քոյրիկ (քոյր+իկ),  
ղժզոհություն  
(ղժ+զոհ+ություն)

մայրաքաղաքային  
(մայր + քաղաք+ային)

մարդ, Տիգրան, գիրք,  
ձի, անձրև

քաղաք, բևակիչ, շուն,  
քամի

Երևան, Օշական,  
Վարդան Մամիկոնյան,  
Շեկո

տղա, աղջիկ, բժիշկ,  
վարորդ, Մեսրոպ,  
Այծեմնիկ, Թումանյան

գիրք, անձրև, կատու, ձի

**Գոյականի եզակի թիվը ցոյց է  
տալիս մեկ առարկա:**

**Գոյականի հոգևակի թիվը ցոյց է  
տալիս մեկից ավելի միատեսակ  
առարկաներ:**

**Նախադասության մեջ գոյականը  
տարբեր ձևափոխությունների է  
ենթարկվում:**

**Ածական են կոչվում առարկայի  
հատկանիշ ցոյց տվող բառերը:**

**Ածականի համեմատության  
աստիճանները ցոյց են տալիս  
նոյն հատկանիշի տարբեր չափը  
առարկաների մեջ:**

**Թվական են կոչվում առար-  
կաների թիվ և թվային կարգ  
(հերթականություն) ցոյց տվող  
բառերը:**

**Բայ են կոչվում գործողություն  
ցոյց տվող բառերը:**

**Բայր ցոյց է տալիս խոսողի, խո-  
սակցի կամ մի ուրիշ առարկայի  
կատարած գործողություն և ունի  
առաջին, երկրորդ և երրորդ դեմք:**

**Բայի եզակի թիվը ցոյց է տալիս  
մեկ առարկայի կատարած գոր-  
ծողություն:**

**Բայի հոգևակի թիվը ցոյց է  
տալիս մեկից ավելի առարկաների  
կատարած գործողություն:**

**Վարդ, Երեխա, զառ**

**Վարդեր, Երեխաներ,  
զառներ**

**Քաղաք, քաղաքք,  
քաղաքի, քաղաքին,  
քաղաքից, քաղաքով,  
քաղաքում**

**Կարմիր, քարե**

**Մեծ, ավելի մեծ,  
ամենամեծ**

**Երկու, քսանչորս, հարյուր  
մեկ  
Երկրորդ, չորրորդ, հին-  
գերորդ**

**Երազել, խաղալ**

**Սովորում եմ  
Սովորում ես  
Սովորում է**

**Գրում եմ, գևալու ես,  
Ժպտաց**

**Գրում ենք, գևալու եք,  
Ժպտացին**

Ներկա ժամանակը ցոյց է տալիս  
խոսելու պահին կատարվող  
գործողություն:

Անցյալ ժամանակը ցոյց է տալիս  
խոսելուց առաջ կատարված գոր-  
ծողություն:

Ապառնի ժամանակը ցոյց  
է տալիս խոսելուց հետո  
կատարվելիք գործողություն:

Օժանդակ բայց մասնակցում է բայի  
տարբեր ձևերի կազմությանը: Ունի  
ներկա և անցյալ ժամանակներ,  
եզակի և հոգևակի թիվ, դրականի  
և ժխտականի ձևեր:

Բայի դրական ձևերը ցոյց են  
տալիս, որ գործողությունը կա-  
տարվել է, կատարվում է կամ  
կատարվելու է:

Բայի ժխտական ձևերը ցոյց  
են տալիս, որ գործողությունը չի  
կատարվել, չի կատարվում կամ  
չի կատարվելու:

Բառակազմակցությունը առարկա  
և հատկանիշ կամ գործողություն  
և հատկանիշ ցոյց տվող բառերի  
կապակցություն է:

Դարձանք է կոչվում այն կայուն  
բառակազմակցությունը, որի  
հմատն ուղղակի կապ չունի այդ  
բառակազմակցությունը կազմող  
բառերի հմատների հետ:

սովորում եմ, սովորում  
ենք

սովորել եմ, սովորեցիք,  
սովորում եին, տեսան

սովորելու եմ, կսովորեն,  
պիտի սովորեք

հարգում եմ, տեսնելու ես,  
ժպտում է, կատակում էի,  
հարցրել էիր, կանչելու եր,  
չեմ խոսում, չես զեալու, չի  
հիշում, չեինք կատակում

կանչել եմ, կանչում ես,  
կանչելու են, կանչեցին,  
կանչեն, կկանչեն, պիտի  
կանչեն

չեմ կանչել, չես կանչում,  
չեն կանչելու, չկանչեցին,  
չկանչեն, չպիտի կանչեն,  
մի կանչիք

կապոյտ երկինք  
ուշաղիք կարդալ

գլխի ընկենել «կոահել,  
հասկանալ»,  
աշխարհով մեկ լինել  
«շատ ուրախանալ,  
ցնծալ»

Նախադասությունը ցոյց է տալիս  
առարկան և նրա կատարած  
գործողությունը:

Նախադասության գիշավոր անդամ-  
ներն են ենթական և ստորոգյալը:  
Ենթական ցոյց է տալիս գործո-  
ղություն կատարող առարկան:  
Ստորոգյալը ցոյց է տալիս ենթա-  
կայի կատարած գործողությունը:

Կոչական է կոչվում այն բառը, որ  
ցոյց է տալիս, թե ո՞ւմ կամ ինչին է  
ուղղվում խոսքը:

Պարզ համառոտ նախադասու-  
թյունը կազմված է միայն  
ենթակայից և ստորոգյալից:

Պարզ ընդարձակ նախադասու-  
թյունը կազմված է ենթակայից,  
ստորոգյալից և որևէ այլ բառից  
կամ բառերից:

Պատմողական է կոչվում այն նա-  
խադասությունը, որով ինչոր բան  
են պատմում:

Հարցական է կոչվում այն նախա-  
դասությունը, որով հարցնում են  
մի բանի մասին:

Հրամայական է կոչվում այն նա-  
խադասությունը, որով իրամայում,  
խնդրում կամ հանձնարարում են  
մի բան անել:

Բացականչական է կոչվում այն նա-  
խադասությունը, որով ուրախությունը,  
տիսրությունը, ցավի արտահայտում  
են բացականչությամբ:

Ճնճղուկը ծլվլում է:  
Պապիկը թերթ է  
կարդում:

Ճնճղուկը ծլվլում է:  
Պապիկը կարդում է:

Արտակ, օգևիր ընկերոջի:  
Առվակ, այսօր ինչո՞ւ ես  
այդքան ուրախ:

Թռչունները երգում են:  
Տատիկը ժպտում է:

Թռչուններն ուրախ  
երգում են:  
Իմ տատիկը մեղմ  
ժպտում է:

Իմ ընկերը հաղթել է  
նկարիչների մրցույթում:

Հայաստանը բանի մարզ  
ունի:

Պատմիր քո սիրած  
հեքիաթը:

Ինչ ուրախ էին օրերը  
Սևանի ափին:

## ԻՄ ԱՆԵՂԵԿԱՏՈՒՆ 2

Հանելուկը միքանի տողով նկարագրում է առարկան կամ երևոյթը՝ առանց անունը տալու, և այդ նկարագրությունից մարդիկ գուշակում են առարկայի անունը:

Հանելուկները լինում են ժողովրդական և հեղինակային:

Առածն ու ասացվածքը խոր իմաստ ունեցող խրատական կարծ արտահայտություններ են, որոնք սովորեցնում են լինել ազնիվ, բարի, խելացի, հայրենասեր, ծնողասեր, աշխատասեր և այլն: Առածներն ու ասացվածքները ստեղծել են ժողովուրդը: Օրինակներ՝ Գյուղ կանգնի, գերան կեռուրի: Հավատարիմ ընկերը զին չունի:

Հեքիաթը բարի ու գեղեցիկ ավարտ ունեցող պատմություն է, որի մեջ մարդիկ արտահայտում են իրենց երազանքներն ու ազնիվ ցանկությունները:

Հեքիաթների հերոսներ են լինում մարդիկ, բույսերը, կենդանիները, երևակայական իրեշները, վիշտապները:

Հին ժամանակներում հեքիաթները հորինել են սովորական մարդիկ և բանավոր պատմել իրար: Այդպիսի հեքիաթները կոչվում են ժողովրդական, օրինակ՝ «Ուս ուսի որ տանք, սարեր շուտ կտանք» (հայկական), «Յոթ փայլուն աստղերը» (հնդկական):

Հեքիաթներ են գրել նաև գրողները: Դրանք կոչվում են հեղինակային հեքիաթներ: Հայտնի հեքիաթագիրներ են Հովհ. Թումանյանը, Դ. Աղայանը, Գրիմ եղբայրները, Անդերսենը, Պուշկինը:

Պատմվածքը ոչ ծավալուն ստեղծագործություն է, որի մեջ հեղինակը իրական դեպքեր է պատմում մարդկանց և կենդանիների կյանքից: Օրինակ՝ Վ. Անանյան, «Որսորդի սիրտը»:

Ավանդությունը ոչ իրական պատմություն է, որի միջոցով մարդիկ փորձել են բացատրել, թե ինում ինչպես են առաջացել լեռներն ու ձորերը, ծովերն ու գետերը, ինչո՞ւ են քաղաքներին, գյուղերին, բերդերին ու վանքերին այդ անոնքները տվել և այլն։ Օրինակ՝ Հ. Խաչատրյան, «Ասք լավաշի մասին»։

Վիպերգը ժողովրդի կյանքի, թշնամիների դեմ նրա պայքարի, ազատասիրության և երազանքների մասին պատմող ստեղծագործություն է։ Վիպերգը ստեղծվել է հին ժամանակներում և առանձին հեղինակ չունի. այն ժողովրդական ստեղծագործություն է։ Աշխարհի շատ ժողովուրդներ իրենց վիպերգերն ունեն։

Հայկական վիպերգը կոչվում է «Սասև ծոեր» կամ «Սասունցի Դավիթ»։ Հետագայում գրողները մշակել են վիպերգերը և դրանց հիման վրա ստեղծագործություններ գրել, օրինակ՝ Հովհ. Թումանյան, «Սասունցի Դավիթ»։

Առակը ոչ ծավալու ստեղծագործություն է, որը խրատում ու դաստիարակում է ընթերցողներին։ Նրա մեջ գովաբանվում են ազևությունը, արդարությունը, համեստությունը, և այլն, ծաղրվում են պարծենկոտությունը, ծովությունը, չարությունը և այլն։

Առակի հերոսներ են լինում կենդանիները, բուսերը, բնության երևույթները, որոնք հանդես են գալիս մարդկանց փոխարեն։ Օրինակ՝ Վարդան Այգեկցի, «Առյուծը, գայլը և աղվեսը», Մ. Կորյուն, «Սեխի թուփին ու ընկուզենին»։

Բանաստեղծությունը հատուկ ձևով՝ չափով գրված ստեղծագործություն է, որի մեջ հեղինակն արտահայտում է իր հոգածքն ու մտքերը հայրենի երկրի, մարդկանց ու բնության մասին։ Օրինակ՝ Ս. Կապուտիկյան «Տղայիս»։

# Աւղագրական բառարան

աղջիկ	արհամարհանք	դարպաս
աղտոտել	արձագանք	դդում
աղքատ	արձակել	դեղձ
Ամանոր	արձակուրդ	դեղորայք
ամանորյա	արձան	դրախտ
ամբողջ	արյուն	
ամեն ինչ	արջ	եղբայր
ամպ	արտասանել	եղջերու
այդպես	արտասվել	եղջյուր
այլնս	արցունք	եղևնի
այծյամ	արև	երբեմն
այսօր	արևելք	երբեք
անբիծ	արևմուտք	երգ
անգամ		երդում
անդադար	բազկաթռո	երեսուն
անընդիատ	բախտ	երթ
անձրև	բանալի	երկրորդ
անպատճառ	բարձ	երջանիկ
անվերջ	բարձր	երրորդ
անվրդով	բարձունք	
անցորդ	բարօրություն	զայրույթ
անօգնական	բաց կապույտ	զարդարել
անօգուտ	բերք	զարթնել
աշխարհ	բզզոց	զգուշ
աշխարհագրություն	բոունցք	զգուշություն
աշխույժ	բույն	զեփյուռ
ապառաժ		զմրուխտ
առաջ	գաղտնիք	զուգել
առաջին	գգվել	
առյուծ	գդալ	էակ
առողջ	գեղջուկ	
առջև	գյուղեգյուղ	ըմբոստ
ասացվածք	գոգ	ընդամենք
ավագ	գոօգոռալ	ընդարձակ
ավտոմեքենա	գորշ	ընդդեմ
արգելել	գրվածք	ընդհակառակը
արդար	զցել	ընդհանուր
արդեն	գունավոր	ընդունակ
արդյոք		ընդունել
արթևանալ	դադար	ընթերցել
արծիվ	դաստիարակել	ընթրիք

ընկուզեսի	խորհուրդ	հարձակում
ընձուղտ	խրոխտ	հարյուր
թագավոր	խցկել	հարցուփորձ
թախիծ	խփել	հարևան
թախտ	ծախսել	հափշտակել
թանկանալ	ծածկել	հեծկլտալ
թաքցնել	ծաղկել	հերթ
թեթև	ծաղկեփունջ	հեքիաթ
թերթ	ծարավ	հիանալ
թռչուն	ծիածան	հինավորց
թրջվել	ծոծրակ	հիսուն
թուղթ		հոգի
թունավոր		հոգնել
ժայթքել	կապուտաչյա	հոգս
ժողովուրդ	կարագ	հորթ
իբր	կարգ	հպարտ
իբրև	կարդալ	հրթիռ
ինսուն	կեղծավոր	հրճվանք
ինսունինը	կենդանի	հուժկու
իջնել	կեսզիշեր	հուռթի
իջևանատուն	կեսօր	հևալ
ի վերջո	կեցցեն, կեցցես	հևիին
լվացք	կնճիթ	
լրաւավոր	կողք	ձագ
լուցկի	կորցնել	ձգել
	կրիա	ձյուն
	կրծել	
	կցկտուր	Ճամփորդ
	կուրծք	Ճանապարհ
խաբերա	հագնել	Ճանձ
խաբել	հազուստ	Ճեղք
խախտել	հակառակորդ	Ճկույթ
խարուցկ	հաղթանակ	Ճյուղ
խեղդել	հաղթել	Ճաթեմատիկա
խեղճ	հաղորդել	Ճատյան
խեցգետին	համարձակ	Ճարգարիտ
խիղճ	համարյա	Ճարմարյա
խնդրել	համբույր	մեղք
խշշալ	համբուրել	մեն-մենակ
խոնարհ	հայացք	մեջ
խորդութորդ	հանկարծակի	միաևգամից
խորհել	հաջորդ	միմյանց
խորհրդավոր	հավաքել	մինչև

միջև	որպեսզի	տարեցտարի
միրգ	որջ	տարրական
միննույն	որսորդ	տարօրինակ
մխրճել	որևէ	տիեզերք
մղկտալ		տնօրեն
մյուս	չէ	
մնացորդ	չորրորդ	բռպե
մրջյուն		
մրցել	պաշտպանել	ութսուն
մուգ կարմիր	պառկել	ուղեկցել
յոթանասուն	պատշգամբ	ուղիղ
յուրաքանչյուր	պարապմունք	ուղղակի
	պղպեղ	ուղղել
նախընտրել	պողպատ	ուղղություն
նախշուն		ուղևոր
նախքան	ջարդել	ուս ուսի
նախօրոք		ուրբաթ
նեղվածք	սաղարթ	
նրբաթերթ	սանդուղք	փախչել
նրբանցք	սարյակ	փարթամ
նուրբ	սեղմել	փթթել
շաբաթ	սերկեսիլ	փոխադարձ
շագանակ	ստեղծել	փոխհատուցել
շագանակագույն	սուրբ	փորձ
շոթա	սփոփել	փրփուր
շյուղ	սևանալ	
շնորհակալություն		քաղցած
շնորհք	վազր	քաղցր
շոգ	վազք	քառասուն
շոփքբոլորը	վաթսուն	
ոգի	վախենու	օգևական
ողբալի	վախճան	օգևել
ողկույզ	վայրեցք	օգուտ
ողջ	վարդ	օդ
ողջույն	վերադարձ	օդանավ
ոչխար	վերելք	օվկիանոս
ոչ մի	վերջ	օրեցօր
ոչ ոք	վերջիվերջո	օրորել
ոռոգել	վերք	օրորոց
որդի	վրձին	օրինել
որովհետև		օրիներգ
	տախտակ	օրնիբուն
	տասնմեկ	օր օրի
	տարերք	

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>Եեզկաբանի դասը</i>
<b>1 ՈՒՄ ԵՎԵՐԵՍ ԻՄ ՍԵՐՏԸ</b>	3
Հ. Եղանակ. ՅՈԹ ԱՌՅՈՒԹՅՈՒՆ,	3
Առև. ՌԱՅԵՐԸ ու համապատակ	4
2. Առաջարկ ՈՒՄ ԵՎԵՐԵՍԻ ԻՄ ՓՈՐՔԻ ՍԵՐՏԸ	10
Հ. Եղանակ. ՀԵԿՑԵՐԸ	15
3. Առաջարկ ՈՒՄ ԵՎԵՐԵԸ	18
Հ. Եղանակ. ՄՊՐՅԱԿՄԱՆ	20
4. Առաջարկ ՈՒՄ ԵՎԵՐԵԸ	23
5. Առաջարկ ՈՒՄ ԵՎԵՐԵԸ ԹԻԿՎԱԿՈՐԾ ՈԽ ՀՈՂԱԳՈՐԾՅՐԸ	25
Հ. Եղանակ. ՊԻԿՄԵՐ	28
ԱՆԵՐԸ	31
Հ. Եղանակ. ԵՎԱԼԻ ԽՆՄՐԱՄԵՐԸ	34
Հ. Եղանակ. ՄԱՅՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ	36
<b>2 ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԵՐ</b>	39
Հ. Եղանակ. ՀԱՅՅԱՍՏԱՆ	39
Հ. Եղանակ. ՄԱԿԱՐԵՎՅԻ ԴԱԿԱՐՅՈՒ 1	42
ԱԱՍՈՒՆՅԻ ԴԱԿԱՐՅՈՒ 2	46
ՄԱԿԵՐԱԿՈՒՅՐՈՒ	49
Հ. Եղանակ. ԽՈՀՔՎԱՐ	53
Հ. Եղանակ. ՕԾՈՎՈՒՅՅԱԿՈ ՀՅՈՒՐԵՐԱՎԱԼՈՅՈՅՅՈՒՆ	55
1	55
2	58
Հ. Եղանակ. ԱՐԱԳՎԱՅԻ ԱՎՐՅՈՒՄՅՈՒՅԸ	61
Հ. Եղանակ. ՓՈՐՔԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ 1	64
2	67
Հ. Եղանակ. ԱՅՆ ԻՇՈՉ ԻՆՔ ԵՐ ԱԿՐԵ ՎԵՐ	70
Հ. Եղանակ. ԱՌՋԱՅՅԵՐՆ ԵՐԳԵՐ 1	72
2	75
<b>3 ՄԵՐ ԶԱՂՅՐԱԲԱՌ ՀԱՅՈՅ ԼԵՇՈՒՆ</b>	79
ԲԱՔԵԼՈՒՄ ԱՅՏԱՐԱԿԸ բայ նո ուղարկություն	79
Հ. Եղանակ. ՄԱՅՅՐԵՆԻ ԼԵՇՈՒՆ	82
Հ. Եղանակ. ՄԵՄՐՈՊՅԱՆ ՏԱՐԵՐ	85
Հ. Եղանակ. ՀԱՅՈՍՏՈՒԹՅՈՒՆ	89
ՆԵՐԱՌԵՐԻ ԼԵՇՈՒՆ	91
ԿԵՆԴՐԱՆԵՐԻ ԼԵՇՈՒՆ	93
Հ. Եղանակ. ԲՐԵՋԻ ՇՊՐՈՅՅ	97
ԹԱՓԱՌՈՒՅՆԻ ԵՐԱԹԵԽՏՈՒՐԸ 1	102
2	106
Հ. Եղանակ. ԱՊՅՈՒԹԸ, ԳԱՅՈՒ, ԵՎ, ԱՐԱՌՈՒ	111
<b>4. Եեզկաբանի դասը</b>	111
Բառերի կազմությունը	(9)
Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ	(17)
Գոյական. անձ և իր ցուց տվող գոյականեր (35)	(35)
Գոյական. հատուկ և հասարակ (41)	(41)
Գոյականի թիվը (57)	(57)
Գոյականի ծևային փոփոխությունները (67)	(67)
Ածական. համեմատության աստիճանները (75)	(75)
Նախադասություն. Նախադասության անդամներ (88)	(88)
Կոչական (101)	(101)
Բառակապակցություն և դարձվածք (106)	(106)
Դարձվածք (111)	(111)
Թվական (115)	(115)
Բայ. բայի դեմքը և թիվը (122)	(122)
Բայ. բայի ժամանակը (125)	(125)
Օժանդակ բայ. դրական և ժիտական ձևեր (127)	(127)
Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման և պատակի (130)	(130)
Պատմողական և հարցական նախադասություններ (136)	(136)
Հրամայական նախադասություն (159)	(159)
Բացականչական նախադասություն (171)	(171)

<b>4 ՄԱՐԴՈՒ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԸ</b>	.....	<b>113</b>	<i>Բնակութիւնի օրատեսորից</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 1	.....	<b>113</b>	<i>Հայաստանի Հանրապետության դրույթ (38)</i>
2	.....	<b>116</b>	<i>Հայաստանի Հանրապետության գիեանշանը (42)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 2	.....	<b>119</b>	<i>Սամսան ծոեր (44)</i>
<b>ԸՆԿԱՆ ԱՌԱՋ-ՄԱՐՏԻ ԵԿԱԿՅ ԱՆՈՒՆՆ ՈՒ ՏԱԿՆԵՐ. ԾԱՐԾԵՐ ԵՎ ԱՆԱԿԱՐ</b>	.....	<b>121</b>	<i>Խաչքար (55)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>123</b>	<i>Մածոն (60)</i>
Հայոց Ածոն Խոնջոր 1 ԱՆ ԸՆԿԱՆ ԱՌԱՋ-ՄԱՐՏԻ ԵԿԱԿՅ ԱՆՈՒՆՆ ՈՒ ՏԱԿՆԵՐ. ԾԱՐԾԵՐ ԵՎ ԱՆԱԿԱՐ	.....	<b>126</b>	<i>Արագած (63)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>128</b>	<i>Հայաստանի Հանրապետության օրիներգը (78)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>131</b>	<i>Մայրենի լեզու (84)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>133</b>	<i>Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերը (87)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>137</b>	<i>Արգելոց (138)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>139</b>	<i>Ծիծաղի և լազի մասին (153)</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>142</b>	<i>Հայրենի բնաշխարից (177)</i>
<b>5 ՄԱՆՈՒԿԵՐԻ ՄԱԼՈՐԱԿԸ</b>	.....	<b>144</b>	 <i>Բնակութիւն և Տարիկի խորհուրդները</i>
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	.....	<b>144</b>	սեր և հոգատարություն մերձավորի և ուրիշների նկատմամբ (14)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	1	<b>146</b>	աշխատասիրություն (30)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	2	<b>150</b>	հոգատար վերաբերմունք շրջակա աշխարհի,
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	1	<b>154</b>	մարդկանց և կենդա- նիների նկատմամբ (38)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	2	<b>155</b>	իյուրընկալություն (60)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	1	<b>160</b>	սեր մայրենի լեզվի նկատմամբ (88)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	2	<b>163</b>	ընթերցասիրություն (96)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	1	<b>165</b>	ապավինել սեփական ուժերին (130)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	2	<b>168</b>	մարդու լավ նկարագիր, բարոյական բարձր արժեքներ (143)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	1	<b>172</b>	համառություն, ջանասիրություն (163)
Հայոց առաջնահանձնութեան 2000 Խոնջոր 3	2	<b>175</b>	խոհեմություն, համեստություն (171)
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ	.....	<b>178</b>	ճիշտ և բարեկիրթ խոսք (177)
Իմ տեղեկատուն	1	<b>180</b>	
Իմ տեղեկատուն	2	<b>185</b>	
Ուղղագրական բառարան	.....	<b>187</b>	

**Դավիթ Սևանի Գյուրջինյան  
Նարինե Հակոբի Հերերյան**

**ՄԱՅՐԵՆԻ**

**Հանրակրթական դպրոցի  
4-րդ դասարանի դասագիրք**

**Հաստատված է ՀՀ Կրթության և գիտության  
նախարարության կողմից**

**Խմբագիր՝**

**Նկարիչ՝**

**Համակարգչային ձևավորումը՝**

**Դ. Գյուրջինյան**

**Ս. Այվազյան**

**Ա. Օհանջանյանի**

**Չափսը՝ 70x100 1/16: Բուղթը՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական 12 մամոլ:  
Տպաքանակը՝ 1000:**

**Տպագրված է Եղիշ Պրինտ ՍՊԸ տպարանում:**

**ԵՂԻՇ ՊՐԻՆՏ**  
Երևան, Թումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[Info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Tumanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[Info@editprint.am](mailto:info@editprint.am)